Լ.Հ. Բաղանյանի խմբագրությամբ և ղեկավարությամբ

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 8. Արտադրական կազմակերպության ֆինանսների էությունը և կազմակերպման առանձնահատկությունները

8.1 Ձեռնարկության ֆինանսական հարաբերությունները, ֆինանսների կազմակերպման սկզբունքները և ֆունկցիաները

8.2 Ձեռնարկության դրամական ֆոնդերը և ֆինանսական ռեսուրսները

8.3 Ձեռնարկության պասիվների կառուցվածքը և սեփական ակտիվների շահութաբերությունը: Ֆինանսական լծակ

Գլուխ 9. Ձեռնարկության դրամական ծախսերը

9.1 Ձեռնարկության դրամական ծախսերի դասակարգումը

9.2 Ծախսումներ արտադրանքի արտադրության և իրացման վրա

9.3 Գործառնական լծակ, շահութաբերության շեմ, ֆինանսական կայունության պաշար

Գլուխ 10. Ձեռնարկության արտադրանքի իրացումից հասույթը և շահույթը

10.1 Հասկացություն գործառնական հասույթի մասին

10.2 Շահույթի տնտեսական բովանդակությունը, պլանավորումը և բաշխումը

Գլուխ 11. Ձեռնարկության շրջանառու կապիտալը

11.1 Շրջանառու կապիտալի տնտեսական բովանդակությունը

11.2 Շրջանառու կապիտալի կազմն ու կառուցվածքը

11.3 Շրջանառու կապիտիալի կազմակերպումը և նորմավորումը

11.4 Շրջանառու կապիտալի ֆինանսական կառավարումը

Գլուխ 12. Ձեռնարկության հիմնական կապիտալը

12.1 Ինվեստիցիան որպես հիմնական կապիտալի ձևավորման գործիք

12.2 Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրներն ու մեթոդները

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպությունը /ձեռնարկությունը/ արտադրության ոլորտում ինքնուրույն տնտեսական սուբյեկտ է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, արտադրում է ապրանքներ, մատուցում ծառայություններ, կատարում աշխատանքներ, կարող է զբաղվել տնտեսական գործունեության տարբեր տեսակներով, որոնց նպատակն է շահույթի ստացումը և կապիտալի աճը /ավելացումը/: Նա կարող է իրականացնել գործունեության որևէ տեսակ կամ միաժամանակ բոլոր տեսակները:

Ձեռնարկությունների և կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ձևավորվում են տնտեսական կապեր իրենց գործընկերների /կոնտրագենտների/ հետ՝ մատակարարների ու գնորդների, համատեղ գործունեության գործընկերների, միավորումների, ֆինանսավարկային համակարգի, որի արդյունքում առաջանում են ֆինանսական հարաբերություններ: Այդ հարաբերությունները կապված են արտադրանքի արտադրության ու իրացման կազմակերպման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ֆինանսական ռեսուրսների ձևավորման, ինվեստիցիոն գործունեության իրականացման հետ: Ֆինանսական հարաբերությունների նյութական հիմքը փողն է, իսկ առաջացման անհրաժեշտ պայմանը՝ դրամական միջոցների իրական շարժը, որի արդյունքում ձևավորվում և օգտագործվում են դրամական միջոցների կենտրոնացված ու ապակենտրոնացված ֆոնդերը:

Ձեռնարկության ֆինանսները ֆինանսական կամ դրամական հարաբերությունների այն համախումբն են, որոնք առաջանում են հիմնական ու շրջանառու կապիտալի, ձեռնարկության դրամական ֆոնդերի ձևավորման և օգտագործման ընթացքում:

Ձեռնարկությունների ֆինանսական հարաբերությունները ըստ տնտեսական բովանդակության կարող են ձևավորվել հետևյալ ուղղություններով՝

1. Հիմնադիրների միջև ձեռնարկությունը ստեղծելու պահին, կապված կանոնադրական /բաժնետիրական/ կապիտալի ձևավորման հետ, ինչը նախասկզբնական աղբյուր է արտադրական ֆոնդերի կազմավորման և ոչ նյութական ակտիվների համար.
2. Ձեռնարկությունների և կազմակերպությունների միջև, կապված արտադրանքի արտադրության ու իրացման և նոր ստեղծվող արժեքի ձևավորման հետ: Դրանց վերաբերում են հումքի, նյութերի, ապրանքների մատակարարների ու գնորդների միջև ֆինանսական հարաբերությունները.
3. Ձեռնարկությունների ու նրանց ստորաբաժանումների՝ մասնաճյուղ, բաժին, արտադրամաս, միջև ծախսերի ֆինանսավորման, շահույթի և մյուս աղբյուրների վերաբաշխման հարաբերությունները.

4. Ձեռնարկությունների և աշխատողների միջև եկամուտները բաշխելու և օգտագործելու, բաժնետոմսերի թողարկման ու բաշխման, տոկոսների, շահաբաժինների վճարման, հարկապահման և այլ դրամական հարաբերությունների հետ կապված.

5. Ձեռնարկությունների և ֆինանսական համակարգի միջև, հարկերի վճարման տարբեր բյուջետային մակարդակների պարտադիր այլ մուծումների, արտաբյուջետային ֆոնդերին հատկացումների, տույժ ու տուգանքների հետ կապված.

6. Ձեռնարկությունների և ապահովագրական ընկերությունների միջև ապահովագրման, վճարներ կատարելու և փոխհատուցում ստանալու հետ կապված.

7. Այլ բնույթի դրամական հարաբերություններ /վերադաս, ձեռնարկության ստորաբաժանումներ, ներդրումային կազմակերպություններ և այլն/:

Թվարկված խմբերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և դրամական ոլորտը: Սակայն դրանք բոլորը կրում են երկկողմանի բնույթ և նյութական հիմքը դրամական միջոցների շարժն է, որով ուղեկցվում է սեփական և դրա կազմում կանոնադրական կապիտալի ձևավորումը, սկսվում և ավարտվում է ձեռնարկության միջոցների շրջապտույտը, դրամական ֆոնդերի ու ռեզերվների ստեղծումը և ծախսումը:

Գործնականում ֆինանսական հարաբերությունների թվարկված տեսակները, ընդհանրությունների և բովանդակության հիմքի վրա կարելի է արտահայտել խոշորացված 4 խմբերով՝

1. Այլ ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ.
2. Ձեռնարկության ներսում.
3. Վերադաս կազմակերպությունների հետ /միավորում, գերատեսչություն, ֆինանսա-արդյունաբերական խումբ, հոլդինգ.
4. Ֆինանսավարկային համակարգի հետ /բյուջե, արտաբյուջետային ֆոնդ, բանկ, ապահովագրություն, բիրժա, տարբեր ֆոնդեր/:

Ֆինանսների բովանդակության մասին առավել ամբողջական պատկերացում է ստացվում նրա ֆունկցիաների միջոցով:

Առևտրային կազմակերպությունների ֆինանսների ֆունկցիաները նույնն են, ինչ համապետականինը կամ ֆինանսները ընդհանրապես: Տնտեսագետների մեծամասնությունը ընդունում է երկու ֆունկցիա՝ բաշխման և վերահսկողության:

Բաշխման ֆունկցիայի միջոցով տեղի է ունենում նախասկզբնական կապիտալի ձևավորում, արտադրության մեջ դրա ավանսավորում, վերարտադրություն, եկամուտների և ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմնական համամասնությունների ստեղծում, որով ապահովվում է առանձին ապրանքարտադրողների տնտեսաարող սուբյեկտների և պետության շահերի օպտիմալ զուգակցումը:

Ֆինանսների բաշխման ֆունկցիայի հետ է կապված առևտրային կազմակերպությունների ստացած եկամուտների բաշխման ու վերաբաշխման միջոցով դրամական ֆոնդերի ձևավորումը: Դրանց են վերաբերում կանոնադրական կապիտալը կամ ֆոնդը, լրացուցիչ կապիտալը, պահուստային ֆոնդը, կուտակման, սպառման, արժույթային և այլ ֆոնդերը:

Բաշխման հարաբերությունները շոշափում են ինչպես հասարակության շահերը ամբողջությամբ, այնպես էլ առանձին տնտեսավարող սուբյեկտների, նրանց աշխատողների, բաժնետերերի, վարկային ու ապահովագրական ինստի-

տուտների շահերը: Ուստի առաջնահերթ խնդիր է դրանց օպտիմալ կազմակերպումը, ինչին նպաստում է ֆինանսների վերահսկողության ֆունկցիան:

Ֆինանսների վերահսկողության ֆունկցիայի օբյեկտիվ հիմքը արտադրության ու իրացման, ծառայությունների մատուցման ծախսերի, դրամական եկամուտների ու ֆոնդերի արժեքային հաշվառումն է: Այս ֆունկցիայի կատարումը կապված է տարբեր խթանների և սանկցիաների, ինչպես նաև ցուցանիշների կիրառման հետ: Երբ ձեռնարկությունը ժամանակին լուծում է բյուջեի, բանկերի, մատակարարների հանդեպ պարտավորությունները, դրանով իսկ բարելավում է իր վերջնական արդյունքը, բարձրացնում արտադրության ու միջոցների օգտագործման արդյունավետությունը: Հակառակ դեպքում չի կարող խուսափել տույժ-տուգանքներից, ֆինանսական վիճակի լարվածությունից: Ֆինանսական վերահսկողության ձևերից մեկը տարբեր ֆինանսական ցուցանիշների օգտագործումն է, որոնցից գլխավորը ձեռնարկությունում միջոցների առկայության կայունությունն է: Հենց դրանում է արտահայտվում վերահսկողության և բաշխման ֆունկցիաների փոխկապվածությունը, դա էլ ըստ էության դրամով վերահսկողություն է: Մյուս ֆինանսական ցուցանիշներին վերաբերում են՝ մատակարարներին, բանկին, բյուջեին, աշխատողներին պարտքը, շրջանառու կապիտալով ապահովվածությունը, շահույթը, վնասը, իրացվելիությունը, վճարունակությունը և այլն :

Ֆինանսների ֆունկցիաները ցանկացած-կազմակերպություն-ձեռնարկությունում պետք է ծառայեն ֆինանսական ռազմավարության երեք կարևորագույն խնդիրների կատարմանը՝

1. ձեռնարկությանը ապասիովել անհրաժեշտ դրամական միջոցներով և դրա հիման վրա կայունություն և իրացվելիություն.
2. շահութաբերության ապահովում և առավելագույն շահույթի ստացում.
3. իր աշխատողների ու սեփականատերերի նյութական և սոցիալական պահանջների բավարարում:

Արտադրության ոլորտի առևտրային ձեռնարկությունների ֆինանսական հարաբերությունները կառուցվում են որոշակի սկզբունքների պահպանմամբ: Այդ սկզբունքները առավելապես կապված են հիմնական տնտեսական գործունեության հետ և կիրառվում են ֆինանսական հետևանքների բարելավման նպատակով: Դրանք գլխավորապես վերաբերում են տնտեսական ինքնուրույնությանը, ինքնաֆինանսավորմանը, նյութական շահագրգռվածությանը, նյութական պատասխանատվությանը:

Տնտեսական ինքնուրույնության սկզբունքը գործնականում չի կարող իրացվել առանց ֆինանսական ինքնուրույնության և անկախության: Գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս, որպեսզի տնտեսավարող սուբյեկտները ինքնուրույն որոշեն տնտեսական գործունեության /բիզնեսի/ ոլորտը, ֆինանսավորման աղբյուրները, շահույթ կորզելու նպատակով դրամական միջոցների ներդրման ուղղությունները: Շուկան թելադրում և խթանում է առևտրային կազմակերպություններին կապիտալը ներդնելու նոր ոլորտների որոնումը, պահանջարկին համապատասխան ճկուն արտադրությունների կազմակերպումը: Լրացուցիչ շահույթ ստանալու նպատակով առևտրային կազմակերպությունները կարող են կատարել կարճաժամկետ ու երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ այլ ձեռնարկությունների, պետական արժեթղթեր ձեռք բերելու, այլ տնտեսա-

վարող սուբյեկտների կանոնադրական կապիտալի ձևավորմանը մասնակցելու միջոցով:

Տեսականորեն և նաև գործնականում լրիվ տնտեսական ինքնուրույնություն լինել չի կարող, քանի որ պետությունը մասնակցում է դրանց գործունեության առանձին բնագավառների կարգավորմանը: Օրենսդրորեն սահմանվում են բյուջեի հետ փոխհարաբերությունները, բոլոր տիպի ու սեփականության ձևի առևտրային կազմակերպությունները վճարում են անհրաժեշտ հարկերը, մասնակցում արտաբյուջետային ֆոնդերի ձևավորմանը: Պետությունը ընդհանուր գծերով որոշում է նաև ամորտիզացիոն քաղաքականությունը:

Ինքնաֆինանսավորման սկզբունքի իրացումը ձեռնարկատիրական գործունեության հիմնական պայմաններից մեկն է: Դրանով է ապահովվում տնտեսավարող սուբյեկտների մրցունակությունը: Դա, նախ և առաջ, նշանակում է արտադրության ու իրացման, ծառայությունների մատուցման վրա կատարված ծախսերի լիակատար փոխհատուցում, արտադրության զարգացման համար ներդրում իրականացնել սեփական միջոցների հաշվին և միայն անհրաժեշտությունից ելնելով օգտվել բանկային ու առևտրային վարկերից:

Նյութական շահագրգռվածության սկզբունքը որպես օբյեկտիվ անհրաժեշտություն ապահովվում է ձեռնարկատիրական գործունեության հիմնական նպատակով՝ շահույթի ստացման ձգտումով: Ձեռնարկատիրական գործունեության արդյունքների նկատմամբ շահագրգռվածությունը դրսևորվում է ոչ միայն մասնակիցների, այլև պետության կողմից: Առանձին աշխատողների մակարդակով այդ շահագրգռվածության իրացումը կարող է ապահովվել աշխատանքի բարձր վարձատրությամբ: Ձեռնարկության համար այդ սկզբունքը կարող է իրացվել պետական օպտիմալ հարկային քաղաքականության, ամորտիզացիոն նպատակահարմար նորմատիվների և զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծելու միջոցով: Կազմակերպությունը ինքը դրան կարող է նպաստել նոր ստեղծված արժեքի սպառման ու կուտակման ֆոնդերի միջև բաշխելու գործում հիմնավորված համամասնություն պահպանելու միջոցով: Պետության շահերին համապատասխանում է արտադրության ընդլայնումը, շահութաբերության բարձրացումը և հարկային կարգապահության պահպանումը:

Նյութական պատասխանատվության սկզբունքը նշանակում է պատասխանատվության որոշակի համակարգի առկայություն ֆինանսա-տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում, կոնկրետ մեթոդներով ու ազդեցության միջոցներով: Պայմանագրային պարտավորությունները չկատարող, հաշվարկային կարգապահություն չպահպանող, վարկերը ժամանակին չմարող, հարկային կարգապահությանը չենթարկվող ձեռնարկությունները պետք է կրեն ֆինանսական պատասխանատվություն, վճարեն տույժ, տուգանք, ենթարկվեն հարկադրանքի, իվերջո ընկնեն սնանկացման գործընթացի մեջ: Ձեռնարկության առանձին աշխատողների հանդեպ կիրառվում է տուգանքի համակարգը՝ խոտան թույլ տալու և այլ խախտումների համար պարգևից զրկում, աշխատանքից ազատում և այլն: Այս սկզբունքը ներկա իրադրությունում իրացվում է առավել ամբողջությամբ:

Զարգացած շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկությունների ֆինանսների կազմակերպումը կարող է կառուցվել երեք հիմնարար սկզբունքների վրա: Դրանք են՝ պլանայնությունը, առևտրական հաշվարկի մեթոդով տնտեսավարումը և ֆինանսական ու նյութական պահուստների ստեղծումը:

Պլանայնությունը, որպես հիմնարար սկզբունք տարածվում է ամբողջ գործունեության վրա՝ սկսած հումքի, նյութերի, ապրանքների, ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման շուկայից, արտադրության ու իրացման գործոնները կանխատեսելուց մինչև թողարկվող արտադրանքի վերջնական սպառողների բացահայտումը: Ի վերջո, բիզնեսի մեջ հաջողության են հասնում և մրցակցությանը դիմանում են ընթացիկ և հեռանկարային, գիտականորեն հիմնավորված բիզնես ծրագիր ունեցող կազմակերպությունները, որոնցում ֆինանսական հոսքերի մասին կա իրական պատկերացում և դրանք բաշխվում ու ծախսվում են բիզնեսի շահերից ելնելով:

Արտադրական կազմակերպության ֆինանսական պլանը պետք է արտացոլի ոչ միայն դրամական հոսքերի ամբողջական ու ժամանակագրական ծավալը, այլև արտահայտի դրանում «եկամուտ» հանդիսացող մուտքերի մեծությունը, որոնց զգալի մասը հանդես է գալիս որպես դրամական կուտակում, աղբյուր դառնալով բյուջեի եկամուտների ու շահույթի ձևավորման: Միանշանակ է, որ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացածության ներկա աստիճանով, փոխհարաբերությունների կարգավորման օրենսդրական անկատար դաշտի և ֆինանսական ցածր կարգապահության պայմաններում ֆինանսական պլանավորումը պետք է կառուցվի «եկամուտների ու ծախսերի հաշվեկշռի» տեսքով, որի ելակետը ֆինանսական ռեսուրսներն են ու դրանց օգտագործման պլանային ուղղությունները: Այն ունի 3 բաժին՝ եկամուտներ և մուտքեր, ծախսեր ու հատկացումներ,փոխհարաբերություն բյուջեի հետ:

Առևտրական հաշվարկը շուկայական տնտեսություններին հատուկ տնտեսավարման մեթոդ է և տնտհաշվարկից արմատապես տարբեր: Այս մեթոդի կիրառման հիմնական պայմանը ազատ մրցակցության առկայությունն է: Գործունեության ոլորտը, արտադրանքի բնույթը, քանակական ու որակական ցուցանիշները որոշում է ձեռնարկությունը, պետության միջամտությունը նվազագույն է: Ինչ արտադրել, ում համար և որքան խնդիրը լուծվում է շուկայական գործոնների թելադրանքով՝ միայն թե ապահովի գործունեության ծախսերի փոխհատուցում և միջին շահութաբերությանը համապատասխան շահույթի ստացում: Առևտրական հաշվարկի գործողության մեխանիզմը նախատեսում է մի շարք արմատական պահանջների ապահովում, որոնցից կարևորագույնները հետևյալն են՝

- Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպիչները ներդրողների հետ համատեղ ստեղծում են որոշակի մեծության հիմնադիր կապիտալ, որն ավանսավորվելով գործունեության մեջ ստանում է ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվների տեսք, ձևավորում է ձեռնարկության արտադրանք թողարկելու և ծառայություն մատուցելու արտադրական կարողությունը: Հիմնադիր կապիտալը տվյալ օղակի շրջանակներում մշտապես շրջանառվում է, այլ ոչ թե ծախսվում և ամեն անգամ շրջապտույտն ավարտելուց հետո նույն ծավալով, իսկ շահութաբեր գործունեության դեպքում ավելացված, վերադառնում է ելման վիճակին: Այդ կապիտալի ապահովության համար ձեռնարկության տնօրինությունը պատասխանատվություն է կրում կոնկրետ մարմնի առջև և, միաժամանակ, ֆինանսական արդյունքներով պետք է ապահովի դրա սիստեմատիկ աճը:
- Փոխանակային բոլոր հարաբերությունները կազմակերպվում են վճարովիության սկզբունքով, դրանք ամրագրվում են կնքվող տնտեսական

պայմանագրերով և կատարման գործընթացը ուղեկցվում է ֆինանսական սանկցիաների կիրառմամբ:

- Իրացման համար նախատեսված արտադրանքի և մատուցվելիք ծառայությունների և աշխատանքների բոլոր տեսակների համար սահմանվում և կիրառվում է գների ու սակագների այնպիսի մակարդակ, որը արտադրության ու իրացման ընդունված պարամետրերը ապահովելու պայմաններում ոչ միայն փոխհատուցի գործառնական ծախսերը ամբողջությամբ /փոփոխուն և հաստատուն/, այլև առաջացնի տվյալ իրադրության միջին շահութաբերությանը համապատասխան շահույթ:
- Ձեռնարկության գործունեության ընդլայնումը, տեխնիկական վերազինումը և վերակառուցումը իրականացվում է ֆինանսավորման սեփական աղբյուրների հաշվին, առաջին հերթին հենվելով շահույթի կուտակվող մասի և ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի վրա: Վարկը և փոխառու այլ աղբյուրները ներգրավվում են հատկապես սեփական միջոցների ժամանակավոր պակասը լրացնելու նպատակով:
- Արտադրության մասնակիցներն ու կազմակերպիչները իրենց պարտականությունները կատարելու համար նյութապես խրախուսվում են: Խրախուսման չափերը կախվածության մեջ են դրվում կարևորագույն ցուցանիշների գծով ձեռք բերված մակարդակներից և հատկապես զուտ շահույթի և նրա սպառմանն ուղղված մասի մեծությունից. խանդավառությունը էական դեր չի խաղում:
- Ձեռնարկության գործունեության արդյունքների և վարկանիշի գնահատումը. վարկավորման պայմանները և անկանխիկ հաշվարկների կատարման ձևի ընտրությունը կապվում է ֆինանսական գնահատող ցուցանիշների կատարման և շրջանառու կապիտալով ապահովվածության հետ:

Արտադրական ձեռնարկությունների ֆինանսական ու նյութական ռեզերվներով ապահովվածությունը թելադրվում է ձեռնարկատիրական գործունեության պայմաններով, դրանցում կատարված ներդրումների ու ծախսերի ժամանակին ու լրիվ կամ մասնակի չփոխհատուցման որոշակի ռիսկի առկայությամբ:

Շուկայական տնտեսության պայմաններում ռիսկի հետևանքները ընկնում են կամավոր և ինքնուրույն տարաբնույթ գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վրա: Գործնականում ֆինանսական ներդրումների ոչ լրիվ վերադարձման կամ նախատեսվածից պակաս շահույթ ստանալու հնարավոր ռիսկայնություն գոյություն ունի բոլոր բնագավառներում, որի հաղթահարման հետևանքները մեղմելու, գործունեության վրա բացասական ազդեցությունը թուլացնելու ուղիներից մեկը ֆինանսական և նյութական պահուստներ ստեղծելն է, որոնք կոչված են նաև տնտեսավարման կրիտիկական պահերին ֆինանսական դրությունը ամրացնելուն:

Ֆինանսական պահուստներ կարող են ստեղծվել բոլոր կազմակերպահրավական տիպի ու սեփականության ձևի ձեռնարկություններում զուտ շահույթից, հաշվի առնելով առկա հնարավորություններն ու պայմանները, իսկ նյութական պահուստները գլխավորապես վերաբերում են արտադրական պաշարներին /հումք,նյութեր,վառելիք և այլն/ ու ձևավորվում են գործունեության ընթացիկ պահանջների անխափան բավարարման պահեստային և այլ մնացորդներին գերազանցող ծավալով:

Ձեռնարկության ֆինանսները կառավարվում են ֆինանսական մեխանիզմի միջոցով, ինչը տնտեսական մեխանիզմի մաս է և իրենից ներկայացնում է առավելագույն շահույթ ստանալու նպատակ հետապնդող ֆինանսների կառավարման ձև ու մեթոդ:

Ֆինանսական կառավարման համակարգը իր մեջ ընդգրկում է ֆինանսական մեթոդները, գործիքները, իրավական, ինֆորմացիոն-մեթոդոլոգիական ապահովածությունը:

Ֆինանսական մեթոդներ են ֆինանսական պլանավորումը, ֆինանսական հաշվառումը, ֆինանսական վերլուծությունը, ֆինանսական կարգավորումն ու վերահսկողությունը, դրանց օգնությամբ է հնարավոր դառնում ֆինանսական հարաբերությունների ազդեցությունը տնտեսական գործընթացների վրա և ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատումը:

Ֆինանսական գործիքներ հասկացողության մեջ մտնում է ցանկացած կոնտրակտ կամ փաստաթուղթ, որը կողմերից մեկի համար պարտավորության վկայագիր է և վաճառելու դեպքում վաճառողը ստանում է ֆինանսավորում: Ֆինանսական գործիքները ընդգրկում են ինչպես առաջնային գործիքները՝ դեբիտորական ու կրեդիտորական պարտք, բաժնետոմս, պարտատոմս,մուրհակ, այնպես էլ ածանցյալ գործիքները՝ ֆինանսական օպցիոն, ֆյուչերս, ֆորվարդ, տոկոսային և արժութային սվոպներ:

Ֆինանսական ակտիվը կարող է լինել դրամական միջոցների, դրանց կամ այլ ֆինանսական ուրիշ կազմակերպություններից ակտիվների ստացման իրավունք, այլ կազմակերպություններում կապալի բնույթի գործիքներ և այլն:

Ֆինանսական գործիքների հետ կապված գործարքները մշտապես ուղեկցվում են ռիսկով, որոնց մեջ աչքի ընկնողներն են գնային /արժույթային, տոկոսային, շուկայական, վարկային, իրացվելիության, դրամական հոսքի ռիսկերը:

8.2. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ձեռնարկության դրամական ֆոնդերի ձևավորումը սկսվում է կազմակերպման պահից և հանդիսանում է նրա գործունեության կարևոր կողմերից մեկը: Ամեն մի կազմավորվող ձեռնարկություն գործող օրենսդրության պահանջների համաձայն ստեղծում է կանոնադրական կապիտալ: Դրա նվազագույն ծավալը սահմանված է օրենսդրությամբ, կախվածության մեջ է սեփականության ձևից և ներկայացվում է ձեռնարկության գույքի այն մեծությունը, որով երաշխավորվում են կրեդիտորների շահերը:

Կանոնադրական կապիտալը ձեռնարկության սեփական միջոցների հիմնական նախասկզբնական աղբյուրն է: Դա է, որ ձևավորում է հիմնական ու շրջանառու կապիտալը, որոնք էլ իրենց հերթին ուղղվում են արտադրական ֆոնդերի ձեռք բերմանը, ի վերջո ստեղծվում է ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների անհրաժեշտ ծավալը:

Սեփական կապիտալը գործնականում ձեռնարկության բոլոր ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: Սեփական կապիտալը իր հերթին բաժանվում է հաստատուն ու փոփոխուն մասերի: Առաջինը կանոնադրական

կապիտալն է, երկրորդը ձեռնարկության ֆինանսական արդյունքից ածանցվող միջոցներն են՝ լրացուցիչ կապիտալ, պահուստային կապիտալ, վերաբաշխված շահույթը, հատուկ ֆոնդերը:

Լրացուցիչ կապիտալը առաջանում է մի քանի աստիճաններով՝ ոչ ընթացիկ ակտիվների արժեքի մեծացում վերագնահատման պատճառով (բաժնետոմսերի վաճառքի գնի գերազանցում անվանական արժեքի և վաճառքի ծախսերի գումարին), արտադրական նպատակով անհատույց ստացված նյութական և դրամական արժեքներ:

Ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունքը և նպատակը շահույթն է: Հարկային վճարումներից հետո ձևավորվում է շահույթի մի այնպիսի գումար, որպիսին մնում է ձեռնարկության տրամադրության տակ, որից էլ ձևավորվում են պահուստային կապիտալը (ֆոնդը) և նմանատիպ այլ ֆոնդեր, ինչպես նաև կուտակման ու սպառման ֆոնդերը:

Պահուստային կապիտալի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում նախատեսված է օրենսդրությամբ: Դրա առաջացման աղբյուրը շահույթից կատարվող հատկացումներն են, իսկ մեծությունը պետք է պակաս չլինի կանոնադրական կապիտալի 15 % և չգերազանցի 25 % -ը: Այս ֆոնդը նախատեսված է հաշվետու տարվա վնասը ծածկելու, շահույթը անբավարար լինելու պայմաններում շահաբաժիններ վճարելու և այլ նպատակների համար:

Պահուստի առկայությունը կարևոր պայման է նաև ձեռնարկության ֆինանսական կայունություն ապահովելու համար:

Չբաշխված շահույթը ուղղվում է հատուկ ֆոնդերի ձևավորմանը՝ կուտակման, սպառման և այլ նպատակային ֆոնդեր:

Կուտակման ֆոնդը այն դրամական միջոցներն են, որոնք նախատեսվում են արտադրության զարգացման և ընդլայնման համար: Դրանց օգտագործումը կապվում է ինչպես հիմնական արտադրության զարգացման, այնպես էլ շահույթ կորզելու նպատակով ֆինանսական ներդրումների հետ:

Սպառման ֆոնդը դրամական այն միջոցներն են, որոնք ուղղվում են կոլեկտիվի սոցիալական կարիքներին, ոչ արտադրական օբյեկտների ֆինանսավորմանը, միանվագ խրախուսումներին, փոխհատուցում և օգնություն վճարելուն:

Արժութային ֆոնդը ձևավորվում է օտարերկրյա արժույթով արտադրանքի իրացում կատարող և արժույթով հասույթ ստացող կազմակերպությունների մոտ:

Ամորտիզացիան (ոչ ընթացիկ ակտիվների մաշվածք) ստեղծվում է կապիտալի օգտագործման գործընթացում. վերաբերում է ոչ ընթացիկ ակտիվներին, տեսականորեն նախատեսված է նրանց պարզ վերարտադրությունը ֆինանսավորելու համար:

Ձեռնարկության ֆինանսական ռեսուրսները ներկայացնում են սեփական դրամական եկամուտների և մուտքերի ամբողջությունը, որը նախատեսված է ձեռնարկության ֆինանսական պարտավորությունները կատարելու և արտադրության զարգացման հետ կապված ծախսերը ֆինանսավորելու համար:

Այս հասկացության շրջանակներում պետք է տարբերել կապիտալ հասկացությունը, որպես ֆինանսական ռեսուրսի բաղադրիչ, որն ավանսավորված է արտադրության մեջ և շրջապտույտի ավարտից հետո եկամուտ է բերում, այլ կերպ՝ հանդիսանում է ֆինանսական ռեսուրսների փոխակերպված ձևը:

Ձևավորման աղբյուրների հետ կապված ռեսուրսները բաժանվում են սեփականի (ներքին) և ներգրավվածի (արտաքին):

Առևտրական հաշվարկի սկզբունքով գործող արտադրական ձեռնարկությունները ունեն որոշակի ինքնուրույնություն և անկախություն գործունեության կազմակերպման ու իրականացման գործում: Դրանց ինքնուրույնության և ֆինանսական գործունեության կարևորագույն կողմերից մեկը տարբեր բնույթի դրամական ֆոնդերի ձևավորումն ու օգտագործումն է: Վերջիններիս միջոցով են ապահովվում տնտեսական գործունեության պահանջները դրամական անհրաժեշտ միջոցների նկատմամբ, արտադրության ընդլայնումը, գիտատեխնիկական առաջընթացը, նոր տեխնիկայի յուրացումն ու ներդրումը, աշխատողների նյութական խրախուսումը, վճարումները բյուջեին և այլն:

Տնտեսական պրակտիկայում ընդունված է դրանք բաժանել չորս խմբերի՝

I. Սեփական միջոցների ֆոնդեր,

II. Փոխառու միջոցների ֆոնդեր,

III. Ներգրավված միջոցների ֆոնդեր,

IV. Օպերատիվ (ընթացիկ) դրամական ֆոնդեր:

Դրամական միջոցների ֆոնդերի առաջին խումբը ունի ուղենշային նշանակություն. դրա հաշվին է գլխավորապես ձևավորվում արտադրական պոտենցիալը և արտահայտվում սեփական կապիտալի մեծությունը: Այն ներառում է՝

- կանոնադրական կապիտալը,
- լրացուցիչ կապիտալը,
- պահուստային կապիտալը,
- ինվեստիցիոն ֆոնդը,
- արժութային ֆոնդը և այլն:

Օպերատիվ ֆինանսատնտեսական գործունեությունը գործնականում չի կարող ընթանալ առանց դրամական միջոցների նկատմամբ պահանջի տատանումների: Հաճախ դրամական հոսքերի ստացման և ծախս կատարելու անհրաժեշտության ժամկետները չեն համընկնում, ինչը բխում է արտադրական կապիտալի շրջապտույտի առանձնահատկություններից: Մշտապես առաջանում է կամ միջոցների նկատմամբ ժամանակավոր պահանջ, կամ ժամանակավոր ավելցուկ: Առաջին դեպքում ներգրավվում են փոխառու աղբյուրներ և ձևավորվում հետևյալ ֆոնդերը՝

- բանկային վարկեր,
- առևտրական վարկեր,
- ֆակտորինգ,
- լիզինգ,
- կրեդիտորներ և այլն:

Միաժամանակ, տնտեսական արդյունքի հաշվին, բյուջեի և բանկերի հանդեպ պարտավորությունները կատարելուց հետո, կուտակվում են ներտնտեսական ապակենտրոնացված միջոցներ՝ աշխատողների, բաժնետերերի ներտնտեսական կարիքները հոգալու համար՝ ձևավորելով հետևյալ ֆոնդերը՝

- սպառման ֆոնդեր,

- հաշվարկներ շահաբաժինների գծով,
- գալիք ժամանակաշրջանի եկամուտներ,
- առաջիկա վճարումների և ծախսերի պահուստ,
- այլ ֆոնդեր:

Ձեռնարկությունները ընթացիկ գործառնության արդյունքներով պարբերաբար բավարարում են առավել ժամկետային և առաջնահերթ պահանջները հետևյալ օպերատիվ ֆոնդերի հաշվին՝
- աշխատանքի վարձատրության,
- շահաբաժինների վճարման,
- բյուջեին և սոցապին վճարումների,
- այլ վճարումների:

Ինչպես նշվեց, բաժնետիրական ընկերություններում բացառիկ է սեփական միջոցների ֆոնդի նշանակությունը:

Ձեռնարկությունը կազմակերպվելիս պետք է ձևավորի կանոնադրական ֆոնդ (կապիտալ), որի հաշվին էլ գոյանում են հիմնական ու շրջանառու միջոցները (ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվները): Այդ ֆոնդը արտացոլում է ձեռնարկության կողմից թողարկված բաժնետոմսերի գումարը, որը փոփոխության է ենթարկվում տարեկան արդյունքներով: Ըստ էության, կանոնադրական կապիտալը արտահայտում է իր կրեդիտորների շահերը երաշխավորող ներդրումների նվազագույն չափը և որոշվում է գործող օրենսդրական պահանջներից ելնելով: Որպես դրամական միջոցների առաջին ֆոնդ, կանոնադրական կապիտալը արտացոլվում է հաշվեկշռի պասիվում, ակտիվում ունենալով նյութական կրողներին՝

Ակտիվ	Պասիվ
- ոչ ընթացիկ ակտիվներ	- կապիտալ և պահուստներ
- ընթացիկ ակտիվներ	- երկարաժամկետ պասիվներ
- վնասներ	- կարճաժամկետ պասիվներ
Հաշվեկշիռ	Հաշվեկշիռ

Կանոնադրական կապիտալի հետ սերտորեն կապված է զուտ ակտիվներ հասկացությունը, որը լայն առումով, սեփական միջոցներն են:

Ձեռնարկատիրական գործունեության կառավարման կարևորագույն բնագավառներից մեկը դրամական հոսքերի կարգավորումն է:

Ֆինանսական պլանավորման համար բացառիկ նշանակություն ունի դրամական հոսքերի կանխատեսվող ծավալը, որն արտահայտում է ձեռնարկության դրամական մուտքերը և ելքերը: Դրանք ամփոփվում են աղյուսակի տեսքով և բովանդակությամբ նման են նախկինում գործող օրացուցային պլանին: Միաժամանակ, շուկայական էկոնոմիկայի պայմաններում դրամական մուտքերի ճիշտ կանխատեսումը և դրամական ելքերի ուղղությունների՝ ըստ ժամկետների որոշումը շատ կարևոր է կազմակերպության ընթացիկ նորմալ գործունեությունը ապահովելու և լուծարելիության վիճակը գնահատելու համար:

Դրա նշանակությունը մեծ է նաև մատակարարների, բյուջեի և այլ մարմինների հանդեպ պարտավորությունները ժամանակին կատարելու համար:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների մեծ մասում դրամական հոսքերի աղյուսակը ներկայացվում է մի քանի ձևով՝ ապահովելով նույն բովանդակությունը: Դրանում բերվում են դրամի սկզբնական մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, դրամի մուտքերը, դրամի ելքերը և մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Դրամի սկզբնական մնացորդը նույնպես կանխատեսվող մեծություն է, քանի որ պլանավորումը, սովորաբար, կատարվում է պլանավորվող ժամանակաշրջանին նախորդող ամիսներին, ընթացիկ տարին չավարտված: Եթե ձեռնարկությունը նոր կազմակերպվող չէ, ապա կանխատեսումը կատարվում է՝ ելնելով պլանավորվող ժամանակաշրջանին նախորդող տարվա տարեվերջի մնացորդից՝ համապատասխան ճշգրտումներով:

Կազմակերպության նորմալ տնտեսական գործունեության պայմաններում դրամական մուտքերի հիմնական մասը կազմում է գործառնական գործունեությունից ստացվող հասույթը: Այն, այլ կերպ, կարելի է անվանել մուտքեր վաճառքից: Այս խմբի մուտքերի մեջ մտնում են տվյալ տարվա արտադրանքի իրացումից հասույթը, ինչպես նաև նախկինում ապառիկ վաճառված ապրանքների դիմաց ստացվող մուտքերը (դեբիտորական պարտքերի մարումը): Այս ցուցանիշի պլանավորման դժվարությունն այն է, որ հնարավոր չէ ճշգրիտ կանխատեսել գնորդների կողմից կատարվող վճարումների պարբերականությունը և ժամկետները: Այս ցուցանիշի կանխատեսումը համեմատաբար բարդ է շուկայական էկոնոմիկային անցման առաջին փուլում, երբ իրացման գները և շուկան անկայուն են, կա հաճախակի տատանումների հնարավորություն:

Մուտքերի հաջորդ խումբը ձևավորվում է ներդրումային գործունեությունից ստացված եկամուտներից: Այս խմբի մեջ մտնում են հիմնական միջոցների (ոչ ընթացիկ ակտիվների), երկարաժամկետ ֆինանսական ներդրումների, անավարտ շինարարության վաճառքից հասույթը, ինչպես նաև երկարաժամկետ ֆինանսական ներդրումների հետ կապված շահաբաժինները:

Դրամական հոսքերի երրորդ խումբը ֆինանսական գործարքներից ստացվող մուտքերն են.

1. Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ,
2. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ,
3. Արժեթղթերի էմիսիայից մուտքեր,
4. Նպատակային ֆինանսավորում:

Դրամական ելքերը նույնպես բաժանվում են 3 խմբի՝ հիմնական, ներդրումային և ֆինանսական գործունեության ապահովման հետ կապված:

Ֆինանսական դրությունը լիարժեք հնարավոր չէ գնահատել, առանց այդ հոսքերը վերլուծելու: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների մեծ մասը ունի շրջանառու միջոցների ճեղքվածք, թեև դրանցից շատերը աշխատում են շահույթով: Գոյություն ունի դրամական միջոցների հոսքի հասկացություն, որը ներառում է ձեռնարկության ստացած և վճարած միջոցների ամբողջությունը: Դրամական միջոցների հոսքը կապված է կոնկրետ ժամանակաշրջանի հետ և իրենից ներկայացնում է բոլոր ստացումների և վճարումների ամբողջությունը: Համաշխարհային պրակտիկայում դրամական հոսքերը անվանվում են «քեշ ֆլո»: Երբ ելքը գերազանցում է մուտքերը, կոչվում է

նեգատիվ քեշ ֆլո, հակառակ դեպքում՝ պոզիտիվ: Օգտագործվում է նաև դիսկոնտավորված կամ վերահաշվարկված քեշ ֆլո արտահայտությունը:

Դրամական հոսքերը բխում են ձեռնարկությունների գործունեության կոնկրետ բնագավառներից, որպիսիք սովորաբար երեքն են՝ հիմնական գործունեություն, ինվեստիցիոն գործունեություն, ֆինանսական գործունեություն:

Արտադրական ձեռնարկությունների համար գլխավորը հիմնական (գործառնական) գործունեությունն է, որտեղ հոսքերն են՝

- ապրանքային արտադրանքի և ծառայությունների իրացումից հասույթը,
- դեբիտորական պարտքերի մարումից մուտքերը,
- նյութական արժեքների վաճառքից (փոխանակումից) մուտքերը,
- գնորդների ավանսային (կանխավճարային) մուծումները:

Ելքերն են՝

- մատակարարներին վճարումները,
- աշխատավարձի վճարումները,
- բյուջեին և արտաբյուջետային ֆոնդերին վճարումները,
- վարկերի մարումը և տոկոսավճարները,
- սպառման ֆոնդից վճարումները,
- կրեդիտորական պարտքերի մարումը:

Ներդրումային գործունեության մուտքերն են՝

- հիմնական ֆոնդերի (ոչ ընթացիկ ակտիվների) վաճառքը,
- երկարաժամկետ ֆինանսական ներդրումների վաճառքը,
- երկարաժամկետ ֆինանսական ներդրումների շահաբաժինները:

Ելքերն են՝

- արտադրության զարգացման համար կապիտալ ներդրումները,
- երկարաժամկետ ֆինանսական ներդրումները:

Ֆինանսական գործունեությունից մուտքերն են՝

- կարճաժամկետ վարկերն ու փոխառությունները,
- երկարաժամկետ վարկերն ու փոխառությունները,
- արժեթղթերի էմիսիայից մուտքերը,
- նպատակային ֆինանսավորումը:

Ելքերն են՝

- կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի մարումը,
- շահաբաժինների վճարումը:

8.3. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԾԱԿ:

Արտադրական ձեռնարկության կապիտալը, որպես գործունեության մեջ ներդրված (ավանսավորված) գումար կարող է կազմված լինել բազմաթիվ աղբյուրներից, որոնք բաժանվում են ներքինի և արտաքինի: Բնականաբար, այդ կապիտալի կառավարման ընթացքում խնդիր է առաջանում ներքին թե արտաքին, որն է ավելի կարևոր, նախապատվությունը որ խմբին տալ: Կապիտալի, նույնն է թե պասիվների կառուցվածքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով վերլուծություն կատարելիս, շատ կարևոր է ֆինանսավորման ներքին ու արտաքին աղբյուրները տարբերակելը: Ձեռնարկության ձևավորման կամ զարգացման ներքին ֆինանսավորումը ապահովվում է նրա եկամուտների հաշվին: Դա ներառում է այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են՝ չբաշխված շահույթը, հաշվարկված բայց չվճարված աշխատավարձը, կրեդիտորական պարտքերը: Երբ ձեռնարկությունը զարգացման համար ներդնում է շահույթի մի մասը, նշանակում է օգտագործում է ներքին աղբյուր: Ֆինանսավորման արտաքին աղբյուրներն ի հայտ են գալիս, երբ ձեռնարկությունը ներգրավում է կրեդիտորների կամ բաժնետերերի միջոցները: Եթե կազմակերպությունը շենք է կառուցում կամ սարքավորում է ձեռք բերում փոխառության թողարկման կամ բաժնետոմսերի իրացման հետևանքով ստացված միջոցների հաշվին, նշանակում է օգտագործում է արտաքին ֆինանսավորում:

Աշխարհում ընդունված է սեփական աղբյուրներին զուգահեռ կիրառել բիզնեսի ֆինանսավորման արտաքին աղբյուրների հինգ տեսակ՝

- ***Փոխառություններ*** բարեկամներից ու հարազատներից.

Այդպիսի «ընտանեկան» ֆինանսավորման կազմակերպական ձևը հարմար է կիրառման համար, այն դեպքում, երբ բիզնեսը սկսվում է ձեռնարկության տեսքով և մոտ ապագայի՝ հեռանկարները բավականաչափ անորոշ են: Նման դեպքում հաջողությունները մեծապես պայմանավորված են ձեռներեցի որակով, բնականաբար, պահանջվող միջոցները կարող են հատկացվել նրան անձամբ ճանաչող և վստահող մարդիկ:

- ***Կապալ***: Կապալատուն կապալառուին ներկայացնում է որոշակի իրական ակտիվներ՝ գրասենյակ, պահեստ, սարքավորում, որը պարտավորվում է որոշակի ժամանակահատվածում նրան կատարել վճարում, ըստ էության կապալը ֆինանսավորում է փոխառու աղբյուրների ներգրավմամբ:
- ***Սովորական բտաժնետոմսերը*** որպես ֆինանսավորման մեթոդ ձեռնարկությունները օգտագործում են այն դեպքերում, երբ դրանք կազմակերպվում են բաժնետիրական ընկերությունների տեսքով: Որպես ֆինանսավորման արտաքին աղբյուր դրանք օգտագործվում են հատկապես ձեռնարկությունը բաց բաժնետիրական ընկերություն դառնալու պահին, կամ էլ եթե ուզում է զգալիորեն ընդլայնել իր բիզնեսը:
- ***Վարանտով պարտքային*** պարտավորություն: Վարանտները իրենցից ներկայացնում են «կոլլ» օպցիոն, որպիսին սեփականատիրոջը իրավունք է տալիս ընկերության կողմից թողարկվող բաժնետոմսերը (ակցիա) գնել հաստատագրված գնով: Դրանք կցվում են պարտքային պարտավորություններին, եթե ընկերությունը

նախատեսում է պարտքը մարելուց առաջ ձեռք բերել նոր բաժնետիրական կապիտալ:

- ***Դեբիտորական պարտքի*** ֆակտորինգի դեպքում ընկերությունը կողմնակի կազմակերպության հետ կարող է կնքել պայմանագիր իր դեբիտորական պարտքը սպասարկելու մասին՝ զեղչով իր դեբիտորական պարտքը վաճառել: Վերջին հաշվով ֆակտորինգային կազմակերպությունը հնարավորություն է տալիս դրամական միջոցներ ստանալ ակտիվները վաճառելու, այլ ոչ թե փոխառություններ և նոր բաժնետոմսերի թողարկման ճանապարհով:

Արտադրական ձեռնարկությունների ակտիվների ձևավորումը ֆինանսավորող գլխավոր աղբյուրը պատմականորեն եղել և մնում է սեփական կապիտալը: Սեփական կապիտալ հասկացությունը իրենից ներկայացնում է ձեռնարկությունում առկա ակտիվների (հիմնական ֆոնդեր, շրջանառու ֆոնդեր, շրջանառության ֆոնդեր) և արտաքին պարտավորությունների տարբերությունը: Գործնականում դրա մեծությունը կարող է որոշվել միայն հաշվարկային ձևով. հաշվապահական հաշվեկշռի տվյալներով:

Սեփական կապիտալը ստորաբաժանվում է հաստատունի (կանոնադրական) և փոփոխականի: Ձեռնարկությունը իր կանոնադրական կապիտալի հաշվին ֆինանսավորում է ակտիվների մշտական մնացորդները՝ հիմնական և շրջանառու սեփական կապիտալը, որպիսիք գտնվում են անընդհատ շարժման գործընթացի մեջ և շրջապտույտի փուլերից կախված ընդունում են տարբեր ձևեր: Դրանք ունեն նյութական տարբեր կրողներ:

Կապիտալի փոփոխուն մասը շատ բաներով կախված է ձեռնարկության գործունեության ֆինանսական արդյունքներից, որոնց հաշվին գոյանում են պահուստային և լրացուցիչ կապիտալները, չբաշխված շահույթը:

Ձեռնարկության հիմնական կապիտալը նյութականորեն ներկայացնում է ակտիվների մի մասը՝ ոչ ընթացիկ ակտիվներում ներդրումները, երկարաժամկետ անավարտ ներդրումները (ինվեստիցիաներ), ոչ նյութական ոչ ընթացիկ ակտիվները, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները:

Շրջանառու կապիտալը ընդհանուր կապիտալի այն մասն է, որը ներդրվում է ձեռնարկության ընթացիկ ակտիվների մեջ: Այս կապիտալի մի մասը ավանսավորվում է արտադրության ոլորտում և ձևավորում է շրջանառու արտադրական ֆոնդերը, մյուսը՝ գտնվում է շրջանառության ոլորտում և ձևավորում է շրջանառության ֆոնդը: Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներով դրանք միասին կազմում են ընթացիկ ակտիվները:

Ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվների մեջ կատարվող ամբողջ ներդրումները ձեռնարկությունների ինվեստիցիաներն են, որոնց ձևավորման բոլոր հնարավոր աղբյուրները հետևյալն են՝

– տնտեսավարող սուբյեկտի սեփական միջոցներ.
– արժեթղթերի էմիսիայի, իրավաբանական ու ֆիզիկական անձանց փայավճարների ստացման ճանապարհով դրամական միջոցների ներգրավում
– բանկի երկարատև ու կարճատև վարկեր.
– օտարերկրյա ներդրողների միջոցներ.
– արտաբյուջետային ֆոնդերի միջոցներ.
– այլ աղբյուրներ:

Բոլոր աղբյուրների մեջ հիմնական տեղը պատկանում է սեփական միջոցներին: Դա ընդգրկում է հիմնադիրների նախասկզբնական մուծումները և ֆինանսատնտեսական արդյունքներով ստացված դրամական միջոցների մի մասը:

Սեփական կապիտալի մեջ կանոնադրական կապիտալի չափը որոշում են բաժնետիրական ընկերության հիմնադիրները: Կանոնադրական կապիտալի չափը չպետք է պակաս լինի բաց ԲԸ գրանցման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից: Այդ չափին համապատասխան թողարկում են բաժնետոմսեր և դրանք հիմնադիրների կողմից ներդրված (վճարված) կապիտալին համապատասխան բաժանվում են հիմնադիրների միջև: Բաժնետոմսերը լինում են սովորական և արտոնյալ: Սրանցից հիմնականը սովորական բաժնետոմսերն են, որոնց քանակը ընդհանուր բաժնետոմսերի մեջ չպետք է 75 %-ից պակաս լինի: Սովորական բաժնետոմսերի տերերը մասնակցում են բաժնետիրական ընկերության կառավարման աշխատանքներին: Յուրաքանչյուր մեկ սովորական բաժնետոմսը նրա տնօրինողի համար ապահովում է մեկ ձայնի իրավունք: Սովորական բաժնետոմսերը ազատ կերպով վաճառվում են արժեթղթերի շուկայում շուկայական գնով: Սովորական բաժնետոմ-սերը նրա տնօրինողին բերում են տարեկան եկամուտ շահաբաժնի տեսքով, որի չափը պայմանավորված է բաժնետիրական ընկերության ստացած զուտ շահույթի մեծությամբ և որոշում է բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ինչ վերաբերում է արտոնյալ բաժնետոմսերին, ապա սրանց տնօրինողները չունեն ձայնի իրավունք և չեն կարող մասնակցել ընկերության կառավարման աշխատանքներին: Արտոնյալ բաժնետոմսերը իրենց տնօրինողներին բերում են շահաբաժին, որի չափը տոկոսային մեծությամբ սահմանված է արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ: Արտոնյալ բաժնետոմսերի եկամուտը երաշխավորված է: Այն վճարվում է բաժնետիրական ընկերության զուտ շահույթի հաշվին: Այն դեպքում, երբ այդ շահույթը չի բավարարում կամ ընկերությունը հաշվետու տարում վնասով է աշխատել, ապա վճարը կատարվում է պահուստային կապիտալի հաշվին, որը նույնպես սեփական կապիտալի մասն է կազմում: Այս իմաստով, արտոնյալ բաժնետոմսերի տարատեսակ կարող ենք անվանել բաժնետիրական ընկերության կողմից բաց թողնվող ու իրացվող փոխառությունների պարտատոմսերը, որոնք դրանց տնօրինողներին բերում են եկամուտ տոկոսի տեսքով:

Բաժնետիրական ընկերության սեփական կապիտալի մեջ մտնում է նաև էմիսիոն եկամուտը: Դա առաջանում է այն ժամանակ, երբ ընկերությունը որոշում է ընդունում լրացուցիչ կապիտալ ձևավորել նախկինում թողարկված և դեռևս չտեղաբաշխված ու չվճարված սովորական արժեթղթերը շուկայում վաճառելով, եթե դրանց շուկայական գինը բարձր է անվանական արժեքից, կամ էլ այդ նույն պայմանով՝ թողարկել և վաճառել նոր սովորական արժեթղթեր: Սովորական արժեթղթերի անվանական արժեքի ու այդ արժեթղթերի շուկայական գնի տարբերությունը կազմում է էմիսիոն եկամուտը, որի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտացոլվում է հաշվեկշռի մեջ որպես սեփական կապիտալ:

Ձեռնարկության միջոցների ձևավորման աղբյուրները և դրանց նյութական կրողները ամբողջությամբ արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռում և պատկերված են թիվ 8.3.1 աղյուսակի տեսքով:

Հիմնական ու շրջանառու կապիտալի ձևավորումը ձեռնարկատիրական գործունեություն սկսելու օբյեկտիվ նախադրյալն է: Այդ գործունեության արդյունքը արտահայտվում է պատրաստի արտադրանքի թողարկման, աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման մեջ, որի պարտադիր պահանջը շահույթ ստանալն է՝ դրանց իրացումից հասույթի գերազանցումը արտադրության ու իրացման վրա կատարված ծախսերին (ինքնարժեքին):

Աղյուսակ 8.3.1

	Ընթացիկ ակտիվներ				Ոչ ընթացիկ ակտիվներ			
	Լուծարելի ակտիվներ							
Հաշվեկշիռ	Դրամական միջոցներ, այդ թվում՝ դրամարկղ, հաշվարկային հաշիվ, արտարժույթային հաշիվ և այլն	Ընթացիկ դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ գնորդների, բյուջեի, աշխատավարձի և այլնի գծով	Ընթացիկ ֆինանսական ներդրումներ, այդ թվում՝ ներդրումներ արժեթղթերի դեպոզիտների և այլնի տեսքով	Պաշարներ, այդ թվում՝ նյութեր, անավարտ արտադրություն, արտադրանք և այլն	Ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումներ և դեբիտորական պարտքեր, այդ թվում՝ ներդրումներ դուստր, ասոցիացված կազմակերպություններում և այլն	Ոչ նյութական ակտիվներ, այդ թվում՝ լիցենզիաներ, վստահագրեր, հեղինակային իրավունքներ, արտոնագրեր և այլն	Ոչ նյութական ակտիվներ, այդ թվում՝ շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ, շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ և այլն	Իկտիվ
Հաշվեկշիռ 100/180	**Պարտավորություններ**						**Սեփական կապիտալ**	
	Ընթացիկ պարտավորություններ					**Երկարաժամ. ֆին. պարտավորություններ**	Այդ թվում՝ կանոնադրական կապիտալ, էմիսիոն եկամուտ, ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ, նախորդ տարիների չբաշխված շահույթ, հաշվետու տարվա զուտ շահույթ և այլն	Իկոոպ
	Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր, այդ թվում՝ մատակարարների, բյուջեի, սոցապահովագրության, աշխատավարձի, ստացված կանխավճարների, գործառնական վարձակալության, տույժերի ու տուգանքների գծով և այլն			Կարճաժամկետ ֆինանսական պարտավորություններ, կարճաժամկետ բանկային վարկերի, կարճաժամկետ փոխառությունների և այլնի գծով		Այդ թվում՝ երկարաժամկետ բանկային վարկերի, փոխառությունների, ֆինանսական վարձակալության և այլ պարտավորությունների վճարներ		

Ֆինանսատնտեսական գործունեության համար կարևոր նշանակության ունի ակտիվների ձևավորման աղբյուրների նպաստավոր կառուցվածքը: Տվյալ էֆեկտը առաջանում է տնտեսական ընդհանուր շահութաբերության և փոխառու աղբյուրների ներգրավման գնի (վարկային միջին դրույքի) տարբերության հետևանքով: Այլ կերպ՝ ձեռնարկությունը պետք է ապահովի այնպիսի տնտեսական շահութաբերության մակարդակ, որը բավարար լինի գոնե վարկի դիմաց տոկոսները վճարելու համար: Այդ պարագայում տնտեսական շահութաբերությունը կհամապատասխանի սեփական միջոցների արդյունավետությանը և ֆինանսական լծակի էֆեկտի մասին խոսք լինել չի կարող: Երբ տնտեսական շահույթի և վարկի գնի միջև տարբերությունը դրական է, ֆինանսական լծակը կարող է դրսևորում ստանալ և արդյունքում դրա ազդեցության հետևանքով սեփական միջոցների շահութաբերությունը կունենա ավելի բարձր մակարդակ:

Ասվածը առարկայական դարձնելու նպատակով բերենք հետևյալ օրինակը: Ենթադրենք՝ միաժամանակ գործում են երկու ձեռնարկություններ՝ Ա և Բ: Երկուսն էլ ունեն շահութաբերության 30% մակարդակ: Սակայն դրանցից մեկը, դիցուկ Ա-ն, գործունեությունն իրականացնում է միայն իր սեփական միջոցներով, առանց վարկերի և փոխառու այլ աղբյուրների ներգրավման, իսկ մյուսը՝ Բ-ն, այս կամ այն չափով օգտվում է փոխառու աղբյուրներից: Համարենք, որ Ա ձեռնարկության ընդհանուր ակտիվների գումարը 20.000 հազ. դրամ է և ունի նույնքան պասիվներ՝ լրիվությամբ ձևավորված սեփական աղբյուրներով:

Ընդունենք նաև, որ Բ ձեռնարկությունը ևս ունի նույն մեծության ակտիվներ՝ 20.000 հազ.դրամ, որի կեսը ձևավորվել է սեփական աղբյուրներով՝ մյուս կեսը՝ 10.000 հազ.դրամը, փոխառու աղբյուրներով: Ենթադրենք, որ նշված երկու ձեռնարկությունների ներդրումների (ավանսավորված գումարի) շահագործման արդյունքում ձեռք է բերվել 6.000 հազ. դրամի զուտ արդյունք (շահույթ):

Գործնականում հնարավոր է, որ կոնկրետ ժամանակաշրջանի համար այդ ձեռնարկությունները հարկատու լինեն կամ չլինեն: Այն դեպքում, երբ դրանք հարկատու չեն և գտնվում են յուրահատուկ արտոնյալ հարկային դաշտում, Ա ձեռնարկությունը 6.000 հազ. դրամի շահույթ ստանում է միայն սեփական միջոցները գործունեության մեջ ներդնելու հետևանքով, այնքանով, որ նրա ամբողջ ակտիվները ծածկվում են բացառապես սեփական աղբյուրներով: Այս ձեռնարկության շահութաբերությունը կկազմի 30% $\left(\frac{6.000\times100}{20.000}\right)$, որը ամբողջությամբ կվերաբերի սեփական միջոցներին: Երկրորդ՝ Բ ձեռնարկությունը նույնպիսի արդյունք է ձեռք բերել նաև՝ օգտագործելով փոխառու աղբյուրներ: Բնականաբար, պարտավոր է ստացված արդյունքի հաշվին նախ և առաջ վճարել տոկոսներ վարկատուներին և կատարել այլ հնարավոր ծախսեր՝ կապված գրավի և ապահովագրության հետ: Փոխառու աղբյուրների ներգրավման հետ կապված, ծախսերի մեծությունը անմիջական կախվածության մեջ է որոշակի տնտեսական պայմաններից, մասնավորապես՝ տոկոսային քաղաքականության բնագավառում ստեղծված վիճակից և ռիսկերի դրսևորման աստիճանից, որոնք խիստ փոփոխական են, հատկապես, շուկայական հարաբերությունների անցումային ժամանակաշրջանում:

Կոնկրետ դեպքում, եթե ընդունենք, որ այդ ծախսերի միջին տարեկան մակարդակը (դրույքը) հավասար է 20%-ի, ապա երկրորդ ձեռնարկության հար-

կադիր ֆինանսական ծախսերը կկազմեն 2.000 հազ.դրամ (10.000×20:100): Սեփական միջոցների արդյունավետությունը հաշվարկելու համար օգտագործվող շահույթը այս դեպքում կկազմի ոչ թե 6.000, այլ 4.000 հազ.դրամ (6.000-2.000), իսկ դրանց շահագործման շահութաբերությունը՝

40% (4.000×100:10.000):

Այսպիսով, հավասար մեծության ակտիվներ ունեցող այս երկու ձեռնարկությունները, ապահովելով 30% տնտեսական շահութաբերության մակարդակ, կբնութագրվեն սեփական միջոցների տարբեր աստիճանի շահութաբերությամբ, որը արդյունք է պասիվների կառուցվածքային տարբերության: Այդ տարբերությունը տվյալ պարագայում հավասար է 10 տոկոսային կետի (40-30) և արդյունք է ֆինանսական լծակի արդյունավետության դրսևորման:

Այսպիսով, ֆինանսական լծակի արդյունավետությունը իրենից ներկայացնում է սեփական միջոցների շահագործման շահութաբերության այն լրացուցիչ աճը, որը ապահովվում է փոխառու աղբյուրները գործունեության մեջ ներգրավելու հետևանքով, թեև վերջինները կրում են վճարովի բնույթ:

Դժվար չէ նկատել, որ Բ ձեռնարկությունում ակտիվների մի մասը, ապահովելով 30 տոկոս շահութաբերություն, ընդհանուր առմամբ պահանջում է 20 տոկոս ծախս: Այդ ընթացքում սեփական աղբյուրների (միջոցների) շահութաբերությունը աճում է, խոսքը վերաբերում է հենց սեփական միջոցներին, որոնց օգտագործումը կապված չէ լրացուցիչ ֆինանսական ծախսերի հետ, բայց ունի որոշակի ռիսկայնություն թերևս ցանկացած բաժնետիրական ընկերությունում, ՍՊԸ-ներում և ձեռնարկություններում՝ անկախ իրավակազմակերպական ձևից, բացառությամբ անհատական արտադրության:

Աղյուսակ 8. 3.2

Սեփական միջոցների զուտ շահութաբերության հաշվարկը

Ցուցանիշներ	Ձեռնարկությունները	
	Ա	Բ
Ներդրումների շահագործման զուտ արդյունքը (շահույթը), հ.դր.	6.000	6.000
Փոխառու աղբյուրների ֆինանսական ծախքերը, հ.դր.	-	2.000
Հարկման ենթակա շահույթը, հ.դր.	6.000	4.000
Շահութահարկի գումարը (1/4), հ.դր	1.200[1]	800
Զուտ շահույթը, հ.դր.	4.800	3.200
Սեփական միջոցների զուտ շահութաբերությունը, %	24,0 (4.800×100:20.000)	32 (3200×100:10.000)

Այժմ ընդունենք, որ մեր ձեռնարկությունները գտնվում են որոշակի հարկային դաշտում և շահույթի հետ կապված պարտավորություններ ունեն պետության հանդեպ: Ըստ տրամաբանության, արդյունքները պետք է բնութագրվեն ցուցանիշների նույնպիսի մակարդակներով, չէ՞ որ վարկի գինը և հարկերը ձեռք բերված տնտեսական արդյունքից պարտադիր հանումներ են և բոլորի համար

[1] Պայմանականորեն շահութահարկի միջին դրույքը ընդունվում է 20% (1/5):

անխուսափելի են: Իրականում, ինչպես երևում է թիվ 8.3.2 աղյուսակի տվյալներից, սեփական միջոցների զուտ շահութաբերությունը կունենա տարբեր մակարդակներ:

Բ ձեռնարկության սեփական միջոցների զուտ շահութաբերությունը 8.0 տոկոսային կետով բարձր է Ա ձեռնարկության զուտ շահութաբերությունից պասիվների այլ կառուցվածքի պատճառով, թեև երկու դեպքում էլ շահութահարկ վճարելուց հետո տնտեսական արդյունավետության ցուցանիշը նկատելիորեն նվազում է:

Ասվածի արդյունքում, ի վերջո, կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները՝

– Այն ձեռնարկությունները, որոնք գործունեության մեջ օգտագործում են միայն սեփական միջոցներ, հարկումից հետո կունենան զուտ շահութաբերություն՝ ձեռք բերված տնտեսական արդյունավետության 4/5 մակարդակի չափով:

– Փոխառու աղբյուրներ գործունեության մեջ ներգրավված ձեռնարկություններում սեփական միջոցների օգտագործման շահութաբերությունը ավելանում կամ պակասում է պասիվների կառուցվածքում սեփական ու փոխառու միջոցների հարաբերակցությունից, վարկային տոկոսի մակարդակից կախված չափերով: Գործում է ֆինանսական լծակի արդյունավետության ուժը՝ ՍՄՇ=4/5 ՏՇ+ՖԼԱ.

ՍՄՇ – սեփական միջոցների շահութաբերություն,

ՏՇ – տնտեսական շահութաբերություն,

ՖԼԱ – ֆինանսական լծակի արդյունավետություն:

Օպերատիվ տնտեսական գործունեության ընթացքում ձեռնարկությունների ֆինանսական ծառայությունների կարևորագույն խնդիրներից մեկը ֆինանսական լծակի արդյունավետության իրացման մեխանիզմի այնպիսի ընտրությունն է, որը հնարավոր է դարձնում շահութահարկի հետևանքով առաջացող վնասի վերականգնումը կամ ձեռք բերված տնտեսական շահութաբերության համեմատությամբ սեփական միջոցների զուտ շահութաբերության իջեցման մեղմացումը: Այդ նպատակով շատ կարևոր է ֆինանսական լծակի արդյունավետության մեխանիզմի գործողության առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Ձեռնարկությունը, բոլոր դեպքերում, պետք է հասնի տնտեսական շահութաբերության այնպիսի մակարդակի, որը բավարար լինի գոնե փոխառու միջոցների դիմաց տոկոսների վճարման համար:

Հաշվարկներում, սխալներից խուսափելու համար, փոխառու աղբյուրների գինը՝ վարկի միջին տոկոսը, ոչ թե ուղղակիորեն վերցվում է համապատասխան վարկային պայմանագրերից, այլ որոշվում է՝ ելնելով փաստացի կատարված ֆինանսական ծախսերից (բոլոր վարկերի գծով) և ուսումնասիրվող ժամանակաշրջանում օգտագործվող ամբողջ փոխառու աղբյուրների գումարից, ըստ հետևյալ մոտեցման՝

$$ՎՄՀՂ=\frac{ՓՖԾ\times 100}{ՓԱԳ}.$$

ՎՄՀՂ - վարկային միջին հաշվարկային դրույք,

ՓՖԾ - փաստացի ֆինանսական ծախսեր,

ՓԱԳ - փոխառու աղբյուրների ընդհանուր գումար:

Այնուհետև անհրաժեշտ է որոշել ֆինանսական լծակի արդյունավետության գլխավոր կողմնորոշիչը՝ դիֆերենցիալը: Տվյալ հարաբերությունների մեջ դիֆերենցիալ հասկացությունը իրենից ներկայացնում է ձեռք բերված տնտեսական

շահութաբերության և փոխառու աղբյուրների միջին գնի (տոկոսային դրույքի, գրավային և այլ ծախսերի) տարբերությունը: Մեր օրինակում այն հավասար է 10-ի (30-20): Շահույթի հարկման արդյունքում դիֆերենցիալը արտահայտվում է սկզբնականի 4/5 մասով, այն է՝ 4/5 (ՏՇ-ՍՄՄՇ), այսինքն՝ տնտեսական շահութաբերության և սեփական միջոցների միջին շահութաբերության տարբերության 4/5:

Ֆինանսական լծակի արդյունավետության ազդեցության ուժը դրսևորվում է ֆինանսական լծակի ուսի (դիրքի) միջոցով: Դա արտահայտում է փոխառու և սեփական միջոցների հարաբերությունը և կարևոր ազդեցություն ունի ֆինանսական լծակի ազդեցության արդյունավետության վրա: Նշված տարրերը կիրառելու պայմաններում ստացվում է հետևյալ բանաձևը.

$$\text{ՖԼԱ} = 3/4\ \text{դիֆերենցիալ} \times \text{ՖԼՈ}\ (\text{ֆինանսական լծակի ուս})$$

կամ՝ $$\text{ՖԼԱ} = 4/5(\text{ՏՇ} - \text{ՎՄՀՊ}) \times \frac{\text{ՓՄ (փոխառու միջոցներ)}}{\text{ՍՄ (սեփական միջոցներ)}}$$

Նախորդ հաշվարկների արդյունքները տեղադրելով՝ կստանանք հետևյալ արդյունքը՝

$$\text{ՖԼԱ} = 4/5(30\text{-}20) \times \frac{10.000}{10.000} = 8.0$$

Ստացված թիվը համընկնում է սկզբնական հաշվարկի արդյունքին:

Բերված բանաձևը լայն հնարավորություն է ընձեռում, հարկային բեռի հաստատուն մնալու պայմաններում, լուրջ ուշադրություն դարձնել տոկոսային միջին դրույքի ու փոխառու և սեփական միջոցների հարաբերակցության հարցում նպատակահարմար վարիացիաների իրականացմանը: Փոխառու աղբյուրները ավելացնելու պայմաններում պարտքի սպասարկման ֆինանսական ծախսերը կծանրացնեն տոկոսային դրույքը, ինչը տնտեսական շահութաբերության կայունության պայմաններում կհանգեցնի դիֆերենցիալի իջեցման: Լծակի ուսը մեծացնելու պարագայում ևս տոկոսային ծախսերը կավելանան, արդյունքում՝ դիֆերենցիալը կիջնի, լծակի ուսը կբարձրանա:

Ընդունենք, որ Բ ձեռնարկությունում պասիվների կառուցվածքը դարձել է 3:1 (փոխառու աղբյուրներ՝ 15.000 հազ. դր., սեփական՝ 5.000 հազ. դր., ընդամենը՝ 20.000 հազ. դր.): Դրա հետ կապված՝ վարկի միջին տարեկան դրույքը բարձրացել և հասել է 24%-ի: Այդ դեպքում ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը կկազմի՝

$$\text{ՖԼԱ} = 4/5(30\text{-}24) \times 3 = 14.4\%$$

Տվյալ արդյունքը այս ձեռնարկությունում ավելի լավ է, քան նախորդը (8,0), սակայն դիֆերենցիալի իջեցումը անխուսափելիորեն մեծացնում է բանկի ռիսկը: Անկասկած, նոր վարկային պայմանագիրը ձեռնարկության համար միանգամայն շահավետ է:

Այսպիսով, որպես ընդհանրացում կարող ենք արձանագրել հետևյալը՝

– եթե նոր փոխառությունների հաշվին կատարվող ներդրումները ձեռնարկության համար ապահովում են ֆինանսական լծակի արդյունավետության բարձրացում, նշանակում է՝ դրանք նպատակահարմար ու շահավետ են.

– վարկատուի տեսանկյունից՝ որքան մեծ է դիֆերենցիալը, այնքան փոքր է ռիսկը, և ընդհակառակը:

Պրակտիկ աշխատանքի ընթացքում օրինական հարց կարող է ծագել. տվյալ ձեռնարկությունում ի՞նչ կարող է տեղի ունենալ վարկերի հետագա թանկացման դեպքում: Հաշվարկները ցույց են տալիս, որ ֆինանսական լծակի արդյունավետության նախկին մակարդակը պահպանելու համար հարկ կլինի ֆինանսական լծակի ուսը համապատասխան չափով մեծացնել: Սովորաբար վարկի տոկոսադրույքի՝ մեկ կետով բարձրանալը պահանջում է կրկնակի ավելացնել փոխառու և սեփական միջոցների հարաբերակցությունը:

Տեսականորեն հնարավոր է այնպիսի պահի առաջացում, երբ դիֆերենցիալը փոքր է զրոյից և ունի բացասական արժեք: Այդ դեպքում ֆինանսական լծակի արդյունավետությունը կաշխատի հակառակ ուղղությամբ, և ձեռնարկությունը կունենա բացասական արդյունք: Բացասական դիֆերենցիալ ունեցող ձեռնարկությունները շրջապատի համար չեն կարող որոշակի հետաքրքրություն ներկայացնել: Ցանկացած ներդրող, ունենալով շահույթ կամ շահաբաժին ստանալու կողմնորոշում, չի կարող հրապուրվել նման ձեռնարկության արժեթղթերի ձեռք բերումով: Միաժամանակ, բացասական դիֆերենցիալով ընկերությունների արժեթղթերը չեն կարող բարձր կուրս ունենալ: Խելամիտ և փորձառու ֆինանսական կառավարիչը չի փորձի ամեն գնով բարձրացնել ֆինանսական լծակի ուսը, այլ կձգտի այն նպատակահարմար ձևով կարգավորել դիֆերենցիալից կախվածության շրջանակներում:

Գործնականում պարզելով, որ փոխառու աղբյուրների շահագործումից ստացվող հատուցումը գերազանցում է դրանց ներգրավման ֆինանսական ծախսերը, կարող ենք համապատասխան մոտեցումներ մշակել ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների կանխատեսման և ձեռնարկության ֆինանսական պլանների կազմման ուղղությամբ: Փորձառու ֆինանսիստը հստակորեն պատկերացնում է, որ ֆիրմայի ապագան հիմնված է այսօրվա ցուցանիշների և վաղվա ներդրումային քաղաքականության վրա: Նույնիսկ փոխառու և սեփական աղբյուրների առկա բարենպաստ հարաբերակցությունը չպետք է անհոգություն առաջացնի վաղվա տնտեսական շահութաբերության, վարկային տոկոսադրույքի, հետևաբար և դիֆերենցիալի մակարդակի առնչությամբ: Ինքնին, վարկային պարտավորությունների առկայությունը բարիք կամ չարիք չէ, այն թե՛ զարգացման և թե՛ ռիսկայնության պոտենցիալ կրող է: Ընդգրկելով փոխառու միջոցների բավարար ծավալ, ձեռնարկությունը կարող է արագորեն լուծել առաջացած խնդիրները: Հարցն այն չէ, որ ֆինանսիստը իր գործողություններով բացառի բոլոր կարգի ռիսկերը, այլ այն է, որ կարողանա ընդունել խելացի հաշվարկված ռիսկերը դիֆերենցիալի սահմաններում: Ընդհանրապես դիֆերենցիալը բացասական չպետք է լինի, քանի որ դա կարևոր է նաև բանկի համար: Նմանատիպ ձեռնարկությունները վարկունակների թվին կարող են չդասվել: Իհարկե, գործնականում ձեռնարկությունների գործունեության առանձին փուլերում բացառություններ հնարավոր են: Երբեմն անհրաժեշտ է լինում սկզբում զարկ տալ ֆինանսական լծակին և ապա թուլացնել, այլ դեպքերում՝ պահպանել չափավորություն փոխառու աղբյուրների ավելացման գործում:

Արևմտյան տնտեսագետների կարծիքով գործունեության բարվոք դաշտ ունեցող ֆիրմաների համար նախընտրելի է փոխառու աղբյուրների 30-50% տեսա-

կարար կշիռը: Դա նշանակում է, որ ֆինանսական լծակի արդյունավետությունը օպտիմալ կարող է լինել ակտիվների տնտեսական շահութաբերության 1/3-ից 1/2-ի սահմաններում: Այդ պարագայում ֆինանսական լծակի արդյունավետությունը ի վիճակի է փոխհատուցել հարկային գանձումները և ապահովել սեփական միջոցների բավարար եկամտաբերություն ու մեղմել բաժնետիրական ռիսկը:

Կատարված ուսումնասիրություններն ու հաշվարկները հիմնված են ձեռնարկությունների պասիվների կառուցվածքի այն դեպքի վրա, երբ դրանք բաղկացած են ընդամենը երկու տարրերից՝ սեփական և փոխառու աղբյուրներից: Իրականում հնարավոր են նաև այլ դեպքեր: Շատ հաճախ բաժնետիրական ընկերություններում անխուսափելիորեն դրամական հոսքերի ձևավորման ու օգտագործման մշտական ուղեկիցներ են դեբիտորական և կրեդիտորական պարտքերը: Մատակարարներին, բյուջեին, սոցիալական ապահովագրությանը, վարկային և այլ կազմակերպություններին պարտքեր են ունենում գրեթե բոլորը: Դա թեև կրում է ժամանակավոր բնույթ, սակայն, մասնակցում է պասիվների ձևավորմանը և, առանձին դեպքերում, էականորեն փոխում է նրա կառուցվածքը: Բնականաբար, որպես ներգրավված, շատ դեպքերում՝ անվճար աղբյուր, չի կարող չանդրադառնալ ընդհանուր արդյունավետության, հատկապես սեփական ակտիվների շահութաբերության վրա: Գործնականում այն իր ուղղակի կամ անուղղակի անդրադարձն է ունենում ֆինանսական լծակի արդյունավետության վրա:

Ձեռնարկությունների կրեդիտորական պարտքերի կազմը կարող է լինել տարբեր: Հիշեցնենք, որ դրանք հիմնականում արդյունք են հաշվարկավճարային փոխհարաբերությունների և գլխավորապես վերաբերում են ապրանքների, աշխատանքների, աշխատավարձի, սոցիալական և այլ ապահովագրությունների, ներհամակարգային, դուստր կազմակերպությունների, արժեթղթերի հետ կապված հաշվարկներին:

Կրեդիտորական պարտքերի դերը շրջանառու միջոցների աճի հարցում գործնականում էական է: Թե այն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ վարկային միջոցներից օգտվող ձեռնարկության սեփական միջոցների շահութաբերության վրա, ցույց են տալիս ստորև կատարվող հաշվարկները: Մեր ձեռնարկության համար հաշվեկշռի կազմը ներկայացնենք հետևյալ կտրվածքով՝

Աղյուսակ 8.3.3

Կազմակերպության պասիվների կազմը

Սեփական աղբյուրներ	10.000 հազ. դր
Փոխառու աղբյուրներ որից՝ - վարկեր - կրեդիտորական պարտքեր	12.000 հազ. դր. 10.000 հազ. դր. 2.000 հազ. դր.
Ընդամենը պասիվներ	22.000 հազ. դր.
Ակտիվ	22.000 հազ. դր.

Ընդունենք նաև, որ տնտեսական արդյունքները նույնն են. տնտեսական շահույթը՝ 6.000 հազ. դր., վարկային միջոցների ներգրավման ֆինանսական

ծախսերը՝ 2.000 հազ. դր. (10.000×20:100), տնտեսական շահութաբերությունը՝ 30%:

Հիշեցնենք, որ ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը, առանց կրեդիտորական պարտքերը հաշվի առնելու, կազմել է 8.0

$$\left[ՖԼԱ = 4/5(30 - 20.0) \times \frac{10.000}{10.000} \right]$$

Այժմ, ելնելով ձևավորված աղբյուրների կառուցվածքից, անհրաժեշտ է կատարել վերահաշվարկ՝ բանաձևի բոլոր տարրերի գծով: Արդյունքում, ակտիվների ընդհանուր տնտեսական շահութաբերությունը հարկ կլինի որոշել՝ ելնելով ակտիվների ընդհանուր գումարից, որը նախկինից ավելի է 2.000 հազ. դրամով: Շահույթի գումարը անփոփոխ մնալու պայմաններում տնտեսական շահութաբերության մակարդակը կիջնի.

$$ՏՇ = \frac{6.000 \times 100}{22.000} = 27,1$$

Զգալիորեն կպակասի նաև վարկի միջին հաշվարկային դրույքը: Կարելի է կազմել ներգրավված աղբյուրների գծով կատարված ֆինանսական ծախսերի հարաբերությունը ոչ միայն վարկերին, այլև ընդհանուր փոխառություններին.

$$ՎՄՀԴ = \frac{2.000 \times 100}{12.000} = 16,7$$

Այս երկու ցուցանիշների փոփոխությունները որոշակի անդրադարձ կունենան ֆինանսական լծակի արդյունավետության վրա: Ֆինանսական լծակի ուսը կբարձրանա և կհասնի 1,2-ի $\left[\frac{12.000}{10.000} \right]$: Ֆինանսական լծակի էֆեկտի մակարդակը, բնականաբար, կբարձրանա՝ 4/5(27,1 - 16,7) × 1,2 = 9,98: Ըստ էության, տեղի է ունենում դիֆերենցիալի և ֆինանսական լծակի ուսի միաժամանակյա բարձրացում, ինչը դրական է անդրադառնում ֆինանսական լծակի էֆեկտի վրա:

Ընդհանրացնելով վերը ասվածը, ֆինանսական կառավարման հարցերով զբաղվող ծառայության և վարկավորող բանկի առնչությամբ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը՝ բոլոր հանգամանքներում վարկերի ներգրավման (վարկ հատկացնելու) խնդիր լուծելիս, առկա պայմանները հաշվի առնելու պարագայում, ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը պարզելու համար ձեռնարկության պասիվների կազմից պետք է բացառել կրեդիտորական պարտքի գումարը:

Մինչև այժմ կատարված հաշվարկներն ու քննարկումները հանգեցնում են այնպիսի հետևության, որ ներդրումների շահագործման հետևանքով ստացվող զուտ արդյունքի և ֆինանսական լծակի ուժի արդյունավետության համար բացառիկ նշանակություն ունի միջոցների ձևավորման աղբյուրների կառուցվածքը: Սովորաբար, գործունեության մեջ ավանսավորվող կապիտալը ձևավորվում է բնույթով տարբեր մի շարք աղբյուրների հաշվին, որոնց մեջ առավել կարևոր դեր ու տեղ ունեն սեփական, փոխառու և ներգրավված միջոցները: Ընդհանուր առմամբ, դրանք դասակարգվում են ներքին ու արտաքին ֆինանսավորման:

Արդյունաբերական արտադրությունը, թողարկվող արտադրանքի ծավալը և ֆինանսական հետևանքները կախվածության մեջ են մի շարք գործոններից՝ տեխնիկական հագեցվածությունից և դրա վիճակից, աշխատուժից, կապիտալի շուկայից, արտադրության բնույթից, իրացման պայմաններից և այլն: Այդ և նմանատիպ բոլոր գործոնների միջև պետք է լինի փոխադարձ կապ և հավասարակշռություն: Հայաստանի պայմաններում արդյունաբերությունը, ամբողջությամբ վերցրած, կրում է որոշակի ֆինանսական դժվարություններ, միաժամանակ առկա է իրացման շուկայի սահմանափակվածությունը: Շուկայի տարողությունը բնութագրվում է ինչպես սպառողների գնողունակությունը ապահովող միջոցների գոյությամբ, այնպես էլ առաջարկվող գների մակարդակով: Բավարար գնողունակության պայմաններում որքան ցածր են գները, այնքան մեծ է շուկայի տարողությունը և, ընդհակառակը: Արտադրանքի էժանացումը միաժամանակ նշանակում է շուկայի ընդլայնում: Այդ խնդրի լուծման ուղիներից մեկը սերիական արտադրության կազմակերպումն է, որը ինքնարժեքի իջեցման միջոցով ընդլայնում է իրացման շուկան, իսկ դրա համար պահանջվում է լրացուցիչ կապիտալի ավանսավորում:

Բիզնեսը միշտ սկսվում է փողից, անընդհատ պահանջում է նորանոր միջոցներ և նպատակ է հետապնդում դրանք բազմապատկելու: Ի վերջո, գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորման և ցանկալի մեծության եկամուտներ ստանալու համար ձեռնարկությունը պետք է ունենա միջոցների աղբյուրների ռացիոնալ կառուցվածք, ինչը սերտորեն կապված է նաև վարվող դիվիդենտային քաղաքականության հետ: Միջոցների աղբյուրների անհրաժեշտ կառուցվածքի բնորոշման և խելամիտ դիվիդենտային քաղաքականության մշակման միջև կապը դրսևորվում է նրանով, որ սեփական միջոցների զուտ շահութաբերության բավականաչափ բարձր մակարդակ ձեռք բերելը և դիվիդենտների մեծությունը կախված են միջոցների աղբյուրների կառուցվածքից, որն էլ իր հերթին կախված է սեփական միջոցների զուտ շահութաբերությունից և դիվիդենտների համար բաշխվող շահույթի հանդեպ սահմանված նորմաներից: Կասկածից վեր է, որ սեփական միջոցների բարձր շահութաբերությունը հնարավորություն է ընձեռում ավելի շատ չբաշխված շահույթ ունենալ արտադրության ընդլայնման, հետևաբար և սեփական միջոցների աճի համար: Այսպիսով, արտաքին՝ վարկերի, ակցիաների էմիսիայի և ներքին՝ չբաշխված շահույթի հաշվին կատարվող ֆինանսավորումները իրար հետ սերտորեն կապված են: Իհարկե դա չի նշանակում, թե դրանք կարող են իրար փոխարինել: Գործնականում պարտքային պարտավորություններով միջոցների ներգրավումը ոչ մի դեպքում չպետք է անտեսի, առավել ևս սահմանափակի սեփական միջոցների ներգրավումն ու օգտագործումը: Միայն սեփական աղբյուրների բավականաչափ խոշոր ծավալի առկայության դեպքում են հնարավոր ձեռնարկության իրական զարգացումն ու նրա անկախության ամրապնդումը, ինչպես նաև բաժնետերերի կողմից ձեռնարկության հետ կապված ռիսկերը կիսելու իրողությունը, գործընկերների, մատակարարների, գնորդների և կրեդիտորների վստահությունը վայելելը:

Գործնական կյանքում փոխառու աղբյուր հատկացնող բանկային հիմնարկը, քննարկելով իրեն դիմած ձեռնարկության հաշվեկշիռը, առաջին հերթին ուշադրություն է դարձնում սեփական և փոխառու աղբյուրների հարաբերակցությանը:

Հստակորեն իմանալով, որ կրիտիկական վիճակում վարկի ապահովվածության համար հիմք կարող են հանդիսանալ միայն սեփական միջոցները, բավականաչափ սեփական միջոցներ ունենալու պայմաններում ֆինանսական լծակի ուսի ավելացումը կարող է չուղեկցվել դիֆերենցիալի նկատելի իջեցմամբ:

Սեփական աղբյուրների դերի նման գնահատականը ոչ մի դեպքում չպետք է նսեմացնի փոխառու աղբյուրների նշանակությունը ձեռնարկության համար: Արևմտյան երկրների պրակտիկայում ընդունված է ձեռնարկությունների պասիվի կառուցվածքում վարկերի բաժինը պահել մինչև 40% մակարդակի վրա, որին համապատասխանում է ֆինանսական լծակի ուսի 067 ցուցանիշը: Այս դեպքում, սովորաբար, ֆինանսական շուկայում տվյալ ձեռնարկության ակցիաները ստանում են առավելագույն գնահատական (կուրս):

Ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների մեջ ավանսավորված միջոցների կազմի և կառուցվածքի խնդիրների, դրանց ռացիոնալ կառուցվածքի ձևավորման ուսումնասիրությունն ու տարբերակի ընտրությունը բխում են նրանից, որ գտնվի սեփական ու փոխառու միջոցների այնպիսի հարաբերակցություն, որի պայմաններում ձեռնարկության բաժնետոմսերն ունենան առավելագույն արժեք: Դա իր հերթին հնարավոր է դառնում ֆինանսական լծակի արդյունավետության բավականաչափ, բայց ոչ չափազանց բարձր մակարդակի պայմաններում: Սովորաբար, գործարար աշխարհում պարտքերի մակարդակը ներդրողների համար դիտվում է որպես զգայուն ինդիկատոր ձեռնարկության բարեկեցությունը գնահատելու համար: Փոխառու աղբյուրների չափազանց մեծ տեսակարար կշիռը սնանկացման մեծ ռիսկի կրողն է: Հակառակ պարագայում, երբ դրանց բաժինը պասիվներում շատ ցածր է, սնանկացման ռիսկը խիստ նվազում է, սակայն ներդրողների շրջանում տպավորություն է ստեղծվում, թե ձեռնարկությունը ակտիվություն չի դրսևորում առավելագույն շահույթ ապահովելու համար և ստանալով դիվիդենտի համեստ գումար՝ ձգտում է բաժնետոմսերի արագ իրացման, ինչը իրականում իջեցնում է ձեռնարկության արժեքը:

Ըստ գործարարության միջազգային փորձի՝ հասուն, երկարատև գործունեություն ծավալած ֆիրմաների և ընկերությունների պարագայում, արժեթղթերի նոր թողարկումները ներդրողների կողմից գնահատվում են որպես նեգատիվ ազդանշան, իսկ փոխառու միջոցների ներգրավումը՝ որպես բարենպաստ կամ չեզոք:

Գործնականում գոյություն ունի ձեռնարկությունների արտաքին ֆինանսավորման չորս եղանակ՝

- բաժնետոմսերի փակ բաժանորդագրություն,
- վարկերի և փոխառությունների ձևով միջոցների ներգրավում,
- բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն,
- նշված երեք եղանակների համակցություն:

Առաջին դեպքում, սովորաբար, բաժանորդագրությունը իրականացվում է նախկին ներդրողների միջև, որպես կանոն, շուկայական կուրսից ցածր գներով, և ձեռնարկությունը կորուստ է կրում: Եթե այդ եղանակը ընդունելի չի համարվում նախկին ներդրողների չցանկանալու կամ միջոցների անբավարարության պատճառով, ընտրությունը կատարվում է երկրորդի և երրորդի միջև, որպես չափանիշ համարելով ձեռնարկության նկատմամբ վերահսկողությունը կորցնելու ռիսկը նվազագույնի հասցնելը: Բոլոր չորս եղանակներն էլ ունեն դրական ու բացասական կողմեր: Օրինակ՝ արժեթղթերի փակ բաժանորդագրության դեպքում

դրական է, որ ձեռնարկության նկատմամբ վերահսկողությունը պահպանվում է, ֆինանսական ռիսկը էականորեն չի ավելանում: Սակայն ֆինանսավորման ծավալը սահմանափակ է, միջոցների ներգրավման արժեքը բարձր է շուկայական կուրսից:

Վարկային պարտավորությունների ձևով ֆինանսավորման դեպքում ևս դրական է այն, որ վերահսկողությունը պահպանվում է, ներգրավվող միջոցների արժեքը հարաբերականորեն ցածր է, բայց աճում է ֆինանսական ռիսկը, վերադարձման (փոխհատուցման) ժամկետները սահմանափակված են:

Բաց բաժանորդագրության պայմաններում ֆինանսական ռիսկը չի աճում, հնարավոր է չսահմանափակվող ժամկետներով խոշոր միջոցների ներգրավում: Դրա կողքին հնարավոր են ձեռնարկության նկատմամբ վերահսկողության թուլացում կամ կորուստ, ներգրավվող միջոցների բարձր արժեք:

Համակցված եղանակի դեպքում կարող են դրսևորվել առաջին երեքի թերություններն ու առավելությունները այն մասշտաբով ու չափերով, ինչպիսին դրանց բաժինն է ընդհանուր ներգրավումների մեջ:

Ընդհանրացնելով ասվածը, կարելի է կատարել հետևություն միջոցների ներգրավման նպատակահարմարության մասին՝

1. Այն դեպքում, երբ ներդրումների շահագործման զուտ արդյունքը միավոր արժեթղթի հաշվով մեծ չէ, իսկ ֆինանսական լծակի դիֆերենցիալը բացասական է, սեփական միջոցների շահութաբերությունն ու դիվիդենտների մակարդակը՝ ցածր, ավելի նպատակահարմար է բաժնետոմսեր թողարկելու ճանապարհով ավելացնել սեփական միջոցները, քան օգտվել վարկերից.
2. Երբ ներդրումների շահագործման զուտ արդյունքը յուրաքանչյուր միավոր արժեթղթի հաշվով մեծ է, իսկ այդ ընթացքում ֆինանսական լծակի դիֆերենցիալը ավելի հաճախ դրական է, սեփական միջոցների զուտ շահութաբերությունն ու դիվիդենտները բարձր են, ապա ավելի նպատակահարմար է վարկերից օգտվելը, քան սեփական միջոցների ավելացումը:

Բերված երկու կանոնները գործում են սեփական միջոցների զուտ շահութաբերության, պասիվների այս կամ այն կառուցվածքի պայմաններում միավոր բաժնետոմսին բաժին ընկնող զուտ շահույթի համեմատական վերլուծության և ներդրումների շահագործման կրիտիկական (շեմային) զուտ արդյունքի հաշվարկների շրջանակներում:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է արտադրական կազմակերպության ֆինանսների բովանդակությունը, ի՞նչ դրամական հարաբերություններ է ներառում:
2. Որո՞նք են ձեռնարկության ֆինանսների ֆունկցիաները, դրանց օբյեկտը և ոլորտը:

3. Ինչպիսի՞ դրամական ֆոնդեր են ստեղծվում և ֆինանսական ռեսուրսներ ձևավորվում արտադրական կազմակերպություններում:
4. Որո՞նք են առևտրային հաշվարկով գործող կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման սկզբունքները:
5. Ո՞րն է կազմակերպության պասիվների բովանդակությունը և ի՞նչ աղբյուրներով է համալրվում:
6. Ի՞նչ կապ կա ակտիվների ձևավորման աղբյուրների կառուցվածքի և սեփական ակտիվների շահութաբերության միջև:
7. Ի՞նչ է նշանակում ֆինանսական լծակ, դրա ուժը ինչով է պայմանավորված և ինչպե՞ս կարելի է կառավարել:

Գ Լ Ո Ւ Խ 9

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ

9.1. ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ցանկացած բնույթի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ձեռնարկությունները անվերապահորեն կատարում են դրամական ծախսեր: Դրանց բնույթը, կազմը ու կառուցվածքը կախված է բազմաթիվ գործոններից: Մասնավորապես կարևոր դեր են կատարում տնտեսավարման կազմակերպա-իրավական ձևը, ճյուղային պատկանելիությունը, ապրանքների ու կապիտալի շուկայում տնտեսավարող սուբյեկտների գրաված դիրքը, ներդրումային, ֆինանսական ու հաշվարկային քաղաքականությունը, ինչպես նաև օրենսդրորեն հարկային, վարկային, ապահովագրական և ֆոնդային ոլորտներում սահմանված կանոններն ու սկզբունքները:

Ըստ տնտեսական բովանդակության բոլոր դրամական ծախսերը կարող են բաժանվել երեք խմբի՝ ծախսումներ, որոնք կապված են շահույթ կորզելու հետ, շահույթ կորզելու նպատակ չհետապնդող ծախսումներ, հարկադիր ծախսեր:

1. Շահույթ կորզելու նպատակին ծառայող ծախսերը ներառում են արտադրության սպասարկող անձնակազմի, արտադրանքի իրացման, աշխատանքի կատարման, ծառայությունների մատուցման, ներդրումային ծախսերը:

2. Շահույթ կորզելու նպատակին չվերաբերող ծախսեր են սպառողական, բարեգործական ու հումանիտար բնույթի ծախսերը: Դրան կարելի է վերագրել ձեռնարկության աշխատողների խրախուսական վճարները, ոչ պետական ապահովագրական ֆոնդերին հատկացումները, սոցիալ-մշակույթային ոլորտի զարգացման ծախսերը:

3. Հարկադիր ծախսեր են հարկերը և հարկային վճարումները, պետական արտաբյուջետային ֆոնդերին հատկացումները, պարտադիր ապահովագրության, պահուստների ստեղծման, տուժ-տուգանքների ծախսերը:

Անմիջականորեն շահույթի ստացման խնդրի հետ կապված ծախսումները կազմված են նյութական ծախսերից, աշխատավարձից, վերադիր ծախսերից ու ներդրումներից:

Նյութական ծախսերը ընդգրկում են հումքի, հիմնական նյութերի, գնովի կիսաֆաբրիկատների, վառելիքի ու էներգիայի ձեռք բերման դիմաց վճարումները, տարայի, պահեստամասերի, արագամաշ առարկաների, արտադրական բնույթի ծառայությունների վրա կատարված ծախսերը: Սովորաբար ծախսերի տվյալ խմբերը ձեռնարկության ընդհանուր ծախսումների մեջ ունեն բարձր տեսակարար կշիռ: Դրանց կառուցվածքը էապես պայմանավորված է ճյուղային պատկանելիությամբ՝ Օրինակ, նյութատար ճյուղերում և շինարարությունում հիմնական ծանրությունն ընկնում է հումքի և նյութերի գնումների վրա , տրանսպորտում՝ վառելիքի ու պահեստամասերի վրա: Այս խմբի ծախսերի ձևավորումը և ծավալը ուղղակիորեն կապված են շահույթի հետ, դրանց մակարդակով է պայմանավորված ձեռնարկության կայունությունն ու դիրքը շուկայում, արտադրանքի մրցունակությունը:

Նյութական ծախսերի փոխհատուցման համար ձեռնարկությունները պարտավոր են կատարել երկու պայման՝

1. արտադրանքը պետք է իրացվի,
2. արտադրանքի իրացումից հասույթը պետք է ժամանակին մուտք լինի ձեռնարկության դրամական հաշիվներին:

Նյութական ծախսերի որոշման հիմքը դրանց ձեռք բերման գինն է, առանց անուղղակի հարկերը հաշվի առնելու: Նյութական արժեքների հաշիվ վճարման պահանջագրում / հարկայն հաշվում/ արտացոլված ձեռք բերման գինը կազմում է դրանց ելակետային ինքնարժեքը: Դրան գումարվում են փոխադրա-մթերման և պահպանման ծախսերը:

Աշխատանքի վարձատրության ծախսերը իրենցից ներկայացնում են ձեռնարկության աշխատողների դրամական և բնամթերային վճարումների ամբողջությունը: Ծախսերի այս խումբը բազմաշերտ է: Դրա մեջ մտնում են աշխատանքի վարձատրության ֆոնդը ձևավորող բոլոր ծախսերը, նյութական օգնությունը, պարգևավճարները, լրացուցիչ արձակուրդի համար վճարումները, միանվագ նպաստները, փոխհատուցման և այլ վճարները:

Վերադիր ծախսերի խումբը վերաբերում է վարչա-կառավարչական, կապալի, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի, օժանդակ արտադրության վրա կատարվող ծախսերին:

Ինվեստիցիաները ներառում են սեփական արտադրության ծավալը ընդլայնելու, ֆինանսական շուկայում շահույթ ստանալու նպատակով կատարվող կապիտալ ներդրումները: Դրանց բնույթը և կառուցվածքը կախված են ձեռնարկության որդեգրած կապիտալ ներդրումների քաղաքականությունից:

9.2. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Առևտրական հաշվարկով գործող բոլոր արտադրական ձեռնարկությունների դրամական կուտակումների և, հատկապես, շահույթի ձևավորման գլխավոր աղբյուրը արտադրանքի իրացումից ստացվող հասույթն է: Ավելի կոնկրետ, հասույթի այն մասը, որը մնում է տվյալ իրացման վրա կատարված նյութական, աշխատանքային և դրամական ծախսերը փոխհատուցելուց հետո: Այդ կապակցությամբ, տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտի կարևորագույն խնդիրներից մեկն է առավելագույն փոքր ծախսումներով ավելի մեծ գումարի շահույթի ստացումը:

Արտադրանքի արտադրության ու իրացման վրա կատարվող ծախսումներն են որոշում ինքնարժեքի մակարդակն ու կառուցվածքը:

Ձեռնարկությունները ըստ ամենայնի շահագրգռված են շուկայական պահանջարկ ունեցող համապատասխան կառուցվածքի բարձրորակ արտադրանքի արտադրության ու իրացման գործում, ինչը անդրադառնում է շահույթի մեծության վրա, որը այլ հավասար պայմաններում ուղղակի կախվածության մեջ է այդ արտադրանքի իրացման ծավալից:

Որպես զուտ եկամտի հիմնական մասի դրամական արտահայտություն, շահույթը իրենից ներկայացնում է համապատասխան գներով արտադրանքի իրացումից զուտ հասույթի և նրա լրիվ ինքնարժեքի տարբերությունը: Բնականաբար,

շահույթի ծավալի աճը առաջին հերթին կախվածության մեջ է արտադրության ծախսումների կրճատումից և իրացման ծավալների ընդլայնումից:

Ինչպես նշվեց, արտադրանքի արտադրության ու իրացման ծախսերը, որոնք ձևավորում են ինքնարժեքը, բազմազան են ու բնույթով տարբեր: Դրանք կազմված են արտադրության համար օգտագործվող բնական ռեսուրսների, հումքի, հիմնական և օժանդակ նյութերի, վառելիքի, էներգիայի արժեքից, հիմնական ֆոնդերի մաշվածքի, աշխատանքային, շահագործման այլ ծախսերի մեծությունից, ինչպես նաև արտաարտադրական (կոմերցիոն) ծախսերից:

Արտադրության ծախսումների կազմն ու կառուցվածքը պայմանավորված են արտադրանքի բնույթով, արտադրության պայմաններով, նյութական ու աշխատանքային ծախսումների հարաբերակցությամբ և այլ նորմաներով:

Իրենց տնտեսական բովանդակությամբ և արտադրությանն ու իրացմանը մասնակցելու առանձնահատկություններով արտադրության ծախսերը ընդունված է ամփոփել հինգ խմբերում՝ նյութական ծախսեր, աշխատանքի վարձատրության ծախսեր, հատկացումներ սոցիալական կարիքներին, հիմնական ֆոնդերի (ոչ ընթացիկ ակտիվների) մաշվածք և այլ ծախսումներ:

Նյութական ծախսումների խումբը ամենաբազմազանն ու ծավալունն է: Ներառում է գնովի հումքն ու նյութերը. դրանց վերաբերում են հիմնական և օժանդակ նյութերը, կոմպլեկտավորող իրերն ու կիսաֆաբրիկատները, բոլոր տեսակի վառելիքը, տարան, վերանորոգման պահեստամասերը, արագամաշ առարկաները, էներգիայի բոլոր տեսակները և այլն:

Այս խմբում արտացոլվող նյութական ռեսուրսների արժեքը ձևավորվում է դրանց ձեռք բերման գներից, առանց ավելացված արժեքից հարկի, վերադիրներից և կոմիսիոն վճարներից, ինչպես նաև ապրանքային բորսաներին, բրոքերներին, մաքսային ծառայություններին վճարումներից և կողմնակի կազմակերպություններին փոխադրման, պահպանման և այլ ծախսերից:

«Աշխատանքի վարձատրության ծախսերը» բավականաչափ բազմազան են: Այստեղ ներառվում են աշխատավարձի վճարումները՝ ըստ վարձատրության համակարգի, պարգևատրային ընդունված ձևերի, փոխհատուցման բնույթի վճարումները, անվճար սննդի, կոմունալ-բնակարանային ծառայությունների, արտահագուստի, արձակուրդի փոխհատուցման և բազմաթիվ այլ ծախսեր:

Պետք է նկատի ունենալ, որ ձեռնարկության աշխատողներին տրվող բոլոր վճարումները ներառվում են արտադրանքի ինքնարժեքի մեջ, բացառությամբ աշխատանքի վարձատրության այն ծախսերի, որոնք պարգևների, նյութական օգնության, կանանց լրացուցիչ արձակուրդի, ուղեգրերի և որոշ այլ վճարների գծով տրվում են հատուկ ֆոնդերի և նպատակային ստացումների հաշվին:

Արտադրության ու իրացման ծախսերի մեջ մտնող հաջորդ ծախսային խումբը սոցիալական կարիքների համար հատկացումներն են՝ վճարումները պետական սոցիալական ապահովագրության, կենսաթոշակային, զբաղվածության, ապագայում նաև պարտադիր բժշկական ապահովագրության ֆոնդերին:

Այդ հատկացումների չափերը որոշվում են ինքնարժեքի մեջ ներառվող աշխատավարձի ֆոնդի նկատմամբ սահմանված նորմատիվներով:

Արտադրանքի ինքնարժեքին վերաբերող ծախսերի մեջ բավականաչափ մեծ են ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի հետ կապված ամորտիզացիայի հատկացումները: Ըստ օգտակար շահագործման տարիների, այդ ծախսերի մեծությունը

կարող է ունենալ տարբեր արտահայտություն՝ կախված մաշվածքի հաշվարկման համար կիրառվող եղանակներից:

Շատ ավելի բազմազան են արտադրության ինքնարժեքի մեջ մտնող ծախսերի հինգերորդ՝ «Այլ ծախսումները»: Նախևառաջ այդ խմբին են վերաբերում հարկերի և տուրքերի որոշ տեսակներ, արտադրական ֆոնդերին վերաբերող գույքի և աշխատավորների առանձին կատեգորիաների պարտադիր ապահովագրության, հայտնագործությունների և գյուտերի, ռացիոնալիզատորական մշակումների, գործուղումների, հակահրդեհային և պահակային ապահովության, կադրերի պատրաստման և վերապատրաստման, ստացված վարկերի դիմաց վճարվող տոկոսային, վարձակալության, ոչ նյութական ակտիվների մաշվածքի հետ կապված և որոշ այլ ծախսեր:

Ֆինանսական կառավարման գործում շահույթի մաքսիմալացման և աճի տեմպերի արագացման հարցում ընդունվում է երկու մոտեցում:

Շահույթի ծավալի մաքսիմալացման խնդիրը լուծելու համար առավել արդյունավետ է արտադրանքի իրացումից հասույթի համադրումը սահմանային ծախսումների հետ: Այդ նպատակով արտադրության ու իրացման ծախսերի դասակարգումը իրականացվում է ըստ արտադրության ծավալից կախվածության հատկանիշի: Տվյալ մոտեցման պայմաններում ձեռնարկության ընդհանուր ծախսումների մեծությունը՝ ինչպես արտադրական, այնպես էլ արտաարտադրական, անկախ այն հանգամանքից, թե դրանք մասնակցում են ինքնարժեքի ձևավորմանը, թե ֆինանսական արդյունքների գոյացմանը, ստորաբաժանվում է երեք խմբի.

1. Փոփոխուն (կամ համամասնական) ծախսումների, որոնք ավելանում կամ պակասում են արտադրության ծավալին համամասնորեն: Տեսականորեն դրանք գլխավորապես վերաբերում են հումքի և նյութերի ծախսին (գնումներին), էլեկտրաէներգիայի սպառմանը, տրանսպորտային, առևտրակոմիսիոն և այլ ծախսումներին, ինչպես նաև հիմնական աշխատավարձին, սոցիալական հատկացումներին և այլն:

Ձեռնարկչատիրության պրակտիկայում իրացումից հասույթի և փոփոխուն ծախսերի տարբերությունը կարող է դրսևորվել ավելի մեղմ ձևով՝ ծախսերը արտադրության աճի տեմպերի համեմատ երբեմն համամասնորեն չավելանալու պատճառով: Օրինակ, հումքի գնումների ծավալը նկատելիորեն մեծանալու դեպքում մատակարարները հաճախ ձեռնարկության նկատմամբ կիրառում են գնային զեղչեր, արդյունքում՝ արժեքային արտահայտությամբ հումքի ծախսերը աճում են արտադրության ավելացման տեմպերից պակաս չափերով:

2. Հաստատուն (ոչ համամասնական կամ հաստատագրված) ծախսումներ, որպիսիք արտադրության ու իրացման ծավալի աճի տեմպերին անմիջականորեն չեն հետևում: Այդպիսի ծախսեր են ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը (ամորտիզացիան), վարկային տոկոսների գումարը, վարչակառավարչական ապարատի պահպանման ծախսերը և այլն:

Հաստատուն ծախսերը կախված չեն արտադրանքի իրացումից ստացվող հասույթից այնքան ժամանակ, քանի դեռ արտադրության հետագա աճի շահերը չեն պահանջում արտադրական կարողությունների ընդլայնում, աշխատողների և կառավարման ապարատի անձնակազմի ավելացում: Ի տարբերություն փոփոխունի, հաստատուն ծախսերի մեծ մասը, արտադրության ծավալները

փոքրանալու պայմաններում, այնքան էլ հեշտությամբ հնարավոր չէ կրճատել: Իրականում, գործունեության ծավալները կրճատվելու պայմաններում, ձեռնարկությունները ստիպված են ամորտիզացիա հաշվարկել նախկին չափերով, տոկոսներ վճարել նախկինում ստացված վարկերի դիմաց, պահել վարչակառավարչական ապարատ և հաշվարկել աշխատավարձ, իրականացնել սպասարկման ծախսեր, քանի որ այդ անձնակազմը միանգամից կրճատել հնարավոր չէ:

Բացի դա, առանձին ծախսեր մի ձեռնարկության համար կարող են համարվել փոփոխուն, մյուսների համար՝ հաստատուն: Ավելի ստույգ՝ աշխատանքի վարձատրության գործավարձային ձևի դեպքում աշխատավարձը փոփոխուն ծախս է, իսկ կայուն դրույքի դեպքում՝ հաստատուն:

3. Խառը ծախսեր, որոնք միաժամանակ պարունակում են հաստատուն և փոփոխուն տարրեր: Նման ծախսերի օրինակ կարող են հանդիսանալ փոստ-հեռագրային, ընթացիկ վերանորոգման, գործուղումների և այլ ծախսերը: Ընդհանուր հաշվարկներ կատարելիս դրանք կարելի է անտեսել: Իսկ կոնկրետ խնդիրներ պարզելիս, եթե պահանջվում է որոշակի ճշգրտություն, հարկ է լինում դրանցում որոշել փոփոխունի և հաստատունի բաժինը և համամասնորեն հաշվի առնել խմբերում:

Ուսումնասիրվող խնդիրը չբարդացնելու նպատակով կարելի է նաև վերացարկման միջոցով բացառել ավելացված արժեքի հարկը և միանգամից ելակետ ընդունել զուտ հասույթը և շահութահարկը:

Ի՞նչ նպատակ է հետապնդում ծախսերի նման դասակարգումը: Իրացումից հասույթի համադրումը գումարային, ինչպես նաև փոփոխուն և հաստատուն ծախսերի հետ, օգտագործվում է շահույթի մաքսիմալացման և նրա աճի առավել բարձր տեմպ ապահովելու հաշվարկներում: Այս առումով էլ ծախսումների նման դասակարգումը օգնում է շահույթի մաքսիմալացման և աճի առավել բարձր տեմպերի ապահովման խնդրի լուծմանը, կապված դրանց հարաբերական կրճատման հետ: Բացի այդ, այդպիսի դասակարգումը հնարավորություն է ստեղծում պատկերացում կազմել ծախսերի փոխհատուցելիության և ձեռնարկության ֆինանսական կայունության պաշարի մասին, շուկայական պայմանների վատացման և այլ դժվարությունների հարուցած բարդություններին դիմակայելու համար:

Գրաֆիկորեն տվյալ արտադրական ծրագրի ծավալի պայմաններում փոփոխուն գումարային ծախսերի վարքը դրսևորվում է հորիզոնական առանցքի նկատմամբ որոշակի թեքություն ունեցող ուղիղ գծի տեսքով և կախվածության մեջ է միավոր արտադրանքի վրա փոփոխուն ծախսերի մեծությունից: Որքան թեքման անկյունը փոքր է, այնքան բիզնեսի համար պայմանները նպաստավոր են:

Հաստատուն ծախսերը բոլոր այն ժամանակահատվածներում (արտադրական ծրագրի ծավալից կախված), երբ չի պահանջվում դրանց ավելացման թռիչք, արտահայտվում են հորիզոնական գծի տեսքով: Օրինակ, նշված ծախսերն ընդունենք՝ 12000 հազ. դրամ: Այդ գումարը արտադրության ծավալի որոշակի սահմաններում աճի կամ նվազման դեպքում կմնա հաստատուն, սակայն կփոխվի միավոր արտադրանքի վրա նման ծախսերի հարաբերական մեծությունը:

Խառը ծախսերը, ինչպես ասվեց, ներառում են փոփոխունի և հաստատունի տարրեր: Այդպիսիք են, մասնավորապես, էլեկտրաէներգիայի ծախսը, որը

օգտագործվում է ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ ընդհանուր կարիքների համար, կայուն դրույք ունեցող վաճառողների աշխատավարձը և այլն: Վերլուծություն կատարելիս դրանք հարկավոր է սկզբնական հաշվառման տվյալներով տարանջատել:

Փոփոխուն և հաստատուն ծախսերի մեջ խառը տարանջատված ծախսերը հաշվի առնելով՝ ստացվում է նախատեսված արտադրական ծրագրի ընդհանուր արժեքը (ինքնարժեքը): Այդ երկու խմբերի՝ արտադրական ծրագրի ծավալային փոփոխության հետ կապված վարքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հաստատուն և փոփոխուն ծախսերը, միավոր արտադրանքի հաշվով, անփոփոխ (կայուն) են միայն որոշակի ժամանակի ընթացքում, արտադրության ու իրացման համապատասխան ծավալների դեպքում:

Այժմ կոնկրետ հաշվարկներով ցույց տանք փոփոխուն և հաստատուն ծախսերի վարքագիծը արտադրության ու իրացման ծավալների փոփոխության դեպքում:

Ընդունենք, որ հաստատուն ծախսերի 12 մլն ծավալը անփոփոխ է մնում արտադրանքի 0-4 հազար միավոր արտադրության ու իրացման սահմաններում: Երբ արտադրության ծավալը մեծանում է, գումարային փոփոխուն ծախսերը աճում են միավորի հաշվով, ծախսը մնում է նույնը՝ անփոփոխ: Ծավալը նվազելու դեպքում գումարայինը պակասում է, միավորինը՝ մնում նույնը: Այդ ընթացքում հաստատուն ծախսերը դրսևորում են հետևյալ վարքագիծը: Արտադրության ծավալի մեծանալու դեպքում գումարայինը մնում է անփոփոխ, միավորի հաշվով՝ նվազում է: Կրճատվելու դեպքում գումարայինը չի փոխվում, միավորի հաշվով՝ աճում է:

Ընդունենք նաև, որ արտադրանքի թողարկման 0-4 դիապազոնի սահմաններում, երբ հաստատուն ծախսերը էական փոփոխության չեն ենթարկվում, պլանավորված է թողարկել 2 հազար միավոր արտադրանք՝ նախատեսելով 12000 հազ. հաստատուն և 28000 հազ. փոփոխուն ծախսեր: Միավորի հաշվով, հաստատուն ծախսերը կազմում են 6000 (12 մլն/2 հազ.), իսկ փոփոխուն ծախսերը՝ 14000 (28 մլն/2 հազ.): Եթե հաջորդ ժամանակաշրջանի համար նախատեսվել է 4000 միավոր արտադրանք, կամ փաստացի թողարկվել է այդքան, ապա փոփոխուն ծախսերի ընդհանուր գումարը կհասնի 56000 հազ. դրամի, միավորի հաշվով դարձյալ մնալով 14000, իսկ հաստատուն ծախսերը կմնան 12000 հազ., բայց միավոր արտադրանքի հաշվով կպակասեն կրկնակի և կկազմեն 3000 դրամ:

Ծախսերի վարքագծի նման փոփոխությունը ֆինանսական պլանավորման ժամանակ պետք է անպայման հաշվի առնել. դա անտեսելը բիզնեսի համար կարող է ճակատագրական լինել:

9.3. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԼԾԱԿ, ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԵՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՇԱՐ

Ձեռնարկությունների և ֆիրմաների ֆինանսական պլանավորման առավել արդյունավետ մոտեցումներից մեկը գործառնական վերլուծությունն է, որը այլ կերպ կոչվում է «ծախսեր-ծավալ-շահույթ» վերլուծություն, ինչը բացահայտում է բիզնեսի հետևանքների կապը արտադրության ծախքերի և ծավալների հետ: Այդ վերլուծությունը պարզաբանում է ձեռնարկության դրամական շրջապտույտի բոլոր փուլերում ֆինանսական կառավարողի առջև ծառացող հարցերը: Գործառնական վերլուծության համար ի վերջո հանգուցային են գործառնական լծակի, ֆինանսական կայունության պաշարի և շահութաբերության շեմի հարցերը, որոնք, ի տարբերություն արտաքին վերլուծության, ձեռնարկության համար առևտրային գաղտնիք են: Միաժամանակ, գործառնական վերլուծությունը կառավարչական հաշվառման բաղկացուցիչ մասն է:

Կոնկրետ ժամանակաշրջանում, սովորաբար մեկ տարում, ձեռնարկության մասշտաբով ձևավորվող հասույթը (կանխիկ և անկանխիկ դրամական զանգվածը) իր վրա է կրում արժեթղթերի, ներդրողների, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի փոփոխության ազդեցությունը: Մյուս կողմից, այդ հասույթի հաշվին ծածկվում են աշխատավարձի, հումքի և նյութերի, փոփոխուն վերադիր և հիմնական միջոցների (ոչ ընթացիկ ակտիվների) մաշվածքի ծախսերը (բոլորը միասին՝ գործառնական լծակ), վճարվում են հարկերը, և մնում է տնտեսական արդյունքը:

Ձեռնարկչատիրական գործունեության ընթացքում գործառնական (արտադրական, տնտեսական) լծակի գործողությունը արտահայտվում է այն բանում, որ արտադրության ու իրացումից հասույթի ցանկացած փոփոխություն ուղեկցվում է շահույթի ավելի արագ փոփոխությամբ:

Գործողությունը ցույց տալու համար վերցնենք հետևյալ օրինակը: Համարենք, որ կոշիկի արտադրության ձեռնարկությունում արտադրանքի իրացումից հասույթը առաջին տարում 40000 հազ. դրամ է: Արտադրության ընդհանուր ծախսերը կազմել են 36000 հազ. դրամ, որից փոփոխունը՝ 30000 հազ., հաստատունը՝ 6 հազ.:

Նշանակում է՝ շահույթը կազմել է 4000 հազ. դրամ (40000-36000): Պատկերացնենք, թե հասույթը աճում և հասնում է 46000 հազ. դրամի (15%): Նույնպիսի տեմպերով՝ 15%-ով կավելանան փոփոխուն ծախսերը և կկազմեն 34500 հազ. դրամ (30000+4500): Հաստատուն ծախսերը փոփոխություն չեն կրում և մնում են 6000 հազ. դրամի մակարդակին: Գումարային ծախսերը այդ փոփոխությունների արդյունքում կհավասարվեն 40500 հազ. դրամի (34500+6000), իսկ շահույթը նախկին 4000 հազարի փոխարեն կդառնա 5500 հազ. դրամ կամ, նախորդի համեմատությամբ, 37,5%-ով ավելի: Ստացվում է, որ իրացումից հասույթը ավելացել է ընդամենը 15%-ով, իսկ շահույթը՝ 37,5 տոկոսով:

Այս ամենի արմատները փոփոխուն և հաստատուն ծախսերի ծավալի և կառուցվածքի մեջ են, ուստի կարելի է մշակել այդ ծախսերի տնտեսման խելամիտ մոտեցումներ:

Լուծելով շահույթի աճի առավելագույն տեմպի ապահովման խնդիրը, կարող ենք օգտագործել ոչ միայն փոփոխուն, այլև հաստատուն ծախսերի ավելացման կամ պակասեցման հնարավորությունը և դրա արդյունքում որոշել շահույթի աճի տեմպը: Ընդունելով, որ փոփոխուն ծախսերը 15 տոկոսով ավելանալուն զուգընթաց 2 տոկոսով աճելու են նաև հաստատուն ծախսերը, կհամոզվենք, որ

շահույթի աճի տեմպը մասամբ կնվազի և կկազմի 34,5 տոկոս (հասույթ՝ 46000, փոփոխուն ծախսեր՝ 34500, հաստատուն ծախսեր՝ 6000+120, շահույթ՝ 5380, աճի տոկոս՝ 34,5%):

Ձեռնարկությունների ֆինանսական պլանավորման ժամանակ գործառնական լծակի ազդեցության ուժը որոշելու համար կատարվող պրակտիկ հաշվարկներում օգտագործվում է, այսպես կոչված, համախառն մարժայի հարաբերական հասկացությունը: Համախառն մարժայի մակարդակը իրենից ներկայացնում է իրացումից ստացված հասույթի և փոփոխուն ծախսերի տարբերության հարաբերությունը հասույթին: Համախառն մարժան իրացումից հասույթի և փոփոխուն ծախսերի տարբերությունն է: Այդ ցուցանիշը տնտեսագիտական գրականության մեջ կոչվում է ծածկման գումար: Նկատի է առնվում հաստատուն ծախսերի փոխհատուցումը՝ հասույթի հաշվին: Բոլոր դեպքերում, ձեռնարկության համար ցանկալի է մարժայի այնպիսի տարբերակ, որը ոչ միայն ծածկի հաստատուն ծախսերը, այլև ձևավորի որոշակի շահույթ:

Ասվածը հիմք ընդունելով՝ որոշվում է գործառնական լծակի ազդեցության ուժը, որը հավասար է համախառն մարժայի և շահույթի հարաբերությանը՝

$$ԳԼՈՒ = \frac{ՀՄ}{τ}:$$

Մեր կողմից ընդունված պայմանների դեպքում ձեռնարկության գործառնական լծակի ուժը կազմում է 2,5 [(40000-30000):4000]: Դա նշանակում է, որ իրացումից հասույթի հնարավոր 15% աճի պայմաններում շահույթը կավելանա 37,5 տոկոսով (2,5x15), հասույթը 8 տոկոսով պակասելու դեպքում շահույթը կնվազի 20 տոկոսով (2,5x8):

Շարունակության մեջ, եթե գործառնական լծակի ուժը մեկնաբանենք որպես համախառն մարժայի տոկոսային փոփոխություն, վաճառքից հասույթի ֆիզիկական ծավալի տվյալ տոկոսային փոփոխության պայմաններում, բերված բանաձևը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$$ԳԼՈՒ = \frac{Δ ՀՀ : Ր}{Δ Ք : Ք},$$

Ք-ն իրացման ֆիզիկական ծավալն է:

Գործառնական լծակի ազդեցության ուժի բանաձևը հնարավորություն է տալիս պարզել, թե համախառն մարժան, նույնն է թե՝ ինվեստիցիաների շահագործման նետտո արդյունքը, որքանով է զգայուն արտադրանքի իրացման ֆիզիկական ծավալի փոփոխության հանդեպ:

Երբ իրացումից հասույթը նվազում է, գործառնական լծակի ազդեցության ուժը մեծանում է: Հասույթի՝ ամեն մի տոկոսով պակասելը հանգեցնում է ավելի ու ավելի բարձր տոկոսով շահույթի իջեցման:

Հակառակ գործընթացի պայմաններում, երբ հասույթը սկսում է ավելանալ, իսկ շահութաբերության շեմը (ծախսերի ինքնափոխհատուցման կետը) հաղթահարվում է, գործառնական լծակի ուժը պակասում է, հասույթի ամեն մի տոկոս աճին հետևում է շահույթի ավելի ու ավելի պակաս տոկոսով ավելացում, միաժամանակ հաստատուն ծախսերի բաժինը նրանց ընդհանուր գումարի մեջ նվազում է:

Իրացումից հասույթի շահերից ելնելով կամ այլ տնտեսական պատճառներով, երբ հարկ է լինում հաստատուն ծախսերը որոշակիորեն ավելացնել, ձեռնարկու-

թյունը հարկադրաբար պետք է անցնի շահութաբերության նոր շեմ: Շահութաբերության շեմից մի փոքր անց, գործառնական լծակի ազդեցության ուժը կունենա առավելագույն մեծություն, ապա աստիճանաբար կթուլանա և այդպես կշարունակվի մինչև հաստատուն ծախսերի նոր թափով ավելանալը և շահութաբերության շեմի նորից հաղթահարումը:

Այդ ամենը, ի վերջո, դրական դեր կարող են ունենալ և օգտակար լինել ձեռնարկության ֆինանսական կառավարման համար: Կանխատեսվում են շահույթի տարեկան մեծությունը և շահութահարկի գումարը: Մշակվում է ձեռնարկության կոմերցիոն քաղաքականության հայեցակարգը: Հասույթի դինամիկայի հոռետեսական կանխատեսումների դեպքում չի կարելի հաստատուն ծախսերը ուռճացնել այնքան, որքան գործառնական լծակի ազդեցության հզոր ուժի հետևանքով շահույթի կորուստը հասույթի ամեն մի տոկոսով պակասեցման պայմաններում կարտահայտվի բազմակիորեն ավելի գումարով: Այնուհանդերձ, եթե ձեռնարկությունը համոզվածություն ունի, որ առաջիկայում իր արտադրանքի նկատմամբ շուկայական պահանջարկը բարձրանալու հետևանքով հնարավոր է ծավալները մեծացնել, այնքան էլ հետևողականություն պետք չէ հաստատուն ծախսերը տնտեսելու հարցում, քանի որ հաստատուն ծախսերի մեծ բաժինը ապահովում է շահույթի աճի բարձր տեմպ:

Այդ ամենը մեզ համոզում է, որ գործառնական լծակի ազդեցության ուժը արտահայտում է նաև ձեռնարկչատիրական գործունեության ռիսկի աստիճանը. գործնականում որքան մեծ է գործառնական լծակի ազդեցության ուժը, այնքան բարձր է ձեռնարկչատիրական ռիսկը: Սակայն ապացուցված է և ճշմարիտ, որ ով ռիսկի չի դիմում, նա հաջողության չի հասնում:

Հիմա, այդ ամենի հիման վրա, փորձենք որոշել ձեռնարկության ֆինանսական կայունության պաշարը, այլ կերպ՝ ապահովության սահմանը: Դրա համար նախապես անհրաժեշտ է իմանալ շահութաբերության շեմ հասկացության բովանդակությունը, այլ կերպ՝ կրիտիկական (վտանգավոր), «մեռյալ» կետերը, ինքնափոխհատուցման, բեկման կետը:

Շահութաբերության շեմը իրացումից հասույթի այնպիսի ծավալ է, որի առկայությամբ ձեռնարկությունը արդեն վնաս չի ունենա, բայց չի ունենա նաև շահույթ: Համախառն մարժան ճշգրտությամբ բավարարում է հաստատուն ծախսերը ծածկելուն, և շահույթը հավասարվում է զրոյի:

Աղյուսակ 9.3.1

Տվյալներ շահութաբերության շեմը որոշելու համար

N	Ցուցանիշներ	հազ. դրամ	տոկոսներով՝ հասույթի նկատմամբ
1.	իրացումից փաստացի հասույթը	40000	100 կամ 1
2.	փոփոխուն ծախսեր	30000	75 կամ 075
3.	համախառն մարժա	10000	25 կամ 025

4.	հաստատուն ծախսեր	6000	
5.	շահույթ	4000	

Համաձայն ընդունված կանոնների, շահույթը հավասար է համախառն մարժայի և հաստատուն ծախսերի տարբերությանը, հետևաբար, շահութաբերության շեմը որոշելիս այդ տարբերությունը պետք է հավասար լինի զրոյի: Կամ նույնն է, թե՝ շահույթը հավասար է շահութաբերության շեմի և համախառն մարժայի հարաբերական արտահայտության արտադրյալի ու հաստատուն ծախսերի տարբերությանը, որը տվյալ դեպքում պետք է հավասար լինի զրոյի.

Շ = ՇՇ×ՀՀՄ -Հծ = 0,

ՇՇ - շահութաբերության շեմ,

ՀՀՄ - համախառն հարաբերական մարժա:

Այստեղից բխում է, որ շահութաբերության շեմը հավասար է հաստատուն ծախսերի և համախառն հարաբերական մարժայի հարաբերությանը.

$$ՇՇ = \frac{Հծ}{ՀՀՄ}$$

Մեր օրինակում ձեռնարկության շահութաբերության շեմը կկազմի՝ 6000:025=24000,0 հազ. դրամ: Նշանակում է՝ իրացումից հասույթի մեծությունը 24000 հազ. դրամի հասնելու պահից սկսած ձեռնարկությունը վերջապես հասնում է և՛ փոփոխուն, և՛ հաստատուն ծախսերի փոխհատուցման: Ավելի մանրամասն արտահայտելու համար ընդունենք, որ հասույթի փաստացի մեծությունը արդյունք է հետևյալ բաղադրամասերի՝ միավոր արտադրանքի գինը՝ 8000 դրամ, իրացման ծավալը հատերով՝ 5000, հաստատուն ծախսերը՝ 6000 հազ., փոփոխուն ծախսերը՝ 30000 հազ. դրամ (միավորի հաշվով՝ 6000 դրամ):

Իրացումից հասույթը, որպես քանակի և միավորի գնի արտադրյալ, կազմում է 40000 հազ. դրամ (5000 x 8000):

Ուղղակի հաստատուն ծախսերը 6000 հազ. լինելու պայմաններում գումարային (հաստատուն և փոփոխուն) ծախսերի մեծությունը հավասար է հաստատուն ծախսերի և ընդհանուր քանակի ու միավորին ընկնող փոփոխուն ծախսերի արտադրյալի գումարին, մեր օրինակում՝ 6000 + 5000 × 6000 հազ. = 36000 հազ. դրամ:

Շահութաբերության շեմը, ըստ վերևում կատարված հաշվարկի, 24000 հազ. դրամ հասույթի գումարն է, որը համապատասխանում է 3000 միավորին: Նման քանակությունը ապահովում է հաստատուն և փոփոխուն ծախսերի լրիվ փոխհատուցում. 3001 միավոր իրացնելու պահից սկսած ձեռնարկությունը կստանա շահույթ: Իրոք՝

(3000 × 8000) - [(3000 × 6000) + 6000000] = 0

24000000 - 18000000 - 6000000 = 0

Ասվածի արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրակացության և օգտակար գործողությունների կատարման.

- հաշվելով, թե տվյալ գնի պայմաններում շահութաբերության շեմը արտադրանքի թողարկման (իրացման) ինչպիսի ծավալի (քանակի) է համապատասխանում, կստանանք արտադրության ծավալի կրիտիկական,

շեմային կետը, որից պակաս արտադրելը ձեռնարկության համար ձեռնտու չէ, վերջինս անխուսափելիորեն վնաս կկրի: Սովորաբար կիրառվում են հետևյալ բանաձևերը.

$$\text{Շեմային քանակը} = \frac{\text{տվյալ ապրանքի շահութաբերության շեմը}}{\text{իրացման գինը}},$$

մեր օրինակում՝ 24000000 : 8000 = 3000

$$\text{Շեմային քանակը} = \frac{\text{հաստատուն ծախսեր}}{\text{միավորի գին - միավորի փոփոխուն ծախսեր}},$$

մեր օրինակում՝

$$\text{ՇՔ} = \frac{6000000}{8000 - 6000} = 3000$$

Դժվար չէ նկատել, որ բերված երկու բանաձևերով ստացված արդյունքները կհամընկնեն միայն այն դեպքերում, երբ խոսք է գնում մեկ անուն արտադրանքի թողարկման մասին, որը պետք է միայն իր վաճառքից ստացված հասույթով լրիվությամբ ծածկի ինչպես փոփոխուն ծախսերը, այնպես էլ հաստատուն ծախսերի ամբողջությունը՝ ձեռնարկության մասշտաբով:

Գործնականում, որպես կանոն, ձեռնարկությունները արտադրում և իրացնում են մեկից ավելի արտադրատեսակներ, ունեն լայն տեսականի՝ իրենց համապատասխան պարամետրերով և հաստատուն ծախսերի բաժնեմասերով: Ուրեմն, եթե տեսականին կազմված է մեկից ավելի արտադրատեսակներից, ապա շահութաբերության շեմ (անվնասաբերություն) ապահովող արտադրության ծավալը որոշելիս պետք է ելնել հասույթի ձևավորմանը յուրաքանչյուրի մասնակցության աստիճանից և նրան բաժին ընկնող հաստատուն ծախսերի մեծությունից: Հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր արտադրատեսակի համար առանձին՝ ելնելով հետևյալ բանաձևից.

$$\text{Ապր. շեմ. քան.} = \frac{\text{Ընդ. հաստ. ծ.} \times \text{Տվ. ապր.տես. կշ. իրացման մեջ}}{\text{Ապրանքի գին - Միավ. փոփոխ. ծախս}}$$

Հաղթահարելով շահութաբերության շեմը, ձեռնարկությունը ձեռք է բերում համախառն մարժայի լրացուցիչ գումար ստանալու հնարավորություն՝ կապված դրանից ավելի թողարկված ամեն մի միավոր ապրանքի թողարկման հետ: Բնականաբար, կձևավորվի շահույթի որոշակի զանգված՝ համապատասխան քանակին համամասնական: Անհրաժեշտություն է առաջանում կանխատեսել շահույթի տվյալ զանգվածը, որը որոշելու համար ելակետ կարող են ծառայել շահութաբերության շեմը գերազանցող թողարկման ծավալը և յուրաքանչյուր միավորի մարժայի տեսակարար կշիռը համախառն մարժայի մեջ: Շահույթի այդ, հետևաբար և ցանկալի գումարը իրենից ներկայացնում է շահութաբերության շեմից վեր արտադրանքի թողարկման (իրացման) ծավալի և վաճառքի ենթակա յուրաքանչյուր միավոր ապրանքին ընկնող մարժայի արտադրյալը՝

$$\tau = \text{ԱԱՔ} \times \frac{\text{ՀՄ}}{\text{ՎԱՔ}},$$

ΔԱՔ - շահութաբերության շեմից ավելի արտադրանքի թողարկումն է,

ՎԱՔ - վաճառվող ապրանքների ընդհանուր քանակը:

Ինչպես արդեն համոզվել ենք, գործառնական լծակի ազդեցության ուժը առավելագույն է շահութաբերության շեմի մոտակայքում և աստիճանաբար թուլանում է դրանից հեռանալուն, իրացման ծավալի և շահույթի զանգվածի ավելացմանը զուգընթաց այնքան, որքան նրանց գումարի մեջ հաստատուն ծախսերի տեսակարար կշիռը նվազում է:

Այժմ հնարավոր է որոշել ֆինանսական կայունության պաշարը՝ որպես շահութաբերության շեմից բխող հասկացություն: Կարող ենք այդ անել նախորդ հաշվարկներում օգտագործված և նոր պայմանական տվյալների հիման վրա: Ենթադրենք, թե մեր ընդունած ընդհանուր 40000 հազ. դրամ իրացումը կազմված է երկու անուն ապրանքներից՝ x և y, և դրանց հետ կապված ցուցանիշները ունեն հետևյալ պատկերը (աղյուսակ 9.3.2):

Աղյուսակ 9.3.2

Ելակետային տվյալներ շահութաբերության շեմի և ֆինանսական կայունության պաշարի հաշվարկի համար

N	Ցուցանիշները	X ապրանք	Y ապրանք	D	Ընդամենը
1.	Իրացումից հասույթը	18000 հ.դ. (1.0)	22000 հ.դ. (1,0)	1	40000 հազ.
2.	Փոփոխուն ծախսերը	16000 հ.դ. (089)	14000 հ.դ. (064)	075	30000 հազ.
3.	Համախառն մարժան	2000 հ.դ. (011)	8000 հ.դ. (036)	025	10000 հազ.
4.	Հաստատուն ծախսերը	երկուսը միասին		-	6000 հազ.
5.	Շահույթը	երկուսը միասին		-	4000 հազ.

Շահութաբերության շեմը տվյալ պարագայում հավասար է 24000 հազ. դրամի (6000:0,25): Փաստացի հասույթի և շահութաբերության շեմի տարբերությունը կազմում է ֆինանսական կայունության պաշարը: Երբ հասույթի ծավալը իջնում է շահութաբերության շեմից ցածր մակարդակի, ձեռնարկության ֆինանսական դրությունը վատթարանում է, առաջանում է լուծարելի ակտիվների դեֆիցիտ:

Կոնկրետ թվերով՝ ֆինանսական կայունության պաշարը հավասար է 16000 հազ. դրամի (40000-24000): Դա հաճախ արտահայտվում է տոկոսներով՝ ընդհանուր հասույթի նկատմամբ, որը տվյալ դեպքում 40% է: Սա նշանակում է, որ ձեռնարկությունը կարող է դիմանալ հասույթի փաստացի մակարդակի 40 տոկոս

կամ 16000 հազ. դրամի անկման, առանց լուրջ ֆինանսական դժվարություն կրելու և վտանգավոր հետևանքների:

Մեր օրինակում իրացումից հասույթի 40 միլիոն դրամի գումարը ձևավորվում է վաճառված երկու ապրանքներից, որոնցից յուրաքանչյուրը ունի իր շահութաբերության շեմը, որը գործնականում հաշվարկելը բավականաչափ կարևոր է բիզնեսի մեջ կողմնորոշվելու համար: Առանձին ապրանքատեսակների հաշվով շահութաբերության շեմը որոշելու համար անհրաժեշտ է ունենալ կոնկրետ դրանց վերաբերող հաստատուն ծախսերի գումարը, ինչը մեր օրինակում արտահայտված է երկուսի համար մեկ թվով և կազմում է 6000 հազ. դրամ:

Բաշխումը ըստ ապրանքատեսակների կատարվում է ընդհանուր հասույթի ապահովման գործում դրանց ունեցած դերից ելնելով: Տվյալ դեպքում X ապրանքին բաժին է ընկնում ընդհանուր հասույթի 45 տոկոսը (18000x100:40000), իսկ Y-ին՝ 55 տոկոսը (22000x100:40000):

Նշված տոկոսներին համապատասխան՝ հաստատուն ծախսերը բաշխվում են երկու ապրանքատեսակների միջև (համամասնական մոտեցմամբ): Արդյունքում կստանանք, որ x ապրանքին պետք է վերագրել 2700 հազ. դրամի հաստատուն ծախս՝ $\frac{6000\times45}{100}$, իսկ y-ին՝ 3300 հազ. դրամի՝ $\frac{6000\times55}{100}$: Այսպիսով, x տեսակի ապրանքի շահութաբերության շեմը կկազմի 24545(2700:011), իսկ y ապրանքինը՝ 9167(3300:036) հազ. դրամ:

Այս թվերը համեմատելով վերևում բերված աղյուսակի թվերի հետ՝ կտեսնենք, որ x ապրանքատեսակը, որի ծավալը ընդհանուր հասույթի մեջ 18000 հազ. դրամ է (45%), իր շահութաբերության շեմին դեռևս չի հասել, իսկ y տեսակը (22000 հազ. կամ 55%) վաղուց է հատել շահութաբերության շեմը և տվել է 4700 հազ. դրամի շահույթ, որից 700 հազ. դրամը տրամադրվել է 1-ին ապրանքի արտադրության ու իրացման վնասը ծածկելու նպատակին [18000-(16000+2700)], իսկ 4000 հազ. դրամը արտացոլվել է ընդհանուր արդյունքում՝ որպես շահույթ: Ստացվում է, որ y ապրանքը բնութագրվում է շահութաբերության ավելի ցածր շեմով, ծախսերը արագ են փոխհատուցվում, այլ հավասար պայմաններում ունի գերակայություն, արտադրությունն ավելի ձեռնտու է, քան x-ինը: Սակայն գործնականում x ապրանքի արտադրությունից լրիվ հրաժարվելը կնշանակի հաստատուն ծախսերի փոխհատուցման ամբողջ ծանրությունը դնել y-ի վրա և 6000 հազ. դրամը լրիվությամբ փոխհատուցել նրա հասույթից:

Այդ դեպքում նրա շահութաբերության շեմը կավելանա և կհասնի մինչև 16670 հազ. դրամի $\left(\frac{6000\text{հազ.}}{0,36}\right)$. համարյա կրկնապատկվում է: y ապրանքատեսակի արտադրության նման աճ ապահովելը այնքան էլ հեշտ գործ չէ, նրա ֆինանսական ամրության պաշարը միայնակ արտադրության պայմաններում բավականին կպակասի: Երկուսի միաժամանակյա արտադրությունը ապահովում է շահութաբերության շեմից շատ ավելի հասույթ և 40% ֆինանսական ամրության պաշար (16000 հազ. դրամ). միաժամանակ x ապրանքը հաստատուն ծախսերի բեռի մի մասը վերցնում է իր վրա: Մյուս կողմից, տեսականու և դրա կառուցվածքի հետ կապված խնդիրները սերտորեն առնչվում են պահանջարկի և շուկայական իրադրության հետ, ինչը անտեսել չի կարելի առօրյա գործունեությունը իրականացնելիս:

Գործնականում հնարավոր է, որ ձեռնարկության ղեկավարությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրորդ ապրանքատեսակի շուկայական պահանջը մեծ է, նպատակահարմար չի գտնում առաջինի արտադրությունը ծավալել և, նույնիսկ, համարձակվում է այն արտադրությունից լրիվ հանել ու շեշտը դնել y-ի ընդլայնման վրա, x արտադրանքի դադարեցման հետևանքով ազատված միջոցները ուղղել կամ y-ի ավելացմանը, կամ խնայել: Խնայելը կապված է պրոբլեմների հետ, քանի որ արտադրության ու իրացման ծավալների մեծացումը որոշակի փուլերում պահանջում է նաև փոփոխուն ծախսերի աճ և հաստատուն ծախսերի թռիչք:

Այսպիսով, ձեռնարկության ֆինանսական վիճակի, գրավչության, հուսալիության և ընդհանրապես իմիջի համար կարևոր է իմանալ հետևյալը՝

եթե ձեռնարկությունը ունի 10%-ից ոչ պակաս ֆինանսական ամրություն, գործառնական լծակի ազդեցության բավարար ուժ, ակտիվների տնտեսական շահաթաբերության բարձր մակարդակ, դիֆերենցիալի նորմալ և ֆինանսական լծակի ուսի հանգիստ մակարդակ, ապա դա կհետաքրքրի ներդրողներին, կրեդիտորներին, ապահովագրական ընկերություններին և այլոց:

Առևտրային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների համար կարևորագույն խնդիր է տվյալ կապիտալ ծախսումների պայմաններում առավելագույն շահույթի ստացումը, ինչը ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել ծախսերի այնպիսի կոմբինացիա, որի դեպքում հնարավոր բոլոր տարբերակներից շահույթը ամենամեծն է: Ինչպես արդեն ասվել է, գործառնական լծակի ազդեցության ուժը ուղղակիորեն կախված է հաստատուն ծախսերի հարաբերական մեծությունից: Խոշոր ծավալի արտադրական ֆոնդեր (ոչ ընթացիկ ակտիվներ) ունեցող ձեռնարկություններում բավականաչափ մեծ է գործառնական լծակի ազդեցության ուժը:

Տնտեսական անկայունության, գնորդների գնողունակության անկման և ինֆլյացիայի բարձր տեմպերի պայմաններում այդպիսի ձեռնարկությունների համար առաջանում է շահույթի ծավալների արագ անկման պոտենցիալ վտանգ: Նշված պատճառներով իրացման ծավալների մասնակի կրճատումներն անգամ հնարավոր են դարձնում անցումը վնասաբերության: Ինքնարժեքի կազմում փոփոխուն ծախսերի ցածր մակարդակը, բնականաբար, միավոր արտադրանքի հաշվով նրա հարաբերական փոքրությունը անդրադառնում են համախառն մարժայի գործակցի և մյուս գործոնների վրա: Ծախսերի կառուցվածքի ընտրության տարբերակների առկայության պայմաններում օգտակար է ունենալ բարձր փոփոխուն և ցածր հաստատուն ծախսերի հարաբերական մակարդակ:

Գործնականում նման մոտեցումը միանշանակ չէ: Առավելություններ ու թերություններ կան ցանկացած տարբերակի դեպքում. ընտրությունը պետք է պայմանավորված լինի ձեռնարկության ֆինանսական նպատակներից, ելակետային վիճակից ու այլ հանգամանքներից: Շարադրվածի արդյունքում կատարվող հետևությունների մեջ համոզվելու և գործնականորեն հիմնավորելու համար կատարենք հաշվարկ մի քանի տարբերակով՝

Աղյուսակ 9. 3.3

Արդյունքի հաշվարկ, երբ իրացումը աճում է և հաստատուն ծախսերը մնում են անփոփոխ

N	Ցուցանիշները	Տարբերակները			
		I	II	III	IV
1.	Հասույթը իրացումից (հազ. դրամ)	40000	44800 (+12%)	50176 (+12%)	56197 (+12%)
2.	Փոփոխուն ծախսերը (հազ. դրամ)	30000	33600 (+12%)	37632 (+12%)	42148 (+12%)
3.	Համախառն մարժա (հազ. դրամ)	10000	11200	12544	14044
4.	Հաստատուն ծախսերը (հազ. դրամ)	6000	6000	6000	6000
5.	Շահույթը (հազ. դրամ)	4000	5200	6544	8044
6.	Շահույթի աճը (տոկոսներով)	-	30	26	23
7.	Գործառնական լծակի ազդեցության ուժը	2,5	2,3	1,9	1,7
8.	Շահութաբերության շեմը (հազ. դրամ)	24000	24000	24000	24000
9.	Ֆինանսական կայունության պաշարը (հազ. դրամ և %)	16000 40%	20800 46,4%	26176 52,2%	32197 57,3%

Հաշվարկի տվյալներից երևում է, որ իրացումից հասույթի՝ ըստ տարիների հավասարապես աճելու պայմաններում, երբ հաստատուն ծախսերը մնում են անփոփոխ, ինչպես շահույթը, այնպես էլ ֆինանսական կայունության (ամրության) պաշարը տարեցտարի դրսևորում են աճի տեմպերի նվազման միտում: Եթե իրացումը 12 տոկոսով ավելանալու դեպքում երկրորդ տարվա շահույթի աճը կազմում է 30%, երրորդ տարում իրացման աճի նույնպիսի տեմպը ապահովում է շահույթի 26, հաջորդ տարում՝ 23 տոկոսի ավելացում: Միաժամանակ աստիճանաբար թուլանում է գործառնական լծակի ազդեցության ուժը. առաջին տարի՝ 2,5, երկրորդ տարի՝ 2,3, երրորդ տարի՝ 1,9 և չորրորդ տարի՝ 1,7:

Աղյուսակ 9.3.4

Արդյունքի հաշվարկ, երբ իրացումը մնում է նույնը հաստատուն ծախսերը աճում են

N	Ցուցանիշները	Տարբերակ I	Տարբերակ II	Տարբերակ III	Տարբերակ IV
1.	Իրացումից հասույթը (հազ. դրամ)	40000	40000	40000	40000
2.	Փոփոխուն ծախսեր (հազ. դրամ)	30000 (075)	30000 (075)	30000 (075)	30000 (075)
3.	Համախառն մարժա (հազ. դրամ)	10000 (025)	10000 (025)	10000 (025)	10000 (025)
4.	Հաստատուն ծախսեր - գումարը՝ հազ. դրամ - աճի %՝ I տարբ. նկ.	6000	6120 2	6900 15	7200 20
5.	Շահույթը (հազ. դրամ)	4000	3880	3100	2800
6.	Գործառնական լծակի ազդեցության ուժը	2,5	2,57	3,23	3,57
7.	Շահութաբերության շեմը (հազ. դրամ)	24000	24480	27600	28800
8.	Ֆինանսական կայունության պաշարը՝ - (հազ. դրամ) - %՝ հաս-ի նկատ.	16000 40	15520 38,8	12400 31,0	11200 28,0

Պարզվում է, որ առաջին տարում ձեռնարկությունը հաղթահարել է շահութաբերության շեմը, ստանում է բավականաչափ շահույթ և ունի ֆինանսական կայունության հուսալի պաշար՝ 24000 հազ. դրամ կամ հասույթի 40 տոկոսին հավասար: Երկրորդ տարում հաստատուն ծախսերի աննշան (2%) աճը հանգեցրել է շահույթի որոշ նվազման և գործառնական լծակի ազդեցության ուժի մեծացման: Ֆինանսական կայունության պաշարը կրճատվել է, սակայն լուրջ հետևանքներ չեն առաջացել: Հաջորդ տարում հաստատուն ծախսերը ավելացել են ավելի մեծ չափերով, արդյունքում՝ շահութաբերության շեմը նկատելիորեն բարձրացել է, իսկ շահույթը նվազել, գործառնական լծակի ուժը էլ ավելի է մեծացել: Գրեթե նույնպիսի տեղաշարժեր են առաջացել նաև չորրորդ տարբերակում: Այնուամենայնիվ, ձեռնարկությունը շարունակում է մնալ շահութաբեր և ունի ֆինանսական կայունության բավարար պաշար (28%), հաստատուն ծախսերի տեղաշարժը առայժմ լուրջ բացասական հետևանքներ չի առաջացրել:

Մեզ համար արդեն որոշակի է, որ շահութաբերության շեմի վրա ազդում են երեք կարևորագույն գործոններ: Դրանք են՝ արտադրանքի (ապրանքի) իրացման գինը, միավոր արտադրանքի հաշվով՝ փոփոխուն ծախսերի մեծությունը և հաստատուն ծախսերի ամբողջական գումարը: Հաստատուն ծախսերի մակարդակը ձեռնարկչատիրական ռիսկի պոտենցիալ է, և վերջինս ուղիղ համեմատական է ծախսերի մակարդակին: Միաժամանակ, որքան բարձր են հաստատուն ծախսերը, այնքան մեծ են շահութաբերության շեմն ու ձեռնարկչատիրական ռիսկը: Նշված երեք գործոնների միջև փոխադարձ կապը բնութագրվում է հետևյալ կերպ.

N	Գործոնները	Գործոնի փոփոխությունը	Շահութաբերության շեմը
1.	Իրացման գինը	բարձրանում է իջնում է	բարձրանում է իջնում է
2.	Միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերը	բարձրանում է իջնում է	բարձրանում է իջնում է
3.	Հաստատուն ծախսերի ամբողջական գումարը	բարձրանում է իջնում է	բարձրանում է իջնում է

Ինչպես արդեն ասվել է, հաստատուն ծախսերը իրենց բնույթով և առանձնահատկություններով կրում են ուղղակի և անուղղակի հատկանիշներ: Մի մասի մեծությունը կոնկրետ արտադրատեսակների համար պարզ է և հեշտ որոշվող, օրինակ՝ այն սարքավորումների ամորտիզացիան (մաշվածքը), որոնք անմիջականորեն մասնակցում են հենց տվյալ արտադրանքի պատրաստմանը, վարպետների, արտադրամասի պետի, արտադրամասի պահպանման ծախսերը և այլն: Անուղղակի հաստատուն ծախսերը վերաբերում են ընդհանուր ձեռնարկությանը՝ ղեկավարության դրույքները, հաշվային ապարատի և այլ ծառայությունների պահպանումը, վարչական շենքերի մաշվածքը, գիտահետազոտական, ինժեներական մշակումների ծախսերը և այլն:

Այս տիպի ծախսերը կոնկրետ արտադրատեսակներին վերագրելը բավականաչափ բարդ է: Շատ դեպքերում որպես ունիվերսալ մոտեցում է ընտրվում ընդհանուր իրացման մեջ ունեցած համամասնությունը:

Գործառնական վերլուծության հիմնական պահանջներից մեկը ուղղակի և անուղղակի ծախսերի միավորումն ու կոնկրետ արտադրատեսակների ծախսերին վերագրելն է, ըստ որի էլ հաշվարկվում է միջանկյալ մարժան: Միջանկյալ մարժա հասկացությունը վերաբերում է իրացումից ստացվող այն արդյունքին, որը ձևավորվում է ուղղակի փոփոխուն և ուղղակի հաստատուն ծախսերը հասույթից փոխհատուցելուց հետո: Միջանկյալ մարժան միջին դիրք ունի համախառն մարժայի և շահույթի միջև: Ցանկալի է, որ այն կարողանա ծածկել (փոխհատուցել) հաստատուն ծախսերի ավելի ու ավելի մեծ մասը և իր մասնաբաժինը ունենա շահույթի ձևավորման գործում:

Երբ միջանկյալ մարժան ծածկում է գոնե ձեռնարկության հաստատուն ծախսերի մի մասը, տվյալ ապրանքատեսակի տեսականու կազմում թողնելը

արդարացվում է, միաժամանակ այն ապրանքները, որոնք հաստատուն ծախսերի մեծ բաժին են ներառում, համարվում են նախընտրելի: Առաջին հայացքից անառարկելի թվացող այս կանոնը բոլոր դեպքերում կարիք ունի թվային հիմնավորման, քանի որ կան որոշ նրբություններ՝

- Տարբերություն կա անվնասաբերության և շահութաբերության շեմերի միջև: Կոնկրետ ապրանքատեսակի անվնասաբերության շեմը (կետը) հասույթի այն ծավալն է, որը ամբողջությամբ ծածկում է փոփոխուն և ուղղակի հաստատուն ծախսերի ողջ գումարը: Միջանկյալ մարժան այդ դեպքում հավասար է զրոյի: Եթե բոլոր քայլերը կատարելուց հետո միջանկյալ մարժան չի ունենա ունենալ գոնե զրոյական արժեք, տվյալ արտադրատեսակը արտադրությունից պետք է հանել կամ չնախատեսել.

$$Ա_{ц}т = \frac{\text{ուղղակի հաստատուն ծախսեր (ՈՒՀԾ)}}{\text{միավորի համախառն մարժա (ՄՀՄ)}}$$

- Ապրանքի շահութաբերության շեմը իրացումից հասույթի այն ծավալն է, որը ծածկում է ոչ միայն փոփոխուն և ուղղակի հաստատուն ծախսերը, այլ նաև տվյալ ապրանքին վերաբերող անուղղակի հաստատուն ծախսերը, ընդ որում, տվյալ ապրանքի իրացումից շահույթ չկա, հավասար է զրոյի.

$$тт_{\text{հատ}} = \frac{\text{ուղղակի և անուղղ. հաստատուն ծախսեր (ՈՒՀԾ)}}{\text{միավորի համախառն մարժա (ՄՀՄ)}}$$

$$тт_{\text{դրամ}} = \frac{\text{ուղղակի և անուղղ. հաստատուն ծախսեր}}{\text{մարժայի բաժինը տվյալ ապր. հասույթի մեջ}}$$

Նախորդ հաշվարկների տվյալները համալրելով մեկ լրացուցիչ ցուցանիշով՝ անուղղակի հաստատուն ծախսեր՝ պայմանականորեն 1800 հազար, հաշվարկենք անվնասաբերության կետը և շահութաբերության շեմը մեր ձեռնարկության համար:

Եվ այսպես, ելակետային տվյալներն են՝

- իրացման գինը 8000 դրամ
- իրացման ծավալը 5000 հատ
- տարեկան հասույթը 40000 հազ. (8000x5000)
- միավորի փոփոխուն ծախսերը 6000 դրամ
- համախառն մարժան 10000(8000-6000)x5000
- համախառն մարժայի գործակիցը 025(10000:40000)
- ուղղակի հաստատուն ծախսերը 6000 հազ.
- միջանկյալ մարժան 4000 հազ. (10000-6000)
- միջանկյալ մարժայի բաժինը հասույթի կազմում 01(4000:40000)
- անուղղակի հաստատուն ծախսերը 1800 հազ.
- շահույթ 2200 հազ.

Լուծում.

- Անվնասաբերության կետը = 6000:10000/5000=3000, նշանակում է՝ այս ապրանքը հաստատուն ծախսերի փոխհատուցմանը մասնակցում է 3001-րդ քանակի վաճառքից սկսած: Այդ ծավալի իրացումից կստացվի՝
- հասույթ 8000x3000=24000 հազ.
- փոփոխուն ծախսեր 6000x3000/8000=22500 հազ.
- համախառն մարժա 6000 հազ.
- շահութաբերության շեմը (քանակ) (6000+1800)/2=3900 հազ.
- շահութաբերության շեմը (գումար) (6000+1800)/025=31200 հազ.

Արտադրանքի տեսականին մեկից ավելի ապրանքատեսակներից կազմված լինելու պայմաններում, գործառնական վերլուծության միջոցով, կատարվում է առավել ձեռնտու տեսակի ընտրություն: Ընդունենք, որ ձեռնարկությունը հնարավորություն ունի ընտրություն կատարելու 3 տիպի հաստոցների միջև և իրականացնել պատվեր՝ հենվելով առկա հետևյալ տվյալների վրա՝

- գումարային ծախսեր 36000 հազ.
- գումարային փոփոխուն ծախսեր 30000 հազ.
- որից՝ I տիպի հաստոց 12000 հազ.
- II տիպի հաստոց 12000 հազ.
- III տիպի հաստոց 6000 հազ.
- գումարային ուղղակի հաստատուն ծախսեր 6000 հազ.
- որից՝ I տիպի հաստոց 1000 հազ.
- II տիպի հաստոց 2000 հազ.
- III տիպի հաստոց 3000 հազ.
- անուղղակի հաստատուն ծախսեր 1800 հազ.

Կազմենք հետևյալ աղյուսակը՝

Աղյուսակ 9.3.5

Նախընտրելի տարբերակի հաշվարկ

N	Վերլուծության ցուցանիշները	Հաստոցների տիպը		
		I	II	III
1.	իրացումից հասույթը (հազ. դրամ)	6000	8000	4400
2.	փոփոխուն ծախսեր (հազ. դրամ)	4800	4800	2400
3.	համախառն մարժան՝ 1-2	1200	3200	2000

4.	համախառն մարժայի բաժինը հասույթի մեջ՝ 3:1	02	04	0455
5.	ուղղակի հաստատուն ծախսեր (հազ. դրամ)	4000	800	1200
6.	ուղղակի փոփոխուն և հաստատուն ծախսերի գումարը (2+5)	5200	5600	3600
7.	միջանկյալ մարժան (3-5)	800	2400	800
8.	միջանկյալ մարժայի բաժինը հասույթի մեջ (7:1)	0133	03	0183

Աղյուսակի տվյալների վերլուծությունից հետո այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ նախընտրելի են II և III տարբերակները, քանի որ դրանց համախառն մարժան անհամեմատ բարձր է: Ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ հատկապես III-ում, որից ակնկալվում էր բարձր շահութաբերություն, ուղղակի հաստատուն ծախսերը բավականաչափ մեծ են, որի հետևանքով սպասվող շահութաբերությունը կարող է արտահայտվել համեստ չափերով: Առաջին տիպի հաստոցների համախառն մարժան թեև պակաս է, սակայն ուղղակի հաստատուն ծախսերի աննշան լինելու պատճառով միջանկյալ մարժան մոտավորապես համընկնում է երրորդի հետ:

Ակնհայտ է, որ երկրորդի նույնատիպ ցուցանիշը մյուսների՝ 03-ի, 0133-ի և 0183-ի համար առաջատար է, ուստի ընտրությունը ընկնում է նրա վրա:

Հայաստանի Հանրապետության տնտեսական բնագավառի աշխատողների, ուսումնագիտական անձնակազմի և արտադրական ձեռնարկությունների համար վերը շարադրվածը այնքան նոր, ոչ սովորական և անհրաժեշտ է, որ առաջանում է ուսումնագործնական իրադրությունների և խնդիրների վերաբերյալ բացատրություններ և լուծումների ներկայացման կարիք:

Համոզված ենք, որ ստորև բերվող մի քանի խնդիրների լուծումներ կնպաստեն տեսական նյութի յուրացմանը:

<u>Օրինակ 1.</u>

Ընդունենք, որ ձեռնարկության ղեկավարությունը, ելնելով շուկայական պահանջարկի հնարավորությունից, որոշել է իրացման ծավալը 10 տոկոսով ավելացնել և 40 միլիոն դրամից հասցնել 44 միլիոնի, պահպանելով նախկինում մյուս ցուցանիշների ձևավորված պարամետրերը: Ելակետային տարբերակում ընդհանուր փոփոխուն ծախսերը կազմել էին 30000 հազ. դրամ, հաստատուն ծախսերը՝ 6000 հազ. դրամ, իսկ շահույթը՝ 4000 հազ. դրամ: Պահանջվում է որոշել շահույթի գումարը հասույթի նախատեսված նոր ծավալի դեպքում՝ ավանդական մեթոդով, գործառնական վերլուծությամբ, ելնելով գործառնական լծակից, կատարելով արդյունքների համեմատություն:

Լուծում.

1. Փոփոխուն ծախսերի գումարը ուղղակի կախվածության մեջ է արտադրության ծավալից, հետևաբար այն կավելանա համամասնորեն՝ 10 տոկոսով և կկազմի 33000 հազ. դրամ (30000 + 30000x / /100):

Հաստատուն ծախսերը կմնան նույն մակարդակին, ինքնարժեքը կդառնա 39000 հազ. դրամ (33000+6000), իսկ շահույթը կարտահայտվի 5000 հազ. դրամով՝ նախորդ 4000 հազ. դրամի դիմաց:

2. Գործառնական լծակի ուժը, որը իրենից ներկայացնում է համախառն մարժայի հարաբերությունը շահույթին, կունենա հետևյալ մակարդակը՝

Համախառն մարժան հավասար է 10000 հազ. դրամի (40000- -30000), շահույթը՝ 4000(40000-30000-6000), գործառնական լծակի ուժը՝ 2,5[(10000:4000) կամ նույնն է, թե՝ (40000-30000):(40000- -30000-6000)]: Նշանակում է՝ իրացումից հասույթի 10 տոկոս ավելացումը բերում է շահույթի 25 տոկոսի աճ (10x2,5), և շահույթը պետք է կազմի 5000 հազ. դրամ (4000+(4000x25)/1000):

Հաշվարկների արդյունքները համընկնում են:

Օրինակ 2.

Օգտագործելով առաջին օրինակի և հետևյալ աղյուսակի տվյալները՝ որոշել գործառնական վերլուծության հանգուցային ցուցանիշները, մեկնաբանել, թե շահութաբերության շեմից հասույթի հեռանալուն զուգընթաց ինչպես են փոխվում գործառնական լծակի ազդեցության ուժը և ֆինանսական կայունության պաշարը:

1	Համախառն մարժան՝ իրացումից հասույթ-փոփոխուն ծախսեր (հումք, նյութեր, փոփոխուն աշխատավարձ, այլ փոփոխուն ծախսեր)	Ա Բ
2.	Համախառն մարժայի գործակիցը (համախառն մարժան : իրացումից հասույթին) - նույնը տոկոսներով՝ (համախառն մարժայի տոկոս : հասույթ) × 100	Գ
3.	Հաստատուն ծախսեր՝ դրույքները, կայուն աշխատավարձը, վարձակալական վճարներ, հարկեր, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձ, հեռախոսավարձ, փոստային ծառայություններ, ապահովագրություն, վերանորոգում, գովազդ, վարկի տոկոսներ, ամորտիզացիոն հատկացումներ, այլ հաստատուն ծախսեր	Դ
4.	Շահութաբերության շեմը՝ հաստատուն ծախսեր : համախառն մարժայի գործակից (Դ:Գ)	Ե
5.	Ֆինանսական կայունության պաշար՝ գումարով՝ իրացումից հասույթ-շահութաբերության շեմ (Ա-Ե)	Զ
6.	Շահույթը՝ ֆինանսական կայունության պաշար x համախառն մարժայի գործակից (ԶxԳ)	է
7.	Գործառնական լծակի ազդեցության ուժը՝ համախառն մարժա : շահույթ (Բ:է)	Ը

Լուծում.

N	Ցուցանիշները	Ելակետային տարբերակ	10% աճի տարբերակ
1	Հասույթ իրացումից (հազ. դրամ)	40000	44000
2.	Փոփոխուն ծախսեր (հազ. դրամ)	30000	33000
3.	Համախառն մարժան (հազ. դրամ)	10000	11000
4.	Համախառն մարժայի գործակիցը (3:1)	0,25	0,25
5.	Հաստատուն ծախսեր (հազ. դրամ)	6000	6000
6.	Շահութաբերության շեմը (հազ. դրամ) (5:4)	24000	24000
7.	Ֆինանսական ամրության պաշարը (հազ. դրամ) (1-6)	16000	20000
8.	Ֆինանսական կայունության պաշարի տոկոսը (7x100:1)	40%	45,5%
9.	Շահույթը (7x4)	4000	5000
10.	Գործառնական լծակի ազդեցության ուժը (3:9)	2,5	2,2

Հետևություն՝

Իրացումից հասույթի շահութաբերության շեմից դրական շեղմանը զուգընթաց գործառնական լծակի ազդեցության ուժը թուլանում է (գործակիցը իջնում է), իսկ ֆինանսական կայունության պաշարը մեծանում է: Դա հետևանք է ինչպես ամբողջական հասույթի, այնպես էլ միավոր արտադրանքի վրա ծախսումների կազմում հաստատուն ծախսերի բաժնի հարաբերական կրճատման:

Օրինակ 3.

Ձեռնարկության վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները (տե՛ս ստորև բերված աղյուսակը). իրադրությունից ելնելով՝ իրացումից հասույթը կրճատվելու է 25 տոկոսով, շահութահարկի դրույքը 25 տոկոս է:

1.	Իրացումից հասույթը (հազ. դրամ)	30000
2.	Փոփոխուն ծախսերը (հազ. դրամ)	21000
3.	Համախառն մարժան (հազ. դրամ)	9000
4.	Հաստատուն ծախսերը (հազ. դրամ)	6000
5.	Շահույթը (հազ. դրամ)	3000
6.	Սեփական միջոցները	12000

7.	Երկարատև վարկերը (հազ. դրամ)	3000
8.	Կարճատև վարկերը (հազ. դրամ)	1200
9.	Վարկային տոկոսի միջին տարեկան դրույքը	25%

Պահանջվում է որոշել՝

- շահութաբերության ինչպիսի՞ մակարդակ է հնարավոր պահպանել,
- իրացումից ո՞ր տոկոսով հասույթի կրճատվելու պայմաններում ձեռնարկությունը կիջնի շահութաբերության շեմի մակարդակին,
- հաստատուն ծախսերը որքանո՞վ է անհրաժեշտ պակասեցնել, որպեսզի ձեռնարկությունը պահպանի սպասվող շահույթի 75 տոկոսը,
- ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը:

<u>Լուծում.</u>

Գործառնական լծակի ազդեցության ուժը այս ձեռնարկությունում 3 է (9000:3000), նշանակում է՝ իրացումից հասույթի 25% կրճատվելու պայմաններում շահույթը կպակասի 75 տոկոսով (25x3)՝ և կպահպանվի սպասվող շահույթի միայն 1/4-ը, եթե մյուս պայմանները մնան անփոփոխ:

Գործառնական լծակի ուժը 3 լինելու պարագայում ձեռնարկությունը զրոյական շահույթ կունենա իրացման ծավալը 33% կրճատվելու պայմաններում (100:3):

Գործնականում որքան մեծ է գործառնական լծակի ազդեցության ուժը, այնքան անթույլատրելի է հասույթի՝ բարձր տոկոսով իջեցումը:

Իրացումից հասույթի 25%-ով կրճատման պայմաններում շահույթի 75 տոկոսը՝ պահպանելու հարցը որոշելիս պետք է ելնել գործառնական լծակի ազդեցության բանաձևից՝

ԳԼԱՈ = համախառն մարժա : շահույթ կամ՝

$$\text{ԳԼՈՒ} = \frac{\text{հաստատուն ծախս} + \text{շահույթ}}{\text{շահույթ}} \quad \text{կամ՝} \quad \frac{1 + \text{հաստատուն ծախս}}{\text{շահույթ}},$$

այստեղից՝ հաստատուն ծախսերը = (ԳԼՈՒ - 1) × շահույթ:

Հետևաբար, որպեսզի պահպանվի սպասվող շահույթի 75 տոկոսը՝ 2250 հազ. դրամը, անհրաժեշտ է, որ հաստատուն ծախսերը չգերազանցեն (3 - 1) × 2250 գումարը, այն է՝ 4500 հազար դրամը, որը 1500 հազարով կամ 25 տոկոսով պակաս է ելակետայինից:

Ֆինանսական լծակի արդյունավետության մակարդակը՝

$$\text{ՖԼԱ} = (1 - \text{հարկի դրույք}) \times (\text{ՏՇ} - \text{ՎՄՀԴ}) \times \frac{\text{ՓՄ}}{\text{ՍՄ}}$$

Տվյալ դեպքում շահույթը 3000 հազ. դրամ է, վարկի դիմաց տոկոսագումարը՝ 840 հազար, ընդամենը՝ 3840000, որը իրենից ներկայացնում է ներդրումների շահագործման տնտեսական արդյունքը, այսինքն՝ շահույթը հարկումից և վարկային տոկոսների վճարումից առաջ:

Ներդրումների շահագործման զուտ արդյունքը հարաբերելով հաշվեկշռի գումարին՝ կստանանք շահութաբերությունը (ՏՇ):

$$ՏՇ=\frac{3840000\times100}{12000000+3000000+1200000}=23,7\%$$

Հետևաբար՝ ֆինանսական լծակի արդյունավետությունը՝

$$ՖԼԱ=4/5(23,7-25)\times\frac{3200000.}{12000000.}=4/5\times1,3\times027=-0181$$

Ստացվում է, որ ֆինանսական լծակի դիֆերենցիալը բացասական է (-013), փոխառու աղբյուրների ֆինանսական ծախսերը ծանրացնում են հաստատուն ծախսերը և մեծացնում գործառնական լծակի ազդեցության ուժը, ինչը նշանակում է, որ մեծ է ձեռնարկչատիրական ռիսկը:

<u>Օրինակ 4.</u>

Մեր վերլուծության օբյեկտ ձեռնարկությունը արտադրում է տարեկան 100000 զույգ կոշիկ: Միավորի իրացման գինը 3000 դրամ է, փոփոխուն ծախսերի միջին մեծությունը՝ 2000 դրամ զույգի համար, հաստատուն ծախսերը՝ 40000 հազ. դրամ:

Պահանջվում է կատարել շահույթի վերլուծություն գործառնական լծակի տարրերի 10 տոկոսով փոփոխության պայմաններում:

Դեպք 1. Գինը բարձրանում է 10%-ով, մյուս տարրերը մնում են անփոփոխ: Կունենանք հետևյալ պատկերը՝

- գինը (միավորի) 3000
- միջին փոփոխուն ծախսերը 2000
- իրացումից հասույթը (100x3000) 300000 հազ. (100%)
- փոփոխուն ծախսերը (100x2000) 200000 (66,7)
- համախառն մարժան 100000 (33,3)
- հաստատուն ծախսերը 40000 (13,3)
- շահույթը 60000 (20%)
- նոր գինը (3000+(3000x10)/100) 3300
- նոր հասույթը (100x3300) 330000 հազ. (100%)
- փոփոխուն ծախսերը 200000 (60,6)
- համախառն մարժան 130000 հ.դ. (39,4)
- հաստատուն ծախսերը 40000 հ.դ. (12,1)
- շահույթը 90000 հ.դ. (27,3)

Այժմ որոշենք, թե իրացման ինչպիսի ծավալ կպահանջվի նախկին մեծության՝ 60 մլն-ի չափով շահույթ ստանալու համար.

$$\frac{100000\ \text{հ.դ.}}{0394}=76911,$$

կայուն արդյունք ապահովող իրացումը՝

$$Հ_{\circ} = \frac{\text{համախառն մարժայի ելակետ}}{\text{համախառն մարժայի նոր գործակից}} : \text{նոր գին}$$

N	Ցուցանիշները	Իրացման ծավալը՝ 100 հազ. հատ, գինը՝ 3300 դր.		Անփոփոխ արդյունքի իրացման ծավալը՝ 76911 հազ. հատ, գինը՝ 3000 դր.	
		մլն դր.	%	մլն դր.	%
1.	Իրացումից հասույթը	330,0	100,0	253,8	100,0
2.	Փոփոխուն ծախսեր	200,0	60,6	153,8	60,8
3.	Համախառն մարժա	130,0	39,4	100,0	39,2
4.	Հաստատուն ծախսեր	40,0	12,1	40,0	15,7
5.	Շահույթը	90	27,3	60,0	23,5

Այսպիսով, իրացման գնի՝ 10%-ով բարձրացումը փոխհատուցում է իրացման ծավալի մոտավորապես 25%-ով իջեցումը կամ շահույթը ավելացնում է 50 տոկոսով:

Դեպք 2. Իրացման ծավալը և հաստատուն ծախսերը մնում են նույնը, փոփոխուն ծախսերը պակասում են 10 տոկոսով.

- իրացումից հասույթը 300 մլն
- նոր փոփոխուն ծախսերը 180 մլն (60%)
- համախառն մարժան 120մլն (40%)
- հաստատուն ծախսերը 40 մլն (13,3%)
- շահույթը 80 մլն (26,7%)

Որոշենք նախկին արդյունքը ապահովող իրացման ծավալը՝ (100մլն:04):3000=75000 զույգ

N	Ցուցանիշները	Իրացումը 100 հազ. հատ		Անփոփոխ արդյունքի իրացման գինը՝ 3000 դր.	
		մլն դր.	%	մլն դր.	%
1.	Իրացումից հասույթը	300	100	250	100
2.	Փոփոխուն ծախսեր	180	60	150	60
3.	Համախառն մարժա	120	40	100	40
4.	Հաստատուն ծախսեր	40	13,3	40	16

5.	Շահույթը	80	26,7	60	24

Կայուն արդյունք ապահովող իրացման ծավալը՝ փոփոխուն ծախսերը պակասեցնելու դեպքում՝

$$\frac{\text{ելակետային համախառն մարժա}}{\text{համախառն մարժայի նոր գործակից}} : \text{իրացման գին}$$

Հետևաբար, փոփոխուն ծախսերի՝ 10%-ով կրճատումը փոխհատուցում է իրացման ծավալի 17 տոկոսով նվազելը կամ շահույթը ավելացնում է 33 տոկոսով:

Դեպք 3. Իրացման գինը և փոփոխուն ծախսերը մնում են նույն մակարդակին, հաստատուն ծախսերը նվազում են 10 տոկոսով:

Սկզբնական շահույթի մակարդակը ապահովելու համար (60 մլն), հաստատուն ծախսերը պակասելու պայմաններում, պահանջվում է համախառն նոր մարժա, որը պետք է կազմի 96 մլն դրամ: Կայուն արդյունք ապահովող հասույթը, հաստատուն ծախսերը փոխվելու դեպքում, հավասար է՝

$$\frac{\text{համախառն մարժայի նոր գումար}}{\text{համախառն մարժայի ելակետային գործակից}} : \text{գին}$$

$$\frac{96}{0333} : 3000 = 96100$$

N	Ցուցանիշները	Իրացումը՝ 100000 զույգ		Անփոփոխ ծավալ ապահովող իրացումը՝ 96100	
		մլն դր.	%	մլն դր.	%
1.	Իրացումից հասույթը	300	100	288,3	100
2.	Փոփոխուն ծախսեր	200	66,7	192,2	66,7
3.	Համախառն մարժա	100	33,3	96,0	33,3
4.	Հաստատուն ծախսեր	36	12,0	36,0	12,5
5.	Շահույթը	64	21,3	60,0	20,8

Ձեռնարկությանը կարելի է խորհուրդ տալ ավելացնել իրացման ծավալը, քանի որ գործառնական լծակի ուժը 1,7 է (100:60), և 10% իրացման աճը կհանգեցնի շահույթի 17 տոկոսով ավելացմանը:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են բիզնեսի կազմակերպման ու իրականացման դրամական ծախսերը, ի՞նչ խմբերի են բաժանվում:
2. Արտադրանքի արտադրությանն ու իրացմանը վերաբերող ծախսերը, ի՞նչ կազմ ունեն, ի՞նչ խմբերի են բաժանվում ծրագրից կախվածության հետ կապված:
3. Ինչպե՞ս է կանխատեսվում կամ հաշվարկվում իրացվող արտադրանքի ինքնարժեքը:
4. Ի՞նչ է նշանակում գործառնական լծակ, ի՞նչ ցուցանիշներով է պայմանավորված դրա ուժը և ի՞նչ կապի մեջ է շահույթի հետ:
5. Ցույց տալ անվնասաբերության կետը և շահութաբերության շեմը, գործառնական վերլուծության միջոցով դրանց արդյունավետ կառավարումը և շահույթի մաքսիմալացումը:
6. Ի՞նչ է նշանակում ֆինանսական կայունության պաշար արտադրական կազմակերպությունում:

Գ Լ Ո Ւ Խ 10

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹԸ

10.1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ապրանքային արտադրանքի իրացումից հասույթը այն գլխավոր աղբյուրն է, որի հաշվին փոխհատուցվում է դրա արտադրության ընթացքում սպառված արտադրության միջոցների արժեքը, վճարվում են արտադրության աշխատողների աշխատավարձը և սոցիալական ապահովագրության հատկացումները, կոմերցիոն և այլ դրամական ծախսերը, ինչպես նաև անուղղակի հարկերը (ակցիզներ, ավելացված արժեքի հարկ): Հասույթի պլանային մեծությունը հաշվարկվում է կոնկրետ ժամանակաշրջանի, սովորաբար՝ տարվա կտրվածքով: Դրա վրա ազդող կարևորագույն գործոնները չորսն են՝

- իրացվող ապրանքային արտադրանքի ֆիզիկական ծավալը (փոփոխությունը),
- իրացվող արտադրանքի տեսականու կառուցվածքը,
- իրացվող արտադրանքի որակը,
- իրացման գնի տեսակը և մակարդակը:

Թվարկված գործոններից երկուսը իրացումից հասույթի և գործառնական գործունեության շահույթի վրա անդրադառնում են ուղղակիորեն: Այսպես, մյուս գործոնները անփոփոխ մնալու պայմաններում, որքանով (անգամ, տոկոս) ավելանա կամ պակասի իրացման ծավալը, նույնքանով (անգամ, տոկոս) համապատասխան ուղղությամբ կփոխվի նաև հասույթը, հետևաբար և շահույթը: Նույն կերպ իրացման գնի բարձրացումը կամ իջեցումը անմիջական փոփոխություն են առաջացնում հասույթի գծով: Հատկապես ձեռնարկության մեծածախ գնի (ինքնարժեք + շահույթ) դեպքում ուղղակի ազդեցությունը ավելի ցայտուն է, քանի որ այն չի պարունակում անուղղակի հարկերի տարրեր և ճշգրտման անհրաժեշտություն չունի:

Մյուս երկու գործոնների ազդեցությունը հասույթի մեծության վրա անուղղակի է: Գրեթե միշտ ֆիրմաները չեն սահմանափակվում մի տեսակի արտադրանքի արտադրությամբ ու իրացմամբ, բնականաբար, ձևավորվում է որոշակի տեսականու կազմ և կառուցվածք: Տեսականու մեջ մտնող արտադրատեսակները բնութագրվում են գնային ու շահութաբերության տարբեր մակարդակներով: Հետևաբար, եթե միևնույն իրացման ֆիզիկական ծավալի մեջ ավելանում կամ պակասում է բարձր գին ունեցող ապրանքների բաժինը, փոխվում է հասույթի գումարը: Կառուցվածքային փոփոխությունները այս բնագավառում արտահայտություն են գտնում գնի միջին մակարդակի մեջ. նշանակում է՝ տվյալ իրացման ծավալը միջին գնի փոփոխության հետևանքով կապահովի ավելի կամ պակաս մեծության հասույթ:

Իրացվող արտադրանքի որակը և դրա փոփոխությունները նույնպես ուղղակի անդրադառնալ չեն կարող և հասույթի վրա ազդում են իրացման միջին գնի տարբերության միջոցով:

Տնտեսավարման, մասնավորապես, ֆինանսական կառավարման ընթացքում գործածվում են հասույթի երկու հասկացություններ՝ ընդհանուր և զուտ: Ընդհանուր հասույթը արտահայտվում է բաց թողման գներով՝ ներառելով արտադրանքի արտադրության ու իրացման ծախսերը, շահույթը, ակցիզային հարկը (ենթաակցիզային ապրանքների դեպքում) և ավելացված արժեքի հարկը: Հայաստանի Հանրապետության «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի համաձայն, ապրանքների իրացման համար դուրս են գրվում հարկային հաշիվներ՝ կիրառելով բաց թողման գինը (գնի կառուցվածքը տե՛ս ստորև բերված աղյուսակում) և արդյունքում ձևավորվում է ընդհանուր (համախառն) հասույթը: Իրացումից հասույթը համապատասխան գներով գործնականում կարող է հաշվարկվել տարբեր մեթոդներով, ինչը պայմանավորվում է տնտեսավարման շուկայական վիճակով, պայմանագրերի առկայությամբ, շուկա մտնելու ուղիներով և այլն:

Իրացման գների կառուցվածքը



Հասույթի պլանի հաշվարկման ավանդական մեթոդի համաձայն, արտադրանքը իրացված է համարվում, երբ հաշիվը վճարվել է և գումարը մուտք է եղել հաշվարկային հաշվին կամ դրամարկղ: Այդ առնչությամբ էլ հասույթ հասկացությունը նույնացվում է այն գումարի հետ, որը իրացված արտադրանքի և մատուցված ծառայությունների դիմաց մուտք է լինում կամ ձեռնարկության համապատասխան հաշվին, կամ դրամարկղ: Գործնականում, ինչպես արդեն նշվել է նախորդ գլուխներում, կարող է կիրառվել նաև այլ կարգ՝ հասույթը կապելով առաքումների և հաշվարկային փաստաթղթերի ներկայացման կամ կոնկրետ ժամկետի հետ:

Տնտեսավարման և, հատկապես, ձեռնարկչատիրական գործունեության փորձը ցույց է տվել, որ սովորաբար արտադրանքի արտադրության ու իրացման տարեկան գումարները չեն համընկնում: Իրացումը կարող է տեղի ունենալ ոչ

միայն տվյալ տարում արտադրված ապրանքային արտադրանքի, այլ նաև նախորդ տարիներից փոխանցված մնացորդների հաշվին, կամ ապրանքային արտադրանքի մի մասը կարող է մնալ որպես տարեվերջի մնացորդ և անցնել հաջորդ տարվա պաշարների մեջ: Հետևաբար, տարեկան իրացման և հասույթի պլանային մեծությունը կախվածության մեջ է երեք ցուցանիշներից՝ տարեսկզբի դրությամբ մնացորդներից (պահեստներում, առաքված, դեռևս չվաճառված և գնորդներին ի պահ հանձնված), տարեկան ապրանքային արտադրանքից և պլանային տարվա վերջի դրությամբ դարձյալ նշված հոդվածների գծով չիրացված մնացորդներից: Ընդունված է տարեսկզբի չիրացված մնացորդները անվանել մուտքագրվող, տարեվերջինը՝ ելքագրվող: Այստեղից՝ տարեկան հասույթի պլանը.

$Ի_h=Մ_1+Ա-Մ_2$,

$Մ_1$ – մուտքագրվող մնացորդն է,

$Մ_2$ – ելքագրվող մնացորդն է,

Ա – ապրանքային արտադրանքի պլանը:

Վերոհիշյալ մնացորդները և ապրանքային արտադրանքը ձեռ-նարկությունների հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլվում են ինքնարժեքով, սովորաբար առանց արտաարտադրական (կոմերցիոն) ծախսերը ներառելու, հետևաբար, հասույթի պլանը հաշվարկելիս դրանք պետք է արտահայտվեն գներով՝ ելնելով կոնկրետ իրադրությունից. կա՛մ ձեռնարկության մեծածախ, կա՛մ բաց թողման գնից: Իհարկե, ի վերջո, ձեռնարկության համար կարևորագույնը մեծածախ գինն է, որը փոխհատուցում է արտադրության ու իրացման բոլոր ծախսերը և ձևավորում շահույթը: Ապրանքային արտադրանքը համապատասխան գնով արտահայտելու ելակետը թողարկվող արտադրանքի (ծառայությունների) քանակային կազմն է և շուկայական սպասվող գների մակարդակը: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի գները ազատականացված են (բացառությամբ՝ սահմանափակ թվով ապրանքների), ուստի դրանք թելադրվում են շուկայի կողմից և պարզվում են մարքեթինգային հետազոտության միջոցով: Իրացման ենթակա ապրանքային արտադրանքի կազմը ձևավորող տեսականու քանակների և սպասվող գների ար-տադրյալների հանրագումարը կարտահայտի ապրանքային արտադրանքը՝ համապատասխան գներով: Մուտքագրվող մնացորդի գներով արտահայտված արժեքը որոշվում է վերահաշվարկի գործակցի միջոցով: Գործակիցը այս դեպքում իրենից ներկայացնում է նախորդ ժամանակաշրջանի ապրանքային արտադրանքի (համապատասխան գներով) և դրա ինքնարժեքի հարաբերությունը: Նույնպիսի մոտեցմամբ վերահաշվարկվում է նաև ելքագրվող մնացորդը, միայն այն տարբերությամբ, որ վերահաշվարկի գործակցի համար հիմք են ընդունվում պլանային տվյալները:

Այս մոտեցումներից ելնելով, կատարենք իրացումից հասույթի պլանի հաշվարկ՝ երեք տարբերակով՝

-իրացումը կատարվում է ձեռնարկության մեծածախ գնով,

-իրացումը կատարվում է բաց թողման գնով, և ապրանքը ենթակացիզային չէ,

-իրացումը կատարվում է բաց թողման գնով, ապրանքը ենթակացիզային է, և հարկի դրույքը սահմանված է 50%:

Աղյուսակ 10.1.1

Իրացումից հասույթի պլանի հաշվարկ (թվերը պայմանական են)

N	Ցուցանիշները	տարբերակ I	տարբերակ II	տարբերակ III
1.	Ապրանքային արտադրանքը արտադրական ինքնարժեքով (հազ. դրամ)	36000	36000	36000
2.	Ապրանքային արտադրանքը իրացման գներով (հազ. դրամ)	40000	48000	72000
3.	Մուտքագրվող մնացորդը արտադրական ինքնարժեքով (հազ. դրամ)	4000	4000	4000
4.	Մուտքագրվող մնացորդը գնով արտահայտելու գործակիցը (պայմանական)	1,21	-	-
5.	Մուտքագրվող մնացորդը իրացման գներով (հազ. դրամ)	4840	5808	8712
6.	Ելքագրվող մնացորդը արտադրական ինքնարժեքով (հազ. դրամ)	5000	5000	5000
7.	Ելքագրվող մնացորդը գնով արտահայտելու գործակիցը (տող 2 : տող 1)	1,11	-	-
8.	Ելքագրվող մնացորդը իրացման գներով (հազ. դրամ)	5550	6660	9990
9.	Իրացումից հասույթի պլանը (հազ. դրամ) (2+5-8)	39290	47148	70722

Առաջին տարբերակի դեպքում ստացված արդյունքը ամբողջությամբ ներկայացնում է գործառնական գործունեության զուտ հասույթը և գործնականում ուղղվում է ինքնարժեքի մեջ մտնող ծախսերի փոխհատուցման և տնտեսական հետևանքների՝ շահույթի ձևավորմանը: Երկրորդ դեպքում հանդես է գալիս համախառն հասույթը, որից զուտ հասույթին անցնելու համար պահանջվում է առանձնացնել ավելացված արժեքի հարկը: Տվյալ պարագայում զուտ հասույթը հավասար է՝ 47186×100/(100+20)=39290:

Երրորդ տարբերակում համախառն հասույթը ավելի ամբողջական է, ներառում է երկու անուղղակի հարկերը: Դրա կազմում զուտ հասույթի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝ $Ի_h = \frac{70722 \cdot 100 \cdot 100}{120 \cdot 150} = 39290$

10.2. ՁԵՌՆԱՐԿՉԱՏԻՐԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ

Շուկայական հարաբերությունների ազատականացման պայմաններում, երբ ձեռնարկչատիրական գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է սեփականության տարբեր ձևերի համատեղ գոյության ու զուգորդության հիման վրա, տնտեսավարման հիմնական մեթոդը առևտրային հաշվարկն է: Առևտրային հաշվարկի դրսևորման հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ որպես գործունեության նպատակ (արտադրական, առևտրական, սպասարկման և այլն) հռչակվում է շահույթի ստացումը:

Ազատ մրցակցությունը հնարավոր է դարձնում և գործողության մեջ է դնում «ավանսավորված հավասարամեծ կապիտալը պետք է ապահովի հավասար շահույթ» պահանջի իրականացումը: Այս առումով խիստ մեծանում է շահույթի դերը բիզնեսի՝ որպես ֆինանսական արդյունքի գլխավոր հետևանքային ցուցանիշի, իրականացման գործում:

Գործնականում շահույթը իրենից ներկայացնում է սեփականության ցանկացած ձևի ձեռնարկությունների կողմից ստեղծված կուտակումների որոշակի մասի դրամական արտահայտություն: Որպես տնտեսագիտական հասկացություն, այն բնութագրում է ձեռնարկչատիրական գործունեության ֆինանսական հետևանքը: Այս տեսանկյունից էլ շահույթը համարվում է արտադրության արդյունավետության, արտադրված արտադրանքի ծավալի ու որակի, աշխատանքի արտադրողականության ու ինքնարժեքի մակարդակի փոփոխության հետ կապված կարևոր ցուցանիշ՝ միաժամանակ ունենալով առևտրային հաշվարկի հստակեցման, գիտատեխնիկական առաջադիմության, սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսավորման անփոխարինելի աղբյուրի դեր: Զուգահեռաբար, շահույթը ոչ միայն ներտնտեսական կարիքների ապահովման աղբյուր է, այլև՝ բյուջեի եկամուտների և արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման ռեսուրս:

Շուկայական տնտեսության պայմաններում շահույթը ձեռք է բերում բազմանշանակ դեր: Բանն այն է, որ բաժնետիրական, մասնավոր և այլ տիպի ձեռնարկությունները, ստանալով լայն ինքնուրույնություն և անկախության հնարավորություն, իրավունք ունեն որոշելու, թե բյուջեի վերաբերմամբ պարտականությունները կատարելուց հետո իրենց տրամադրության տակ մնացած շահույթից ո՞ր նպատակի համար և որքան հատկացնել:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օրենսդրությունը համապատասխան պայմաններ է ապահովում շահույթ ստանալու նպատակով ձեռնարկությունների նախաձեռնությունները ինքնուրույն իրականացնելու համար: Դա դրսևորվում է նրանում, որ, որպես տնտեսական սուբյեկտ, նրանք ազատորեն իրականացնում են իրենց տնտեսական գործունեությունը, լիիրավ տնօրինում են թողարկվող արտադրանքը և զուտ շահույթը:

Արտադրական ձեռնարկություններում «ֆինանսական արդյունք» հաշվի միջոցով գործունեության հետևանքները գնահատելիս օգտագործվում են համախառն շահույթ, այլ գործառնություններից, արտասովոր դեպքերից ստացվող շահույթ հասկացությունները, ինչպես նաև զուտ շահույթ հարկումից առաջ և հարկումից հետո ցուցանիշները: Ֆինանսական արդյունք 331 հաշվի կրեդիտում

ամփոփվում են բոլոր եկամուտները, որոնց տարբերությունն էլ ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի համախառն շահույթը:

Գործառնական շահույթը, լինելով ձեռնարկության գործունեության վերջնական ֆինանսական արդյունք, իրենից ներկայացնում է եկամուտների ընդհանուր գումարի և արտադրանքի արտադրության ու իրացման վրա կատարված ծախսերի տարբերությունը: Ավելի ճշգրիտ, գործառնական գործունեության շահույթը՝ բացարձակ արտահայտությամբ, ապրանքային արտադրանքի իրացումից զուտ հասույթի և լրիվ ինքնարժեքի դրական տարբերությունն է: Միանգամայն պարզ է, որ շահույթը, լինելով ֆինանսական վերջնական արդյունք, իր մեծությամբ պայմանավորված է գործունեության հետ կապված բազմաթիվ գործոններով: Մասնավորապես, նրա ավել կամ պակաս ծավալով դրսևորվելը կապված է ներդրված կապիտալի, ընդգրկված աշխատուժի, արտադրանքի թողարկման ու իրացման, կատարված ծախսումների ծավալների հետ: Այս առումով էլ, շահույթի տվյալ գումարից ելնելով, հնարավոր չէ միանշանակ պատկերացում կազմել գործունեության արդյունավետության վերաբերյալ, քանի որ պարամետրերը տարբեր են: Արդյունավետությունը գնահատելու համար զուգահեռաբար օգտագործվում է շահութաբերությունը:

Եթե շահույթը արտահայտվում է բացարձակ գումարով, ապա շահութաբերությունը արտադրության արդյունավետության հարաբերական ցուցանիշ է և եկամտաբերությունը բնութագրում է որոշակի ելակետի (բազայի) նկատմամբ տոկոսներով: Ձեռնարկությունը համարվում է շահութաբեր, եթե արտադրանքի իրացումից ստացվող զուտ հասույթը բավարար է ոչ միայն արտադրության ու իրացման ծախսերը փոխհատուցելու, այլև շահույթ ստանալու համար, և որքան մեծ է շահույթի գումարը, այլ հավասար պայմաններում, այնքան բարձր է շահութաբերությունը: Շահութաբերությունը կարող է հաշվարկվել տարբեր ձևերով ու տարբեր ելակետի նկատմամբ, բայց բոլոր դեպքերում հենվելով շահույթի (համախառն կամ զուտ) վրա:

Նախքան շուկայական էկոնոմիկային անցնելը, վերջին 20-25 տարիներին շահութաբերությունը որոշվել է որպես շահույթի տոկոսային հարաբերություն արտադրական ֆոնդերի նկատմամբ կամ ըստ ծախսումների (շահույթի տոկոսային հարաբերություն լրիվ ինքնարժեքին): Ազատ շուկայական հարաբերությունները այս ցուցանիշի նկատմամբ առաջադրում են նոր պահանջներ՝ ընդլայնելով նրա շրջանակները և տալով նոր բովանդակություն:

Այժմ արտադրության ոլորտում շահութաբերությունը կարող է որոշվել համարիչում ունենալով համախառն շահույթը, շահույթը տոկոսները վճարելուց հետո, շահույթը տոկոսները և հարկերը վճարելուց հետո, իսկ հայտարարում՝ ընդհանուր կապիտալը, սեփական կապիտալը, փոխառու կապիտալը, իրացումը վաճառքի գներով, ինքնարժեքով, ակտիվների ընդհանուր գումարը, ոչ ընթացիկ ակտիվները, ոչ ընթացիկ ակտիվների մնացորդային արժեքը և այլն:

Այնուհանդերձ, ձեռնարկության ֆինանսական ցուցանիշների կազմում՝ որպես շահութաբերության գործակիցներ, նախընտրելի են՝

- հաշվեկշռային շահութաբերության նորման,
- զուտ շահութաբերության նորման,
- ակտիվների շահութաբերության նորման,
- ոչ ընթացիկ զուտ ակտիվների շահութաբերությունը:

Հաշվեկշռային շահութաբերության նորման՝

$$P_1' = \frac{\text{հաշվեկշռային շահույթ}}{\text{զուտ հասույթ}},$$

Զուտ շահութաբերության նորման՝

$$P_2' = \frac{\text{զուտ շահույթ}}{\text{զուտ հասույթ}},$$

Ակտիվների շահութաբերության նորման՝

$$P_3' = \frac{\text{զուտ շահույթ}}{\text{ակտիվների գումար}},$$

Ոչ ընթացիկ զուտ ակտիվների շահութաբերություն՝

$$P_4' = \frac{\text{զուտ շահույթ}}{\text{ոչ ընթացիկ ակտիվների մնացորդային արժեք}}:$$

Շահութաբերության բոլոր ցուցանիշները կարող են արտահայտվել տոկոսների կամ գործակիցների միջոցով:

Այսպիսով, շահույթը, թեև ինքնին բնութագրում է ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունավետությունը՝ բացարձակ գումարով, իրական պատկերացում չի տալիս այդ մասին: Ընդհանրապես բացառված չէ, որ տեխնիկատնտեսական ցածր ցուցանիշներ ունեցող, բայց մեծ ծավալի ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվներ (կապիտալ) տնօրինող ու ավելի շատ աշխատողներ ներգրաված ձեռնարկությունները ունենան անհամեմատ մեծ գումարի շահույթ, քան ավելի լավ աշխատող, բայց փոքր չափեր ունեցող ձեռնարկությունները: Մինչդեռ մասնակիցների (բաժնետերեր, ներդրողներ, տնօրինություն և այլն) համար խիստ կարևոր է, թե ստացվող շահույթի յուրաքանչյուր միավորը ի՞նչ է նստում իրենց վրա, ինչ ծավալի միջոցներ ու ակտիվներ են զբաղեցված, ինչպիսին են առարկայացած և կենդանի աշխատանքային ծախսումները: Այս տեսակետից էլ կարևորվում է շահութաբերության ցուցանիշի դերը:

Շահույթը, որպես սեփականության տարբեր ձևերի հիմքի վրա գործող ձեռնարկությունների դրամական կուտակումների հիմնական մասը արտահայտող ցուցանիշ, իր վրա կրում է գործունեության բոլոր բնագավառներում տեղի ունեցող ամենատարբեր փոփոխությունների ազդեցությունը: Շատ զգայուն է հատկապես իրացման ծավալի, արտադրության ու իրացման վրա կատարվող ծախսերի, դրանց կառուցվածքի, արտադրանքի կազմի ու կառուցվածքի և, հատկապես, գների նկատմամբ:

Նրա ելակետային ծավալը և փոփոխությունը (աճը, նվազելը) արդյունք են որոշակի պարամետրերի և դրանցում կատարվող տեղաշարժերի, որպիսիք դրսևորվում են կոնկրետ գործոնների տեսքով: Այդ գործոնները բաժանվում են երկու խմբի՝ ձեռնարկության տնտեսական գործունեությամբ պայմանավորված և դրանից անկախ: Առաջին խմբին վերաբերում են գործառնական գործունեության հիմնական արդյունք հանդիսացող ապրանքային արտադրանքի արտադրության ու իրացման ծավալի, դրա լրիվ ինքնարժեքի, տեսականու կառուցվածքի, որակական կազմի փոփոխությունները, իսկ երկրորդին՝ իրացման շուկայական գների, ծառայությունների սակագների և ավելացված արժեքի հարկի դրույքի (այն

ապրանքների համար, որոնք իրացվում են կարգավորվող գներով և ԱԱՀ-ի փոփոխությանը ուղղակիորեն չեն առնչվում) փոփոխությունները:

Շահույթի աճի համար ազատ շուկայի պայմաններում կարևորագույն գործոն է արտադրանքի արտադրության ու իրացման ծավալների աճը:

Գիտատեխնիկական մշակումների ներդրման արդյունքում աշխատանքի արտադրողականության բարձրացումն ու, հետևաբար, ինքնարժեքի իջեցումը, որակական բարեփոխումները ձեռնարկչատիրական գործունեության զարգացման պայմաններում օբյեկտիվ նախադրյալներ են առաջացնում թվարկված գործոնները արդյունավետ կիրառելու համար:

Տնտեսավարման բոլոր եղանակների պայմաններում ձեռնարկությունների դրամական կուտակումների ձևավորման գլխավոր աղբյուրը արտադրանքի իրացումից հասույթն է, կոնկրետ այն մասը, որը մնում է այդ արտադրանքի արտադրության ու իրացման վրա կատարված նյութական, աշխատանքային և դրամական ծախսերը հանելուց հետո: Ուստի, ամեն մի տնտեսավարող սուբյեկտի համար կարևոր խնդիր է մեծ ծավալի շահույթի ստացումը առավելագույն փոքր ծախսումներով՝ կիրառելով խնայողության խստագույն ռեժիմ ծախսումների նկատմամբ և բարձրացնելով ներդրումների շահագործման արդյունավետությունը: Արտադրության ու իրացման վրա կատարվող ծախսումները ձևավորում են ինքնարժեքի մակարդակն ու կառուցվածքը: Իրացումից հասույթը հաշվարկվում է գործող շուկայական գներով և շուկայի թելադրանքով, այն դառնում է ցանկացած ձեռնարկության գործունեության ամենակարևոր ցուցանիշներից մեկը: Իրականում այդ ցուցանիշն է բաժնետերերի շրջանում բավարար շահագրգռվածություն առաջացնում ոչ այնքան արտադրանքի արտադրության քանակային, որքան իրացման ծավալի ավելացման ուղղությամբ: Դա նշանակում է՝ արտադրել այնպիսի ապրանքներ, որոնք բավարարում են սպառողների պահանջները և ունեն մեծ պահանջարկ:

Շուկայական բարձր պահանջարկ ունեցող ապրանքների արտադրության ու իրացման ծավալների աճը անմիջականորեն անդրադառնում է շահույթի մեծության վրա, ինչը, այլ հավասար պայմաններում, ուղիղ համեմատական է հասույթի աճին:

Եվ այսպես, այնքանով, որքանով շահույթի գումարը հավասար է իրացումից զուտ հասույթի և լրիվ ինքնարժեքի տարբերությանը, նրա աճը, նախևառաջ, կախվածության մեջ է ինքնարժեքի իջեցումից և հասույթի ավելացումից:

Իրացվող արտադրանքի ինքնարժեքի մեջ մտնող արտադրության ու իրացման ծախսերը կազմված են արտադրությունում օգտագործվող բնական ռեսուրսների, նյութերի, վառելիքի, էներգիայի, աշխատանքային ռեսուրսների, ոչ ընթացիկ ակտիվների սպառման արժեքից և այլ ծախսերից: Դրանց կազմը և կառուցվածքը պայմանավորված են կոնկրետ արտադրության բնույթով և ռեգլամենտավորվում են ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքով:

Գործնականում շահույթի վրա ազդող գործոնները և ձևավորման մեխանիզմի պարամետրերը այնպիսին են, որ լիակատար հնարավորություն կա այն կանխատեսելու:

Ձեռնարկչատիրական գործունեության զարգացման համար շահույթի դերի բարձրացումը անհրաժեշտ է դարձնում բոլոր մակարդակներով ճիշտ պլանավորումը և, կախված այն հանգամանքից, թե որքանով է իրական պլանի

հաշվարկը, ֆինանսատնտեսական գործունեության օպերատիվ ընթացքը կունենա համապատասխան գնահատական:

Շահույթի պլանի տնտեսական հիմնավորվածությունը բացառիկ կարևոր է ներտնտեսական կարիքների ֆինանսավորումը ժամանակին իրականացնելու, ներդրումներ ապահովելու, սեփական շրջանառու միջոցների աճը լրացնելու, աշխատավարձ և այլ վճարումներ կատարելու և, հատկապես, բյուջեի ու մատակարարների հանդեպ պարտավորությունները մարելու համար: Հետևաբար, բոլոր օղակներում շահույթի ճիշտ պլանավորումը ելակետային նշանակություն ունի ոչ միայն ձեռնարկչատիրական գործունեության նորմալ ընթացքի, այլև մակրոտնտեսական ցուցանիշների ձևավորման համար:

Շահույթի պլանավորումը, որպես կանոն, իրականացվում է ըստ բնագավառների, առանձին՝ ապրանքային արտադրանքի իրացումից և առանձին-առանձին՝ այլ արտադրանքի և ոչ ապրանքային ծառայությունների, ոչ ընթացիկ ակտիվների իրացման ու արտահիրացումային եկամուտների և ծախսերի գծով:

Հատուկ ուշադրություն է դարձվում առաջին բնագավառի՝ որպես գործառնական գործունեության ֆինանսական վերջնական արդյունքի և ձեռնարկությունների դրամական կուտակումների հիմնական ձևի վրա: Ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանավորման համար գործնականում օգտագործվում են մի քանի եղանակներ: Ելնելով արտադրության կոնկրետ պայմաններից, տեսականու կառուցվածքից, բավարար տվյալներից՝ ձեռնարկությունները կարող են օգտվել մեկ կամ մի քանի եղանակներից, կատարել արդյունքների համեմատություն և կողմնորոշվել:

Ձեռնարկությունների, ֆիրմաների և այլ օղակների մակարդակով շահույթի պլանավորման ավանդական մեթոդները երկուսն են՝ ուղղակի հաշվարկի կատարման եղանակ և տնտեսական կամ անալիտիկ եղանակ: Հայաստանի Հանրապետության տնտեսավարման գործընթացում նոր և ավելի առաջավոր եղանակ կարելի է համարել, այսպես կոչված, գործառնական լծակի ազդեցության ուժի միջոցով ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանի խոշորացված հաշվարկի կատարման եղանակը, որի մասին մանրամասն շարադրվել է նախորդ գլուխներում:

Ուղղակի հաշվարկի էությունն այն է, որ շահույթի գումարը որոշվում է իրացվող արտադրանքի կոնկրետ տեսակների համար առանձին-առանձին՝ որպես ձեռնարկության մեծածախ գնի և լրիվ ինքնարժեքի տարբերություն: Իսկ եթե իրացումը կատարվում է բաց թողման գներով, ապա համապատասխանորեն հանվում է ավելացված արժեքի հարկը, ենթաակցիզային ապրանքների դեպքում՝ ակցիզային և ավելացված արժեքի հարկերը:

Շահույթի պլանավորման այս մեթոդը առավելապես կիրառվում է արդյունաբերության այն ճյուղերում և ձեռնարկություններում, որտեղ արտադրանքի թողարկման տեսականին բազմազան չէ և ինքնարժեքի առաջադրանք նախատեսվում է յուրաքանչյուր տեսակի համար: Արտադրանքի թողարկման լայն անվանացանկ ունեցող ձեռնարկությունների համար այս եղանակի օգտագործումը կապված է լրացուցիչ դժվարությունների հետ, երբեմն նույնիսկ հնարավոր չէ կիրառել, և գործողության մեջ են դրվում այլ եղանակներ:

Իրականացման տեխնիկայով ուղղակի հաշվարկը բավականաչափ պարզ ու մատչելի է, ապահովում է ճշգրիտ արդյունք, բայց ունի որոշակի թերություններ:

Մասնավորապես, հաշվարկված պլանային շահույթի գումարը և հաշվարկի մեխանիզմը պատկերացում չեն տալիս դրա վրա ազդող գործոնների ազդեցության չափի վերաբերյալ, հնարավոր չէ իրական պատկերացում կազմել այն մասին, թե նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ շահույթի բացարձակ աճը որ չափով, ինչ գործոնի ազդեցության արդյունք է, որ մասն է պայմանավորված գործունեության բարելավմամբ, որը՝ անկախ գործոնների փոփոխությամբ:

Հաշվարկը կատարվում է ըստ հետևյալ բանաձևի՝

$$\tau = (Ք \times Գ) - (Ք \times Ի),$$

որտեղ՝

τ – իրացումից շահույթի գումարն է,

Ք – իրացման ծավալը՝ բնեղեն արտահայտությամբ,

Գ – իրացման գինը՝ առանց ակցիզային և ավելացված արժեքի հարկի,

Ի – միավոր արտադրանքի պլանային լրիվ ինքնարժեքը:

Իրացումը քանակային և գումարային արտահայտությամբ որոշելու համար, ապրանքային արտադրանքից բացի, օգտագործվում են նաև փոխանցվող մնացորդները: Թեև հաշվարկի տեխնիկան շատ պարզ ու հեշտ ընկալելի է, պայմանական տվյալներով այն ցուցադրենք ծավալուն տեսքով՝

Աղյուսակ 10.2.2

Ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանի հաշվարկը

N	Արտադրանքի անվանումը	պլանային թողարկումը	միավորի իրացման գինը՝ առանց անուղղակի հարկերի	միավորի պլանային լրիվ ինքնարժեքը	ապրանքային թողարկումը (հազ. դրամ)		շահույթ՝ 6-7 (հազ. դրամ)
					գներով 3x4	ինքնարժեքով 3x5	
	2	3	4	5	6	7	8
	Համեմատելի արտադրանք						
1	կոշիկ տղամարդու	2000	8000	6200	16000	12400	3600
2	կոշիկ կանացի	4000	9000	7100	36000	28400	7600
3	կոշիկ երեխայի	1500	3000	2200	4500	3300	1200
	Ընդամենը	-	-	-	56500	44100	12400
	Ոչ համեմատելի արտադրանք						
1	կոշիկ տնային	500	4000	3800	2000	1900	100
2	կոշիկ սպորտային	2200	6600	5900	14520	12980	1540
	Ընդամենը	-	-	-	73020	58980	14040

	Մուտքագրվող մնացորդ	-	-	-	2190	1440	750
	Ելքային մնացորդ	-	-	-	1800	1380	420
	Ընդամենը ապրանքային արտադրանքի իրացումից	-	-	-	73410	59040	14370

Անալիտիկ մեթոդով շահույթի պլանավորումը համեմատաբար աշխատատար է և հիմնված է մի շարք հաշվարկների վրա: Այն իրականացվում է երեք փուլով: Առաջին փուլը նախապատրաստական է և վերաբերում է բազիսային (ելակետային) շահութաբերության հաշվարկին, որն իրականացվում է նախորդ տարվա փաստացի շահույթի և իրացման փաստացի լրիվ ինքնարժեքի միջոցով: Երկրորդ փուլում պլանով նախատեսված համեմատելի ապրանքային արտադրանքը արտահայտվում է նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով և, ելնելով բազիսային շահութաբերությունից, որոշվում է տվյալ իրացման ծավալի պայմաններում ստացվող շահույթի մեծությունը, երբ բազիսային տարվա շահույթը ձևավորած բոլոր գործոնները մնում են անփոփոխ:

Երրորդ փուլում հաշվի են առնվում պլանային ժամանակաշրջանում շահույթի վրա ազդող գործոնների փոփոխությունների հետևանքները՝ դրական կամ բացասական ազդեցությունը, հետևյալ հաջորդականությամբ՝

- ինքնարժեքի իջեցում (բարձրացում),
- տեսականու կառուցվածքային տեղաշարժեր,
- որակի բարձրացում (իջեցում),
- գների փոփոխություն,
- ԱԱՀ դրույքի փոփոխություն (հաստատուն գներով իրացվող ապրանքների և ծառայությունների համար),
- հաշվարկ ոչ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի վերաբերյալ,
- մուտքագրվող մնացորդներին վերաբերող շահույթի հաշվարկ,
- ելքագրվող մնացորդների շահույթի որոշում,
- իրացումից շահույթի պլանի ամփոփ հաշվարկ:

Սովորաբար հաջորդ տարվա շահույթի պլանավորումը սկսվում է ընթացիկ տարվա վերջին, այդ պատճառով օգտագործվում են անցած ժամանակաշրջանի փաստացի և մնացած ժամանակաշրջանի ճշտված պլանային տվյալները (սպասվող կատարողականը):

Ելակետային շահութաբերությունը որոշելիս պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները:

Հաշվետու տարվա շահույթը ընդունվում է տարեվերջին գործող գների մակարդակին համապատասխան, այսինքն, եթե անցած ժամանակաշրջանի ընթացքում տեղի է ունեցել գների կամ ավելացված արժեքի հարկի դրույքի փոփոխություն, որը անդրադարձել է փաստացի շահույթի վրա, ապա դրանց ազդեցությունը հաշվի է առնվում ըստ ամբողջ ժամանակաշրջանի՝ անկախ փոփոխությունը տեղի ունենալու ժամկետից:

Այնքանով, որ այդ փոփոխված գործոնները հաջորդ (պլանային) տարվա ընթացքում շահույթի վրա անդրադառնալու են լրիվ 12 ամիս, ելակետային

շահութաբերությունը ճիշտ լինելու համար ազդեցության չափերը պարտադիր պետք է վերցվեն հաշվետու ամբողջ տարվա կտրվածքով: Օրինակ, եթե հոկտեմբերի 1-ից նկատվել է գների բարձրացում, և արդյունքում շահույթը ավելացել է, ապա բարձրացումը պետք է տարածել մինչև հոկտեմբեր ընկած ամբողջ ժամանակաշրջանի վրա, հակառակ դեպքում փաստացի շահույթը չի կարող ելակետ լինել բազիսային շահութաբերության համար:

Բազիսային շահութաբերության հաշվարկը ցույց տանք կոնկրետ տվյալների միջոցով:

Պայմանականորեն ընդունենք, որ ընթացիկ տարվա ապրանքային արտադրանքի իրացումից սպասվող հասույթը կազմում է 40000 հազ. դրամ, իրացման լրիվ ինքնարժեքը՝ 36000 հազ. դրամ, իսկ շահույթը՝ 4000 հազ. դրամ, ըստ վերլուծության արդյունքների՝ հոկտեմբերի 1-ից տեղի է ունեցել իրացման գների բարձրացում, որը մինչև տարվա վերջը շահույթի վրա անդրադարձել է 1200 հազ. դրամով:

Պարզվել է նաև, որ իրացումը և շահույթի ստացումը ըստ ամիսների բաշխված են մոտավորապես հավասար չափերով: Պլանային տարվա համար նախատեսված է իրացման ծավալի 10 տոկոս աճ և ինքնարժեքի 4% իջեցում:

Տվյալ պարագայում, բազիսային շահութաբերությունը որոշելուց առաջ, հարկավոր է ճշգրտել ելակետային շահույթը, այն է՝ արտացոլել նաև այն ազդեցությունը, որպիսին կլիներ, եթե արտադրանքը նոր, բարձրացված գներով իրացվեր տարեսկզբից սկսած: Այդ դեպքում, ըստ համամասնական մոտեցման, մեկ ամսվա ազդեցությունը եղել է 400 հազ. դրամ (1200:3), հետևաբար մինչև փոփոխությունը ընկած 9 ամիսների պայմանական ազդեցությունը կլիներ 3600 հազ. դրամ (400×9), իսկ շահութաբերության ելակետ ճշտված շահույթը՝ 7600 հազ. դրամ (4000+3600): Այստեղից՝ շահույթի պլանավորման համար ընդունվող ելակետային շահութաբերությունը՝ $P' = \frac{7600 \times 100}{36000} = 21.1\%$:

Նկատենք, որ շահույթը, գների փոփոխության հետ կապված, չճշգրտելու դեպքում շահութաբերությունը կկազմեր 10% (4000x100/40000) կամ 2 անգամ պակաս: Պատկերացնենք, որ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթը այդ մակարդակով հաշվելու դեպքում սխալվելու հավանականությունը բավականաչափ մեծ է:

Այժմ, ունենալով բազիսային շահութաբերության մակարդակը, որպեսզի որոշենք տվյալ (պլանային) իրացման պայմաններում ստացվելիք շահույթի (իրացման ծավալի ազդեցության) գումարը, անհրաժեշտ է պլանային իրացումը արտահայտել նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով, քանի որ կա ինքնարժեքի իջեցման առաջադրանք (4%), շահութաբերությունը որոշված է նախորդ տարվա փաստացի ինքնարժեքի նկատմամբ, որի հետ պլանային ինքնարժեքը համեմատելի չէ: Այսպիսով, ըստ տվյալների, հաջորդ տարվա իրացման պլանը համապատասխան (անուղղակի հարկերից մաքրված) գներով նախատեսվում է 44000 հազ. դրամ [40000+(40000x10)/100], իսկ ինքնարժեքով՝ 38016 հազ. դրամ: Հետևաբար, պլանային իրացումը նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով արտահայտելու դեպքում կստանանք՝ 39600(38016x x100/(100-4)), իսկ իրացման պլանային ծավալի հաշվին սպասվող շահույթի գումարը (շահույթի

վրա ազդող բոլոր գործոնները նախորդ տարվա մակարդակին մնալու պայմաններում) կկազմի 8356 հազ. դրամ (39600x21.1/100):

Ստացված 8356 հազ. դրամը շահույթի այն մեծությունն է, որի վրա, հաշվի առնելով վերը թվարկված գործոնների փոփոխության դրական կամ բացասական ազդեցությունը, կձևավորվի ապրանքային արտադրանքի իրացումից կամ գործառնական գործունեությունից շահույթի պլանը: Այստեղից էլ շահույթի պլանավորման անալիտիկ եղանակի պահանջն է՝ կատարել այդ գործոնների փոփոխության ազդեցության հաշվարկ: Սկսենք ինքնարժեքից:

Մեր դեպքում նախատեսված է ինքնարժեքի իջեցման առաջադրանք (4%), հետևաբար, գործոնի ազդեցությունը դրական է: Ազդեցության չափը կարող ենք որոշել երկու ձևով. կամ որպես պլանային իրացման նախորդ տարվա փաստացի ինքնարժեքով արտահայտված գումարի և ինքնարժեքի պլանի տարբերություն, կամ ելնելով ինքնարժեքի իջեցման առաջադրանքից: Երկու դեպքում էլ կստանանք նույն արդյունքը՝

1. 39600-38016=1584 հազ. դրամ,
2. 39600x4/100=1584 հազ. դրամ:

Ապրանքային ու նաև իրացվող արտադրանքի տեսականու կառուցվածքը շահույթի մեծությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկն է: Ոչ միշտ է, որ տեսականու մեջ ընդգրկված արտադրատեսակները ունեն գների, ինքնարժեքի և շահութաբերության միատեսակ պարամետրեր: Ավելի հաճախ, դրանք շահութաբերության մակարդակներով շատ տարբեր են: Հասկանալի պատճառներով տեսականու կազմում նախատեսվող փոփոխությունները առաջ են բերում կառուցվածքի, հետևաբար և միջին շահութաբերության փոփոխություն: Իրացման միևնույն ծավալի դեպքում նույնիսկ շահույթի գումարը, դրա հետ կապված, կարող է ավելանալ կամ պակասել: Վերջին հաշվով, այս գործոնի ազդեցությունը դրսևորվում է շահութաբերության միջին գործակցի փոփոխության միջոցով: Այս դեպքում շահութաբերության գործակիցը հավասար է՝ տոկոսային թվի հարաբերությունը հարյուրի, իսկ տոկոսային թիվը համապատասխան տեսակի (խմբի) տեսակարար կշռի և նախորդ տարվա փաստացի անհատական շահութաբերության արտադրյալն է: Անհատական գործակիցների գումարը արտահայտում է միջին շահութաբերության մակարդակը:

Շահութաբերության միջին մակարդակի փոփոխությունը, ինչպես փաստացի, այնպես էլ պլանով նախատեսված տեսականու կառուցվածքի համար, կարող է որոշվել հետևյալ բանաձևով.

$$\pm P' = (P_1' \times \frac{\pm S_1}{100}) + (P_2' \times \frac{\pm S_2}{100}) + \ldots + (P_m' \times \frac{\pm S_m}{100})$$

կամ՝

$$\pm P' = \sum \frac{S_{щ} \times P_0'}{100} - \sum \frac{S_{ф} \times P_0'}{100},$$

որտեղ՝

$P_1', P_2', \ldots P_m'$ - համապատասխան արտադրատեսակների նախորդ տարվա փաստացի շահութաբերությունն է,

S_1, S_2, ...S_m – համապատասխան արտադրատեսակների տեսակարար կշիռն է ընդհանուր իրացման մեջ,

$S_{պ}$ – կոնկրետ արտադրատեսակների տեսակարար կշիռն է պլանային տեսականու կառուցվածքում,

$S_{Φ}$ – կոնկրետ արտադրատեսակների տեսակարար կշիռն է նախորդ տարվա փաստացի տեսականու կառուցվածքում,

P'_0 – նախորդ տարվա փաստացի շահութաբերությունն է՝ ըստ տեսակների (խմբերի):

Միջին շահութաբերության փոփոխության ազդեցությունը շահույթի վրա որոշելու համար օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$\pm \tau = T \times \frac{\pm P'}{100},$$

որտեղ՝

τ - շահույթի փոփոխությունն է,

T - ապրանքային արտադրանքի իրացումն է լրիվ ինքնարժեքով,

P' – պլանային և փաստացի շահութաբերության տարբերությունն է:

Բավականաչափ լայն տեսականի ունեցող ձեռնարկություններում նախապես կատարվում է խմբավորում՝ ըստ շահութաբերության հատկանիշի: Կատարենք կոնկրետ հաշվարկ, ելնելով բերված տվյալներից, ընդունելով նաև, որ նախորդ տարվա իրացումը տեսականու վրա բաշխված է հետևյալ կերպ. կոշիկ տղամարդու՝ 9900, կոշիկ կանացի՝ 11880 և կոշիկ երեխայի՝ 17820 հազ. դրամ: Կազմենք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 10.2.3

Շահույթի վրա տեսականու ազդեցության հաշվարկ

N	Արտադրանքի անվանում (խումբը)	Նախորդ տարի			Պլանային տարի		
		տես կշիռ	շահու-թաբ.	շահ. գործ.	տես. կշի	շահու-թաբ.	շահ. գործ.
1.	կոշիկ տղամարդու	25	5	1,25	28	5	1,4
2.	կոշիկ կանացի	30	10	3,0	64	10	6,4
3.	կոշիկ երեխայի	45	15	6,75	8	15	1,2
		100	x	11,0	100	x	9,0

Այսպիսով, ըստ հաշվարկի տվյալների, արտադրանքի տեսականու կառուցվածքում նախատեսված տեղաշարժերը հանգեցնելու են միջին շահութաբերության՝ 2 տոկոսային կետով իջեցման (9-11), ինչը, անկասկած, հաջորդ տարվա տնտեսական արդյունքի վրա կունենա բացասական ազդեցություն և շահույթի պլանը կնվազեցնի 792 հազ. դրամով (39600x2/100): Նման տեղաշարժը թեև, վերջին հաշվով, ցանկալի չէ, սակայն տեղի է ունենում ձեռնարկության կամքից անկախ, շուկայի թելադրանքով:

Շահույթի պլանի վրա իր դրական կամ բացասական անդրադարձը կարող է ունենալ նաև համեմատելի ապրանքային արտադրանքի որակի փոփոխությունը: Իրացվող արտադրանքի որակական բարեփոխումները կապված են լրացուցիչ

ծախսերի իրականացման հետ, ինչը, վերջին հաշվով, իր անդրադարձը շահույթի վրա կարող է ունենալ ինքնարժեքի միջոցով: Բարձր որակը ապահովում է մեծ պահանջարկ և բարձր իրացվելիություն, միաժամանակ՝ դրական արդյունք: Նյութական արտադրության ոլորտում որակական փոփոխությունները կարող են արժեքային դրսևորում ստանալ կոնկրետ արտադրատեսակների իրացման գների վրա անհատական վերադիրներ նախատեսելու կամ ամբողջ իրացման ծավալը միջին տեսակային գնով արտահայտելու միջոցով: Առաջին դեպքում կատարվում է ուղղակի հաշվարկ՝ փաստացի և պլանային իրացումը արտահայտվում են համապատասխան գներով, տարբերությունը ընդունվում է որպես այդ գործոնի ազդեցություն:

Երկրորդ դեպքում, երբ արտադրանքը գնահատվում է տեսակներով (սորտերով), և նախատեսված են տեսակային գներ, հիմք է ընդունվում տեսակայնության միջին գործակիցների փոփոխությունը: Ելնելով նախորդ տարվա արտադրանքի փաստացի որակական կազմից և պլանային տարվա՝ նույն արտադրատեսակների համար նախատեսվածից, որոշվում են տեսակայնության միջին գործակիցներ (փաստացի և պլանային), որոնց տարբերությունը ցույց է տալիս որակի իջեցումը կամ բարձրացումը նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ: Տեսակայնության գործակցի որոշման ավանդական բանաձևը հետևյալն է՝

$$K = \frac{կգ + կ_1 գ_1 + կ_2 գ_2 + կ_3 գ_3}{100},$$

որտեղ՝

$կ$, $կ_1$, $կ_2$, $կ_3$ - համապատասխանորեն բարձր, առաջին, երկրորդ և երրորդ տեսակների կշիռն է ընդհանուր իրացման մեջ,

$գ$, $գ_1$, $գ_2$, $գ_3$ – համապատասխան տեսակների գներն են՝ հարաբերական արտահայտությամբ (առաջին տեսակի գինը ընդունվում է 100, մյուսները այդ գնի նկատմամբ՝ տոկոսներով):

Այս գործոնի ազդեցությունը ավելի ընկալելի դարձնելու համար կատարենք հաշվարկ հետևյալ օրինակի տվյալներով: Ընդունենք, որ մեր ձեռնարկության պլանային ու փաստացի իրացումը և տեսակային գները ունեն հետևյալ պատկերը.

Աղյուսակ 10.2.4

Տեսակայնության գործակցի հաշվարկ

Տեսակները	Իրացման գումարը ինքնարժեքով		Տեսակարար կշիռը		Իրացման գինը	
	փաստ.	պլան.	փաստ.	պլան.	բացար-ձակ	հարաբ.
I տեսակ	24800	26000	68,9	65,6	8500	100
II տեսակ	10600	9000	29,4	22,7	7000	82,4
III տեսակ	600	4600	1,7	11,7	6500	76,5
Ընդամենը	36000	39600	100	100	x	x

Այստեղից, տեսակայնության միջին գործակիցը, նախորդ տարվա փաստացի կառուցվածքի պայմաններում, կկազմի՝

$$K_{Φ} = \frac{68,9x100 + 29,4x82,6 + 1,7x76,5}{100} = 94,48,$$

իսկ պլանով նախատեսվածի դեպքում՝

$$K_{պլ} = \frac{65,6x100 + 22,7x82,4 + 11,7x76,5}{100} = 93,26$$

Պարզվում է, որ որակական տեղաշարժերը նույնպես շահույթի վրա բացասական ազդեցություն են ունենալու, քանի որ տեսակայնության գործակիցը նվազելու է 1,18 կետով (93,26-94,48): Ազդեցության գումարը կկազմի 467 հազ. դրամ:

Անալիտիկ եղանակով շահույթի պլանավորման ընթացքում հաշվի առնվող հաջորդ գործոնը գների փոփոխությունն է: Ազատականացված գների պայմաններում դրանց մակարդակը նախապես ֆիքսված ու կայուն չէ, տատանումները կրում են ընթացիկ բնույթ և թելադրվում են շուկայական պայմաններով: Այնքանով, որ գները փոխվում են հաճախակի, շահույթը պլանավորելիս այս գործոնը չպետք է շրջանցվի: Ուղեցույց են համարվում մարքեթինգային հետազոտությունների արդյունքով կատարվող կանխատեսումները: Շահույթի վրա գների փոփոխության ազդեցությունը դրսևորվում է տվյալ իրացման ծավալի գործող ու սպասվող գներով՝ զուտ հասույթի տարբերության չափով: Երբ հասույթը ձևավորվում է անուղղակի հարկեր ներառող գներով (բաց թողման գին ակցիզով և ԱԱՀ-ով), այն նախապես պետք է այդ հարկերից զտել:

Հաշվարկը ցույց տանք օրինակի վրա, նախապես ընդունելով, որ սպասվում է տղամարդու կոշիկի գնի 20% բարձրացում, կանանց կոշիկի գնի 15% իջեցում, մյուս արտադրատեսակների գնի փոփոխություն չի սպասվում:

Աղյուսակ 10.2.5

Շահույթի պլանի վրա գների փոփոխության ազդեցության հաշվարկ

Արտադրանքի անվանումը	Իրացման պլան. ծավ. (զույգ)	Բացթողման գինը		Զուտ հասույթը (հ.դ.)		Տարբերություն 6-5 (հ.դ.)
		Գործող	Սպասվող	Գործող գներ 2×3:120	Սպասվող գներ 2×4:120	
կոշիկ տղամարդու	2000	9600	11520	16000	19200	+3200
կոշիկ կանացի	4000	10800	10759.15	36000	358639	-1361
						-1839

Գների փոփոխության ազդեցությունը շահույթի վրա ստացվում է դրական՝ 1819 դրամ:

Արդեն ասվել է, որ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացումից շահույթը որոշվում է ուղղակի հաշվարկի միջոցով՝ որպես զուտ հասույթի և լրիվ ինքնարժեքի տարբերություն: Մեր օրինակում այդ արտադրանքի տեսականին սահմանափակ է, ընդամենը երկու անուն, որոնց իրացումից պլանային հասույթը նախատեսված է 16520 հազ. դրամ (2000+14520), իսկ ինքնարժեքը՝ 14880 հազ. դրամ (1900+12980): Արդյունքում՝ այս գործոնի ազդեցությունը շահույթի պլանի վրա դրական է և կազմելու է 3520 հազ. դրամ:

Շահույթի պլանավորման ուղղակի եղանակի արդյունքներով մեզ համար պարզվել են նաև փոխանցվող մնացորդների մեջ առկա շահույթի գումարները ևս՝ մուտքագրվող մնացորդինը՝ 750 հազ. դրամ (դրական), ելքագրվողինը 420 հազ. դրամ (բացասական): Ի վերջո, անալիտիկ եղանակով շահույթի պլանավորման վերջնական արդյունքի ամփոփ հաշվարկը կունենա հետևյալ պատկերը.

Աղյուսակ 10.2 6

Անալիտիկ եղանակով ապրանքային արտադրանքի իրացումից շահույթի պլանի հաշվարկը

N	Շահույթի վրա ազդող գործոնները	Ազդեցության գումարը (հազ. դրամ)
1.	Համեմատելի ապրանքային արտադրանքի իրացմ ծավալի ազդեցությունը	8356
2.	Ինքնարժեքի փոփոխության ազդեցությունը	1584
3.	Տեսականու կառուցվածքի փոփոխության ազդեցությու	- 792
4.	Իրացվող արտադրանքի որակի փոփոխությ ազդեցությունը	- 467
5.	Իրացման գների փոփոխության ազդեցությունը	- 1839
6.	Ոչ համեմատելի ապրանքային արտադրանքի իրացում շահույթը	3520
7.	Մուտքագրվող մնացորդի հաշվով շահույթը	750
8.	Ելքագրվող մնացորդի հաշվով շահույթը	- 420
9.	Ապրանքային արտադրանքի իրացումից (գործառնակ շահույթի պլանը	14370

Ձեռնարկչատիրական գործունեության հիմնական նպատակի՝ շահույթի ստացման գործում սովորաբար գլխավոր դերը պատկանում է գործառնական բնագավառին, սակայն, շատ հաճախ, գործնականում շահույթ է ստացվում նաև այլ գործունեությունից: Այդ առումով կարևոր խնդիր է շահույթի կազմը որոշելը: Ձեռ-նարկչատիրության ընդհանուր գործունեությունից ստացվող շահույթի ընդհանուր ծավալը իրենից ներկայացնում է **համախառն շահույթը**: Վերջինիս մեծության վրա ազդում է ձեռնարկության գործունեությունից կախված և անկախ գործոնների մի ամբողջություն:

Համախառն շահույթի կազմում առաջին հերթին հաշվի է առնվում հիմնական գործունեության շահույթը, որը գլխավոր դեր ունի: Դրա կազմի մեջ ընդգրկվում է այլ ոչ ապրանքային արտադրանքի և ծառայությունների իրացումից շահույթը, որը,

մասնավորապես, վերաբերում է օժանդակ գյուղատնտեսական, ավտոտրանս-պորտային և այլ տնտեսություններին, որոնք գտնվում են հիմնական ձեռնարկության հաշվեկշռում:

Համախառն շահույթի մեջ մտնում են նաև ոչ ընթացիկ ակտիվների և այլ գույքի իրացումից հասույթը, մնացորդային արժեքի և իրացման հետ կապված ծախսերի տարբերությունը (շահույթը): Վերջապես, համախառն շահույթը ներառում է արտահիրացումային եկամուտներն ու ծախսերը ևս, այսինքն՝ արտահիրացումային հետևանքները:

Այլ իրացումից շահույթը (օժանդակ գյուղատնտեսական տնտեսության, ավտոտնտեսության, ոչ արդյունաբերական ծառայության, կապիտալ շինարարության ու կապիտալ նորոգումների համար և այլն) պլանավորվում է ուղղակի հաշվարկի մեթոդով: Միայն տվյալ արտադրանքի և ծառայությունների խիստ ցածր տեսակարար կշռի դեպքում է, որ շահույթը պլանավորվում է՝ ելնելով ծավալից և հաշվետու ժամանակաշրջանի շահութաբերության մակարդակից:

Այլ իրացման արդյունքը կարող է լինել և՛ դրական, և՛ բացասական:

Արտահիրացումային հետևանքների ավանդական հոդվածներն են՝ տուգանքները, տույժերը և այլն, որոնք հաշվարկվում են՝ ելնելով նախորդ տարիների փորձից և կոնկրետ պայմաններից: Ինչ վերաբերում է այնպիսի հոդվածներին, եկամուտներին, ինչպիսիք են՝ այլ ձեռնարկությունների գործունեությանը բաժնային մասնակցության եկամուտները, գույքը վարձակալության տալը, արժեթղթերի դիմաց տոկոսները, դրանք պլանավորվում են՝ ելնելով տվյալ տնտեսավարող սուբյեկտի ձեռնարկչատիրական գործունեության զարգացման կանխատեսումներից:

Եթե պայմանականորեն ընդունենք, որ այլ արտադրանքի և ծառայությունների իրացումից նախատեսված է 2600 հազարի շահույթ, արտահիրացումային հետևանքներ (դրական)՝ 1400 հազար դրամ, ապա մեր ձեռնարկության համախառն շահույթի պլանը կկազմի 18370 հազ. դրամ (14370 + 2600 + 1400):

Ձեռնարկչատիրական գործունեության մեջ ներգրավված անձանց, նաև հասարակության համար շահույթի պլանավորման գործընթացը, ի վերջո, չի ավարտվում միայն տարեկան սպասվելիք ծավալը որոշելով: Վերջնական արդյունքում նրանց և պետությանը հետաքրքրում է և առավելապես շահագրգռված են իրենց մասնաբաժիններով, դրա հաշվին իրականացվելիք հնարավոր միջոցառումների ծավալով: Բնականաբար, ներդրողները առավել հետամուտ են զուտ շահույթի այն մասին, որը բաշխվելու է շահաբաժինների ձևով, գործընթացը իրականացնողները զուտ շահույթի հաշվին արտադրության մեջ ներդրումների, աշխատողները՝ սոցիալական բարեփոխումների, վարձատրության բարձրացմանն ուղղվող մասով, պետությունը՝ գլխավորապես շահութահարկով ու այլ վճարում-ներով: Հետևաբար, շահույթի պլանավորումը դեռևս շարունակվում է դրա օգտագործման ու ծախսման ուղղությունները մշակելիս: Բնականաբար, շահույթի բաշխումն ու օգտագործումը դիտվում են որպես կարևոր տնտեսական գործընթացներ, որոնցով ապահովվում են ձեռնարկատերերի կարիքների բավարարումը և հանրապետության բյուջեի որոշակի եկամուտների ձևավորումը: Շահույթի բաշխման մեխանիզմի նկատմամբ հիմնական պահանջը, բոլոր ժամանակներում և հատկապես շուկայական էկոնոմիկայի դեպքում, եղել և մնում է տնտեսավարման արդյունավետության բարձրացմանը ամեն կերպ նպաստելը:

Հասարակական արտադրության օբյեկտիվ պայմաններից կախված, շահույթի բաշխման մեխանիզմը մշտապես ենթարկվել է փոփոխությունների և համարվել է տնտեսական ռեֆորմների կենտրոնական հարցերից մեկը: Դրա կարևորագույն խնդիրներից մեկը, ինչպես նախքան շուկայական հարաբերություններին անցնելը, այնպես էլ դրանց զարգացման պայմաններում համարվել և համարվում է պետական բյուջե կենտրոնացվող և տնտեսավարող սուբյեկտների տնօրինմանը թողնվող մասերի միջև օպտիմալ հարաբերակցության ստեղծումը:

Ձեռնարկությունների, կազմակերպությունների համատարած սեփականաշնորհման արդյունքում տնտեսավարող սուբյեկտները իրավունք են ձեռք բերում ստացած շահույթը իրենց հայեցողությամբ օգտագործելու, բացառությամբ այն մասի, որը ենթակա է պարտադիր նվազեցումների և հարկադրման՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Տրամաբանորեն, բոլոր մասնակիցների համար, անհրաժեշտություն է դառնում շահույթի բաշխման հստակ համակարգի գոյությունը, նախևառաջ, զուտ շահույթի ձևավորմանը նախորդող փուլում, այսինքն՝ պետք է նախօրոք ու պարզորոշ հայտնի լինի, թե տնտեսական զուտ արդյունքի որ մասը նրանք կարող են լիիրավ տնօրինել և ինչպիսի մեխանիզմով:

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկությունների շահույթի բաշխումը հիմնականում կանոնակարգվում է «Շահութահարկի մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ–ի մեջ մտնող որոշ երկրների, որտեղ շահութահարկով հարկման ենթակա շահույթի մեծությունը որոշվում է համախառն շահույթից օրենսդրությամբ նախատեսված որոշակի հանումներ կատարելու ճանապարհով, Հայաստանի Հանրապետության վերը նշված օրենքը նախատեսում է բոլորովին այլ մոտեցում:

«Շահութահարկի մասին» օրենքով հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և տվյալ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Տպավորություն է ստեղծվում, որ հարկվող շահույթը հանդես է գալիս շահույթից անկախ: Եվ իրոք այդպես է, փաստորեն, համախառն (հաշվեկշռային) շահույթը բոլորովին այլ, հարկվող շահույթի հետ առնչություն չունեցող մեծություն է և ծառայում է միայն որպես հարկի վճարման աղբյուր: Համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունը, ըստ էության, միջանկյալ արտահայտություն է, բովանդակությամբ գործառնական շահույթի (իրացումից զուտ հասույթի և արտադրության ու իրացման ծախսերի տարբերություն) հետ կարող է նույնական չլինել: Այս առումով պարզ չէ նաև, թե չփոխհատուցվող հարկերի (գույքահարկ, հողի հարկ, տուրքեր և այլն) վճարման աղբյուրը շահույթն է, թե իրացումից հասույթը:

Համախառն եկամուտը, գործող օրենքի իմաստով, ընդգրկում է հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի կողմից ստացված բոլոր եկամուտների ամբողջությունը, անկախ դրանց ստացման աղբյուրից: Մասնավորապես, եկամուտ են համարվում արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, ընթացիկ ու ոչ ընթացիկ ակտիվների իրացումից հասույթը, փոխատվությունների, վարձակալության դիմաց ստացված վճարները, ռոյալթները, շահաբաժինները, ապահովագրական, վնասի փոխհատուցման, պարտքերի, տույժ ու տուգանքների, հայցային վաղեմությունը կորցրած կրեդիտորական պարքերի դիմաց փոխհատուցումներն ու եկամուտները և այլն: Գործնականում եկամուտ չեն

համարվում միայն մասնակիցների կանոնադրական կապիտալում կատարած ներդրումները և արտարժույթի վերագնահատման դրական տարբերությունը:

Նվազեցումները հստակորեն բաժանվում են երեք խմբի՝ ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ: Ծախսերի թվին են դասվում նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովագրության, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի ծախսերը, ապահովագրական, չփոխհատուցվող հարկերի վճարները, փոխառու միջոցների տոկոսները, կոմերցիոն ու այլ ծախսերը:

Ինչպես արդեն նշվել է, շահութահարկը վճարելուց հետո մնում է ձեռնարկության զուտ շահույթը, որը կազմակերպությունը տնօրինում է ինքնուրույնաբար: Իր հայեցողության տակ մնացող զուտ շահույթը կարող է օգտագործվել տարբեր խնդիրներ լուծելու համար՝ ձեռնարկչատիրական գործունեության հետագա զարգացման, ներտնտեսական այլ պահանջների բավարարման: Ոչ մի կազմակերպություն, ընդհուպ նաև պետությունը, իրավունք չունի միջամտելու այդ շահույթի օգտագործման ուղղություններին: Սեփական շահույթի օգտագործման առաջնայնությունները որոշվում են շուկայական պայմաններից ելնելով: Մրցակցության հետագա զարգացումը պահանջ է դնում արտադրության ընդլայնման, կատարելագործման, տեխնիկական հագեցման, աշխատողների նյութական ու սոցիալական պահանջների բավարարման, ինչը և դառնում է գլխավոր կողմնորոշող գործոնը: Զուտ շահույթը, ներկա պայմաններում, սեփական շրջանառու կապիտալի լրացման ամենանպատակահարմար աղբյուրն է, միաժամանակ ուղղվում է նաև հիմնական միջոցների ձեռք բերման, շրջանառու միջոցների պակասը լրացնելու համար ստացած փոխառությունների մարման և ժամկետանց վարկերի դիմաց տոկոսների վճարման նպատակներին:

Արտադրության ընդլայնման, տեխնիկական հագեցման, արդիականացման և այլ միջոցառումներին զուգընթաց, ձեռնարկության զուտ շահույթը կարող է ծախսվել նաև կոլեկտիվի սպառողական ու սոցիալական կարիքների բավարարման նպատակով՝ ի վերջո բաժանվելով կուտակման և սպառման ֆոնդերի: Բոլոր դեպքերում ձեռնարկությունների համար կարևոր խնդիր է սպառման ու կուտակման ֆոնդերին շահույթից տրվող հատկացումների միջև օպտիմալ հարաբերակցության սահմանումը, չանտեսելով պահուստներին հատկացում կատարելու անհրաժեշտությունը (ֆինանսական ռեզերվ, ռիսկային ֆոնդ), իսկ բաժնետիրական ընկերություններում նաև շահաբաժինների ֆոնդի ձևավորումը:

Սեփականության բաժնետիրական ձևը ենթադրում է ակցիաների, փոխառությունների և այլ արժեթղթերի բաց թողում: Դրանք նպաստում են ընդհանուր եկամտաբերության բարձրացմանը և պահանջում են որոշակի բաժնետիրական եկամտի մակարդակ՝ շահաբաժինների տեսքով: Բաժնետոմսերի տեսակով պայմանավորված՝ կարող է ձևավորվել եկամտաբերության տարբեր մակարդակ: Արտոնյալ բաժնետոմսերի դեպքում եկամտաբերության մակարդակը և մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժինը նախապես ֆիքսվում է և, անկախ զուտ շահույթի գումարից, ենթակա է պարտադիր վճարման: Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դեպքում շահաբաժինների չափը պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին հերթին այն կախված է ստացված զուտ շահույթի գումարից, ապա դրանից շահաբաժիններին հատկացնելու հնարավորությունից՝ կապված ավելի առաջնահերթ ծախսեր կատարելու անհրաժեշտության հետ,

ինչպես նաև թողարկվածբաժնետոմսերի ընդհանուր քանակի մեջ արտոնյալ բաժնետոմսերի բաժնի և դրանց եկամտաբերության մակարդակից:

Օրինակ, ընդունենք, որ ձեռնարկությունը թողարկել և իրացրել է 3000 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 1000 դրամ արժեքով: Արտադրանքի իրացումից զուտ հասույթը 40000 հազ. դրամ է, իսկ համախառն շահույթը՝ 4000 հազ. դրամ: Շահույթից բյուջեին ընդհանուր վճարումները կազմել են 800 հազ. դրամ: Այս դեպքում ձեռնարկության զուտ շահույթը կկազմի 3200 հազ. դրամ (4000 – 800), որի 30 տոկոսը ուղղվում է շահաբաժինների վճարմանը: Հետևաբար, սովորական բաժնետոմսերի շահաբաժիններին հատկացվող զուտ շահույթը, ըստ բանաձևի, կունենա հետևյալ արտահայտությունը՝

$$ԶՇԲ = \left(\frac{ԶՇ \ x \ Շտ}{100}\right) - \left(\frac{ԱԱՔ \ x \ Շտ}{100}\right) = \frac{3200 \, x \ 30}{100} = 960 \, հազ.$$

Քանի որ տվյալ ձեռնարկությունը արտոնյալ բաժնետոմսեր բաց չի թողել, զուտ շահույթի 30 տոկոսը լրիվությամբ բաշխվում է սովորական ակցիաների վրա: Արդյունքում, բաժնետոմսերի շահութաբերությունը կլինի 32 տոկոս $\left(\frac{960.000 \, x \ 100}{(3000 \, x \ 1000)}\right)$:

Արտադրական կազմակերպությունների շահույթի օգտագործման ամբողջական պատկերը հստակորեն արտահայտում է ստորև բերվող գծապատկերը:

Հաշվեկշռային շահույթի բաշխման ընդհանուր գծապատկերը



Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է արտադրական կազմակերպության արտարանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հասույթի բովանդակությունը:
2. Որո՞նք են հասույթի մեծությունը պայմանավորող գործոնները:
3. Ո՞րն է շահույթի բովանդակությունը որպես գործունեության նպատակի և արդյունավետության / ֆինանսական հետևանքի/ ցուցանիշի:
4. Որո՞նք են շահույթի վրա ազդող գործոնները և շահույթի ինչպիսի՞ ընկալումներ կան:
5. Որո՞նք են շահույթի պլանավորման եղանակները, ցույց տալ դրանց մեխանիզմներն ու առանձնահատկությունները:
6. Որո՞նք են շահույթի օգտագործման ուղղությունները արտադրական կազմակերպություններում:

Գ Լ ՈՒ Խ 11

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԸ

11.1. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկատիրական ցանկացած գործունեություն իրականացնող կազմակերպություն, անկախ սեփականության ձևից, իրավական կարգավիճակից և ծրագրի ծավալից, անհրաժեշտաբար պետք է նախապես ավանսավորի համապատասխան մեծության կապիտալ, որն առարկայանում է արտադրական շենքերի, կառույցների, մեքենա-սարքավորումների, հարմարանքների, գործիքների, հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, վառելիքի, այլ նյութական արժեքների մեջ, մասամբ մնալով դրամական ձևի տեսքով:

Արտադրական գործունեության մեջ օգտագործվող միջոցները, արտադրությանը մասնակցելու առանձնահատկություններով և օգտակար շահագործման տևողությամբ, տարբեր են: Եթե շենքերը, կառույցները, հոսքային գծերը, սարքավորումներն ու մեքենաները արտադրության գործընթացին մասնակցում են տևական ժամանակաշրջանում, ապա հումքը, հիմնական ու օժանդակ նյութերը, վառելիքը և այլ ընթացիկ ակտիվներ արտադրական գործընթացին իրենց մասնակցությունը ավարտում են շրջապտույտի մեկ փուլի ընթացքում, ընդ որում, սպառվում են ամբողջությամբ և նորից արտադրական գործընթացի մեջ կարող են մտնել լրիվությամբ վերականգնվելուց և համալրվելուց հետո:

Հասարակական կապիտալի շարժումը ամբողջական ընթացք է ստանում հիմնական, շրջանառու և շրջանառության կապիտալների շրջապտույտների միասնության մեջ: Կապիտալի նման ստորաբաժանումը բխում է նրա առանձին մասերի՝ հասարակական ամբողջական, համախառն ներքին և համախառն ազգային արդյունքի արտադրության գործընթացում կատարած ֆունկցիոնալ դերից: Մասնավորապես, արտադրական կապիտալը հիմնականի և շրջանառուի դասակարգելը պայմանավորվում է դրանց նյութական կրողների՝ ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվների արժեքը նոր արդյունքին փոխանցելու տարբերություններով, շրջապտույտի տևողությամբ (օգտակար օգտագործման ժամանակով) և արտադրության մեջ կատարած ֆունկցիոնալ դերով:

Արտադրության միջոցները, անկախ արտադրության իրականացման հասարակական–տնտեսական պայմաններից, միշտ ստորաբաժանվում են աշխատանքի միջոցների և աշխատանքի առարկաների: Արտադրության կապիտալիստական եղանակի պայմաններում աշխատանքի միջոցներն ու առարկաները հանդես են գալիս հիմնական ու շրջանառու կապիտալի ձևով: Արտադրական ֆոնդերը կազմում են արտադրության նյութական հիմքը, իսկ շրջանառու ֆոնդերը սպասարկում են արդյունքի շրջանառության և բաշխման գործընթացը:

Շրջանառու միջոցները, միաժամանակ, կազմակերպության ունեցվածքի բաղկացուցիչ մասերից են: Դրանց դրությունը և օգտագործման

արդյունավետությունը հաջող գործունեության կարևոր նախապայմաններից են: Շուկայական հարաբերությունների զարգացումը առաջ է բերում դրանց կազմակերպման նոր պայմաններ և պահանջներ: Բարձր ինֆլյացիան, չվճարումները և այլ ճգնաժամային երևույթներ կազմակերպություններին դրդում են փոփոխության ենթարկել շրջանառու միջոցների առնչությամբ տարվող քաղաքականությունը, փնտրել համալրման նոր աղբյուրներ, դիտարկել օգտագործման արդյունավետության բարձրացման նոր ուղիներ:

Արտադրության անընդհատության ապահովման պայմաններից մեկը արտադրության միջոցների պարբերական նորացումն է, որն էլ իր հերթին որոշում է վերջիններիս շարժի անընդհատությունը: Շրջանառության մեջ շրջանառու միջոցները հաջորդաբար ընդունում են դրամական, արտադրական և ապրանքային ձևեր, ինչն էլ համապատասխանում է դրանց՝ արտադրական և շրջանառության ֆոնդերի բաժանմանը:

Արտադրական ֆոնդերի նյութական կրողներ են արտադրության միջոցները, որոնք ստորաբաժանվում են աշխատանքի առարկաների և աշխատանքի միջոցների: Պատրաստի արտադրանքը, դրամական միջոցների և հաշվարկների մեջ գտնվող միջոցների հետ միասին, գոյացնում է շրջանառության ֆոնդերը:

Արտադրական ֆոնդերի շրջապտույտը սկսվում է հումքի, նյութերի, վառելիքի և այլ միջոցների գնմանն ուղղված արժեքի ավանսավորումից (դրամական տեսքով)՝ շրջապտույտի առաջին փուլ: Արդյունքում՝ դրամական միջոցները շրջանառության ոլորտից անցնում են արտադրության ոլորտ: Այս դեպքում արժեքը չի ծախսվում, քանի որ շրջապտույտի ավարտից այն վերադառնում է: Առաջին փուլի եզրափակումով ընդհատվում է ապրանքային շրջանառությունը, բայց ոչ՝ շրջապտույտը:

Շրջապտույտի երկրորդ փուլը կատարվում է արտադրության գործընթացում, որտեղ աշխատուժը իրականացնում է արտադրության միջոցների օգտագործումը՝ ստեղծելով նոր ապրանք, որն իր մեջ կրում է փոխանցված և նոր ստեղծված արժեքը: Ավանսավորված արժեքը նորից փոխում է իր ձևը՝ արտադրականից անցնելով ապրանքայինի:

Շրջապտույտի երրորդ փուլը ներառում է արտադրված պատրաստի արտադրանքի իրացումը և դրամական միջոցների ստացումը: Այս փուլում շրջանառու միջոցները նորից անցում են կատարում արտադրության ոլորտից շրջանառության ոլորտ: Ընդհատված ապրանքային շրջանառությունը վերականգնվում է, և արժեքը ապրանքային ձևից վերածվում է դրամականի: Ավարտելով մեկ շրջապտույտ՝ շրջանառու միջոցները մտնում են մյուսի՝ նորի մեջ և, այդպիսով, իրականացվում է դրանց անընդհատ պտույտը: Շրջանառու միջոցների անընդհատ շարժը արտադրության և շրջանառության անխափան գործընթացի հիմքն է:

Արտադրական ֆոնդերի շրջանառության վերլուծությունը ցույց է տալիս, որ ավանսավորվող արժեքը ոչ միայն հաջորդաբար ընդունում է տարբեր ձևեր, այլ նաև անընդհատ և որոշակի չափով մնում է այդ ձևերում:

Կազմակերպությունների ֆոնդերի շրջապտույտը կարող է կատարվել միայն որոշակի՝ դրամական տեսքով ավանսավորված արժեքի առկայության դեպքում: Մտնելով շրջապտույտի մեջ, այն հաջորդաբար փոփոխում է միայն իր

ֆունկցիոնալ ձևը: Դրամական տեսքով՝ նշված արժեքը իրենից ներկայացնում է տվյալ օղակի շրջանառու միջոցները:

Շրջանառու միջոցները հանդես են գալիս, նախևառաջ, որպես արժեքային կատեգորիա: Դրանք նյութական արժեքներ չեն այն առումով, որ դրանցից հնարավոր չէ ստանալ պատրաստի արտադրանք: Հանդես գալով որպես արժեք՝ դրամական տեսքով, շրջանառու միջոցները արդեն շրջապտույտի ընթացքում ընդունում են անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի, արտադրական պաշարների տեսք: Ի տարբերություն ապրանքանյութական արժեքների, շրջանառու միջոցները չեն ծախսվում, չեն սպառվում, այլ ավանսավորվում են՝ մի պտույտի ավարտից հետո դուրս գալով և մտնելով մյուսի մեջ: Ավանսավորման պահը շրջանառու միջոցների էական և տարբերիչ գծերից մեկն է, քանի որ կարևոր դեր է խաղում դրանց տնտեսական սահմանների կայացման գործում:

Շրջանառու միջոցների ավանսավորման ժամանակավոր չափանիշ է ոչ թե եռամսյակային կամ տարեկան ֆոնդերի ծավալը, այլ մեկ շրջապտույտը, որից հետո դրանք համալրվում և մտնում են հաջորդի մեջ: Շրջանառու միջոցների էության դիտարկումը ենթադրում է շրջանառու ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի ուսումնասիրություն: Շրջանառու միջոցների բաղադրիչները (նյութական կրողները)՝ շրջանառության ֆոնդերը և շրջանառու ֆոնդերը, գոյություն ունեն միասնության և փոխկապվածության մեջ, բայց դրանց միջև կան նաև էական տարբերություններ:

Նախ, շրջանառու միջոցները մշտապես գտնվում են գործունեության բոլոր աստիճաններում: Արտադրական պաշարները, լինելով շրջանառու ֆոնդերի մի մասը, անցնում են արտադրության գործընթաց, վերածվում պատրաստի արտադրանքի և առաքվում սպառման: Շրջանառու ֆոնդերը ամբողջությամբ օգտագործվում են արտադրության ընթացքում՝ իրենց արժեքը փոխանցելով պատրաստի արտադրանքին: Դրանց շրջանառվող գումարը կարող է տարվա ընթացքում տասնյակ անգամ գերազանցել շրջանառու միջոցների գումարը՝ ապահովելով յուրաքանչյուր պտույտի կատարման ժամանակ վերամշակում կամ աշխատանքի առարկաների նոր խմբաքանակների օգտագործում, որոնք մնում են տնտեսության մեջ՝ իրականացնելով փակ շրջապտույտ:

Շրջանառու ֆոնդերը իրենց ուղղակի մասնակցությունն են ունենում նոր արժեքի ստեղծմանը, իսկ շրջանառու միջոցները՝ անուղղակի՝ շրջանառու ֆոնդերի միջոցով:

Եթե շրջանառու միջոցները ուղղակի և անուղղակի մասնակցեին նոր արտադրանքի ստեղծմանը, ապա դրանք աստիճանաբար կնվազեին և պտույտի ավարտի պահին պետք է վերանային: Շրջանառու ֆոնդերը, իրենցից ներկայացնելով սպառողական արժեք, հանդես են գալիս միայն արտադրական տեսքով:

Բերված պարագաները ստեղծում են շրջանառու միջոցների և շրջանառու ֆոնդերի շրջանառելիության տարանջատման օբյեկտիվ անհրաժեշտություն:

Շրջանառու միջոցների և շրջանառության ֆոնդերի համեմատությունը, որը շրջանառելիության փուլում շրջանառու միջոցների ֆունկցիոնալ ձևն է, հանգեցնում է հետևյալ արդյունքների: Կազմակերպությունների ֆոնդերի շրջապտույտը ավարտվում է արտադրանքի (ծառայություն, աշխատանք) իրացման գործընթացով: Տվյալ գործընթացի նորմալ իրականացման համար դրանք հիմնական և

շրջանառու ֆոնդերի հետ մեկտեղ պետք է տնօրինեն նաև շրջանառության ֆոնդերը:

Շրջանառության ֆոնդերի պտույտը անխզելիորեն կապված է շրջանառու արտադրական ֆոնդերի պտույտի հետ և կազմում է դրանց շարունակությունն ու եզրափակումը: Կատարելով շրջապտույտ՝ այս ֆունկցիաները միահյուսվում են՝ ստեղծելով մեկ ընդհանուր պտույտ, որի ընթացքում աշխատանքի առարկաների վրա փոխանցված շրջանառու ֆոնդերի արժեքը անցում է կատարում արտադրության ոլորտից շրջանառության ոլորտ, իսկ ավանսավորված արժեքի չափով շրջանառության ֆունկցիայի արժեքը՝ շրջանառության ոլորտից արտադրության ոլորտ: Այսպես իրականացվում է ավանսավորված միջոցների միասնական պտույտը, որը անցնում է տարբեր ֆունկցիոնալ ձևերով և վերադառնում ելակետային դրամական ձևին: Շրջանառու միջոցները, կատարելով շրջապտույտ, արտադրության ոլորտից, որտեղ գործում են որպես շրջանառու ֆոնդեր, անցում են կատարում շրջանառության ոլորտ, որտեղ գործում են որպես շրջանառության ֆոնդեր:

Շրջանառու միջոցների բնորոշումը՝ որպես շրջանառու արտադրական ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի ստեղծվող պաշարների մեջ ավանսավորված դրամական միջոցներ, չի արտացոլում այս կատեգորիայի ամբողջ տնտեսական բովանդակությունը: Այն հաշվի չի առնում, որ դրամական միջոցների որոշակի գումարի ավանսավորման հետ մեկտեղ կատարվում է լրացուցիչ ապրանքի, արժեքի՝ այդ պահուստներում ավանսավորման գործընթաց: Այդ իսկ պատճառով շահութաբեր կազմակերպություններում ֆոնդերի շրջապտույտի ավարտից հետո ստացված շահույթից ավանսավորված շրջանառու միջոցների գումարը աճում է որոշակի չափով: Ոչ շահութաբեր օղակներում ավանսավորված շրջանառու միջոցների գումարը ֆոնդերի պտույտից հետո նվազում է՝ կապված կրած վնասների հետ:

Շրջանառու միջոցները հաճախ նույնացվում են դրամական միջոցներին, մինչդեռ դրանք ուղղակի իմաստով դրամական միջոցներ կոչելն անթույլատրելի է: Այն միջոցները, որոնք առարկայացած են արտադրության կամ շրջանառության մեջ, պետք չէ նույնացնել փողի հետ: Ամբողջական արժեքը ավանսավորվում է դրամական ձևերում և, անցնելով արտադրության և շրջանառության գործընթացները, նորից ընդունում է այդ ձևը: Դրամական միջոցները հանդես են գալիս որպես միջոցների շարժի միջնորդող օղակ:

Այսպես, շրջանառու միջոցները իրենցից ներկայացնում են դրամական ձևով ավանսավորված արժեք, որը դրսևորվում է շրջանառու արտադրական ֆոնդերի և շրջանառության ֆոնդերի անհրաժեշտ, նվազագույն պաշարների պլանաչափ ձևավորման և օգտագործման համար, ինչը ապահովում է արտադրական ծրագրի և հաշվարկների ժամանակին իրականացումը:

Ընդհանրապես շրջանառու միջոցները կատարում են երկու ֆունկցիա՝

1. արտադրական,
2. հաշվարկային:

Կատարելով առաջին ֆունկցիան՝ շրջանառու միջոցներն ավանսավորվում են շրջանառու արտադրական ֆոնդերում, արտադրությանը տալիս են նյութաիրային բովանդակություն, ապահովում են արտադրական գործընթացի անընդհատությունը և իրենց արժեքը ամբողջությամբ փոխանցում նոր արդյունքին՝

ապրանքային արտադրանքին: Արտադրության ավարտից հետո շրջանառու միջոցները անցնում են շրջանառության ոլորտ շրջանառության ֆոնդերի տեսքով, որտեղ կատարում են երկրորդ ֆունկցիան՝ շրջապտույտի ավարտը և շրջանառու միջոցների՝ ապրանքային ձևից դրամականի վերածվելը:

Արտադրական կազմակերպությունների աշխատանքի համաչափությունը և բարձր արդյունավետությունը պայմանավորված են շրջանառու միջոցներով ապահովվածությամբ: Նյութական միջոցների պաշարների ստեղծման նպատակով ավանսավորվող միջոցների անբավարարությունը կարող է հանգեցնել արտադրության կրճատման, արտադրական ծրագրի թերակատարման: Պաշարների մեջ միջոցների ավելորդ կուտակումը, որն ավելի մեծ է, քան իրական պահանջը, հանգեցնում է ռեսուրսների սառեցման, դրանց ոչ արդյունավետ օգտագործման:

Քանի որ շրջանառու միջոցները իրենց մեջ ներառում են ինչպես նյութական, այնպես էլ դրամական ռեսուրսներ, դրանց օգտագործման արդյունավետությունից և կառավարումից կախված է ոչ միայն նյութական արտադրության գործընթացը, այլև սուբյեկտների ֆինանսական կայունությունը:

11.2. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արտադրական գործունեություն իրականացնող կազմակերպություններում շրջանառու միջոցները դրսևորվում են որոշակի կազմով ու կառուցվածքով: Կազմը և կառուցվածքը ընդհանուր տեսքով ցույց են տրված հաշվային պլանում և հաշվապահական հաշվեկշռում: Մաքուր շրջանառու կապիտալը իրենից ներկայացնում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ կրեդիտորական պարտքի տարբերությունը.

ՇԿ = ԸԱ - ԿՊ,

ուստի, վերջինիս բաղադրիչների կառուցվածքում կատարված ցանկացած փոփոխություն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենում դրա չափերի ու որակի վրա: Որպես կանոն, մաքուր շրջանառու կապիտալի նորմալ աճը դիտվում է որպես դրական փոփոխություն, սակայն կարող են լինել նաև ոչ դրական փոփոխություններ: Օրինակ, դրա աճը անհուսալի դեբիտորների ավելացման հաշվին հազիվ թե բավարարի ֆինանսական մենեջերին:

Շրջանառու կապիտալի հիմնական բաղադրիչներից մեկը ձեռնարկության արտադրական պաշարներն են, որոնք իրենց հերթին ներառում են՝

- հումքը և նյութերը,
- անավարտ արտադրությունը,
- պատրաստի արտադրանքը և այլն:

Քանի որ կազմակերպությունը միջոցներ է ներդնում պաշարների ստեղծման համար, ապա պաշարների պահպանման ծախքերը կապված են ոչ միայն պահեստային ծախսերի, այլ նաև ապրանքների փչացման, հնացման ռիսկի հետ, ինչպես նաև կապիտալի ժամանակավոր արժեքի հետ, այսինքն՝ շահույթի այն նորմայի, որը կարող էր ստացվել ռիսկի նույն աստիճանով ներդրումային այլ հնարավորությունների արդյունքում:

Այս կամ այն ծավալով ընթացիկ ակտիվների պահպանման տնտեսական և արտադրակազմակերպչական արդյունքները կրում են յուրահատուկ բնույթ տվյալ տիպի ակտիվների համար: Օրինակ, պատրաստի արտադրանքի մեծ պաշարները (կապված վաճառքի ենթադրվող ծավալի հետ) կրճատում են ապրանքի նկատմամբ դեֆիցիտի առաջացման հնարավորությունը հանկարծակի մեծ պահանջարկի դեպքում: Հումքի և նյութերի բավականին մեծ պաշարները «փրկում են» արտադրական գործընթացի ընդհատումից կամ այլ թանկարժեք փոխարինող նյութերի գնումից՝ համապատասխան պաշարների հանկարծակի չբավարարման դեպքում: Հումքի և նյութերի գնման պատվերների մեծ քանակը թեև հանգեցնում է բավականաչափ պաշարների ստեղծմանը, բայց և այնպես ունի որոշակի իմաստ. կազմակերպությունը կարող է հասնել մատակարարներից գների իջեցման (քանի որ մեծաքանակ պատվերները սովորաբար ենթադրում են որոշակի արտոնություններ, որոնք, որպես կանոն, ներկայացվում են զեղչերի տեսքով): Նույն պատճառով նախընտրելի է ունենալ պատրաստի արտադրանքի բավականաչափ պաշարներ, ինչը հնարավորություն է ընձեռում շուկայի աճող պահանջները ապահովելու համար, որի արդյունքում հենց ինքը, որպես կանոն, գնորդներին առաջարկում է զեղչեր: Ֆինանսական մենեջերի խնդիրն է՝ պարզել պաշարների պահպանման հետ կապված ծախսերն ու հնարավոր արդյունքը և կազմել նորմալ հաշվեկշիռ:

Դեբիտորական պարտքը շրջանառու կապիտալի կարևոր բաղադրիչներից է: Երբ մի ձեռնարկություն ապրանք է վաճառում մյուսին, դա դեռ չի նշանակում, որ վճարումը կատարվելու է անմիջապես: Մատակարարված ապրանքների դիմաց չվճարված (կամ վճարման ենթակա) հաշիվները կազմում են դեբիտորական պարտքի մեծ մասը: Դեբիտորական պարտքի յուրահատուկ տարր են ստացման մուրհակները՝ իրենց էությամբ՝ արժեթղթեր: Ֆինանսական մենեջերի խնդիրներից մեկը գնորդների անվճարունակության ռիսկի աստիճանի որոշումն է, կասկածելի պարտքերի կանխատեսելի ռեզերվի հաշվարկը, ինչպես նաև երաշխավորագրերի ներկայացումը՝ փաստացի կամ պոտենցիալ անվճարունակ գնորդների հետ աշխատանքի վերաբերյալ:

Դրամական միջոցները և արժեթղթերը ընթացիկ ակտիվների առավել լիկվիդային մասն են՝ շրջանառու կապիտալի բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցներին վերաբերում են՝

- դրամը դրամարկղում,
- դրամը հաշվարկային և դեպոզիտային հաշիվներում:

Արժեթղթերը՝ կարճաժամկետ ֆինանսական ներդրումները, ներառում են՝

- այլ ձեռնարկությունների արժեթղթեր,
- պետական պարտատոմսեր և այլն:

Արժեթղթերի և կանխիկ միջոցների միջև ընտրություն կատարելիս ֆինանսական մենեջերը լուծում է արտադրականին համարժեք խնդիր: Մշտապես գոյություն ունեն դրամական միջոցների մեծ պաշարների ստեղծման հետ կապված առավելություններ. դրանք թույլ են տալիս կրճատել կանխիկության պակասի ռիսկը և ընձեռում են պահանջների բավարարման հնարավորություն: Մյուս կողմից, ժամանակավորապես ազատ, չօգտագործվող դրամական միջոցների պահպանման հետ կապված ծախքերը ավելի շատ են, քան արժեթղթերում կարճաժամկետ ֆինանսական ներդրումների հետ կապված ծախսերը (մասնավորապես, դրանք կարելի է պայմանականորեն ընդունել չստացված

շահույթի չափով) հնարավոր կարճաժամկետ ֆինանսավորման դեպքում: Այսպիսով, ֆինանսական մենեջերը պետք է լուծի կանխիկ միջոցների օպտիմալ պաշարների վերաբերյալ խնդիրները:

Ընթացիկ պարտավորություններին վերաբերում է կարճաժամկետ կրեդիտորական պարտքը, նախ և առաջ՝ բանկային փոխատվությունը և այլ ձեռնարկությունների չվճարած հաշիվները: Շուկայական հարաբերությունների պայմաններում փոխատվությունների հիմնական աղբյուր են ծառայում առևտրային բանկերը: Որպես կանոն, բանկերը պարտապանից պահանջում են ապրանքա-նյութական արժեքներով վարկերի ապահովվածություն: Երկընտրանքային տարբերակ է դեբիտորական պարտքի մի մասը որոշակի զիջումով ֆինանսական կազմակերպություններին տրամադրելը: Հետևաբար, որոշ ձեռնարկություններ կարող են կարճաժամկետ ֆինանսավորման հիմնախնդիրները կարգավորել իրենց ընթացիկ ակտիվների գրավադրման, իսկ մյուսները՝ դրանց մասնակի վաճառքի ճանապարհով:

Շրջանառու կապիտալի նյութական կրողներ հանդիսացող ընթացիկ ակտիվները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման (ՀՀՀՀ) նոր ստանդարտներով արտացոլվում են Հաշվապահական հաշվառման հաշիվների ցանկի երկրորդ դասի հաշիվներում:

Դաս 2–ի 2.1. հաշիվը վերաբերում է պաշարներին: Պաշարները ներառում են՝ նյութերը (2.1.1), աճեցվող և բտվող կենդանիները (2.1.2), արագամաշ առարկաները (2.1.3), անավարտ արտադրությունը (2.1.4), արտադրանքը (2.1.5), ապրանքները (2.1.6):

Այդ դասի 2.2 հաշիվը վերաբերում է գործառնական և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերին, 2.4–ը՝ ընթացիկ ֆինանսական ներդրումներին, 2.5–ը՝ դրամական միջոցներին, 2.6–ը՝ այլ ընթացիկ ակտիվներին:

Պաշարների խմբի նյութեր ենթախումբը (2.1.1) ընդգրկում է՝

- հումք և նյութեր,
- գնովի կիսաֆաբրիկատներ, համալրող շինվածքներ և դետալներ,
- վառելիք,
- տարա և տարային նյութեր,
- պահեստամասեր,
- շինանյութեր,
- գյուղատնտեսական նշանակության նյութեր,
- վերամշակման հանձնված նյութեր,
- այլ նյութեր հոդվածները:

Արտադրանք (2.1.5) ենթախմբի մեջ մտնում են՝

- պատրաստի արտադրանքը,
- սեփական արտադրության կիսաֆաբրիկատները,
- կոնսինգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված արտադ-րանքը,
- բեռնված արտադրանքը:

Ապրանքներ (2.1.6) ենթախումբը ներառում է՝

- ապրանքներ պահեստում,
- ապրանքներ մանրածախ առևտրում,
- տարա և տարանյութ,

- կոնսինգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված ապրանքներ,
- բեռնված ապրանքներ,
- այլ ապրանքներ հոդվածները:

Համաձայն ՀՀՀՀ ստանդարտ 2–ի՝ պաշարներ են համարվում այն ակտիվները, որոնք՝

- պահպանվում են սովորական (ամենօրյա) գործունեության ընթացքում վաճառքի համար,
- արտադրության ընթացքում են և նախատեսված են վաճառքի համար,
- արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Ըստ նշված ստանդարտի՝ պաշարներն ընդգրկում են՝

- ապրանքներ, ներառյալ՝ կազմակերպությունների կողմից գնված և վաճառքի համար պահվող ապրանքները, հողակտորը և այլ ունեցվածքը,
- պատրաստի արտադրանքը,
- անավարտ արտադրությունը,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք նախատեսված են արտադրության ընթացքում օգտագործելու համար,
- արագամաշ առարկաները:

Պաշարների մեջ ներառվող բոլոր ակտիվները գնահատվում են ինքնարժեքով և իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Ինքնարժեքը պետք է ներառի ձեռք բերման ծախսերը, արտադրանքի վերամշակման ծախսումները և պաշարները տվյալ վայր բերելու հետ կապված այլ ծախսերը: Պաշարների ձեռք բերման ծախսումները ներառում են ձեռք բերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարումները, կոմիսիոն վճարները, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման ու այլ ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռք բերման հետ:

Վերամշակման ծախսերը ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, օրինակ, արտադրական անձնակազմի աշխատավարձը: Դրանք ընդգրկում են նաև պատրաստի արտադրանքի վրա բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսերը, որոնք իրականացվում են արտադրության ընթացքում: Հաստատուն արտադրական վերադիր ծախսերի բաշխումը կատարվում է՝ ելնելով արտադրական սարքավորումների նորմատիվային հզորությունից, անկախ հզորությունների փաստացի օգտագործումից: Փոփոխուն արտադրական ծախսերը միավոր արտադրանքի վրա բաշխվում՝ են ելնելով արտադրական հզորությունների փաստացի օգտագործման մակարդակից: Տեսականու բազմազանության դեպքում, երբ դրանք արտադրվում են համատեղ, վերամշակման ծախսերը դրանց վրա բաշխվում են ռացիոնալ և համամասնական սկզբունքներով:

Պաշարների ինքնարժեքը, սովորաբար, արտադրված ապրանքների և ծառայությունների համար պետք է հաշվարկվի կոնկրետ ինքնարժեքի որոշման ճանապարհով (կալկուլյացիա), ինչը ընդունելի չէ պաշարների մեծ միավորների առկայության դեպքում: Նման հանգամանքներում օգտագործվում է պաշարների մնացորդի ընտրության մեթոդը, ըստ որի, ինքնարժեքը որոշվում է «Առաջինը

մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (ՖԻՖՕ), «Վերջինը մուտք՝ առաջինը ելք» ՎՄԱԵ (ԼԻՖՕ) կամ միջին կշռված արժեքի բանաձևով:

Գործող ստանդարտի համաձայն, արագամաշ առարկաներին վերաբերում են այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Այդ ակտիվների շարքն են դասվում, օրինակ, պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, ժամանակավոր կառույցները, հատուկ հագուստը և կոշկեղենը, անկողնային պարագաները, այլ գույքը: Արագամաշ առարկաների արժեքը ծախսումների համապատասխան հաշիվներին դուրս է գրվում շահագործման հանձնելու պահին:

ՀՀՀՀ ստանդարտ 2–ում ընդգրկված ընթացիկ ակտիվների խմբերն ու տարրերը բնութագրում են շրջանառու կապիտալի կազմը, իսկ դրանց՝ ընդհանուր շրջանառու կապիտալի մեջ ունեցած տեսակարար կշիռները արտահայտում են կառուցվածքը: Կազմը նույնատիպ գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպություններում գրեթե նույնն է, իսկ կառուցվածքային տարբերությունները բավականաչափ մեծ են՝ հատկապես ըստ արտադրության ճյուղերի պատկանելության կազմակերպությունների, ինչը պայմանավորված է արտադրության առանձնահատկություններով, թողարկվող արտադրանքի բնույթով և մատակարարման–իրացման, հաշվարկների կազմակերպման պայմաններով:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանառու կապիտալի նյութական կրողների մեջ իրենց ծավալով ամենախոշորը, նշանակությամբ ու դերով ամենակարևորը հումքը և նյութերն են, որոնք կազմում են թողարկվող արտադրանքի հենքը: Դրանց պահանջվող ծավալի ու կառուցվածքի պաշարների առկայությունը արտադրական ծրագրի կատարման գլխավոր նախադրյալներից մեկն է: Միաժամանակ, հումքի, հիմնական նյութերի և գնովի կիսաֆաբրիկատների որակական հատկանիշը անմիջականորեն անդրադառնում է արտադրվող արդյունքի սպառողական արժեքի վրա, հետևաբար, պայմանավորում է նաև այն գները, որոնցով դրանք կարող են իրացվել: Իրենց արժեքով հումքը և նյութերը ձևավորում են արտադրության ծախսերի գերակշռող մասը՝ կազմելով փոխանցվող արժեքի ամենավճռական տարրերից մեկը: Ընթացիկ ակտիվների այս խումբը արդյունաբերական ձեռնարկությունների շրջանառու միջոցների թվում իր տեսակարար կշռով կազմում է 35–40 տոկոս:

Ընթացիկ ակտիվների մեջ բավականաչափ մեծ է նաև արտադրության վրա կատարված ծախսումների բաժինը, հատկապես անավարտ արտադրության և սեփական արտադրության կիսաֆաբրիկատների: Ընդհանուր առմամբ այն գերազանցում է 20 տոկոսը, իսկ ծանր մեքենաշինությունում՝ ավելի քան 35–40 տոկոսը:

Շրջապտույտի անընդհատությունն ապահովելու համար ամեն մի արտադրական կազմակերպություն զուգահեռաբար պետք է ունենա շրջանառության ֆոնդերի որոշակի ծավալ, ինչի մեծությունը և կառուցվածքը պայմանավորված են տվյալ արտադրության ու իրացման ծավալով, նյութական արժեքների ստացման ու ապրանքների իրացման դրվածքով, հաշվարկավճարային փոխհարաբերությունների գործընթացով և այլն: Շրջանառության ֆոնդերը ընդգրկում են վաճառքի համար նախատեսված արտադրանքի ու ապրանքների

լայն շրջանակ, դրամարկղում ու բանկային հաշիվներում դրամական միջոցները, դեբիտորական պարտքերը և այլն: Այս խմբի կազմը իր արտացոլումն է գտնում ՀՀՀՀ ստանդարտ 2–ի պաշարներ խմբում՝ հաշվառվելով 2–րդ դասի 2.1.5, 2.1.6, 2.2 հաշիվներում:

Վերարտադրական գործունեության մեջ շրջանառու միջոցների դրամական ձևը կատարում է առանձնահատուկ դեր: Դա դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն մյուս ֆունկցիոնալ ձևերի, միայն տվյալ ձևով են ապահովվում փոխհարաբերությունները միմյանց, բյուջեի, սոցիալական մարմինների, վարկային համակարգի, աշխատողների և այլ կազմակերպությունների հետ: Հենց այդ ձևում գտնվող ակտիվներով է կատարվում միջոցների հետագա բաշխումն ու վերաբաշխումը նաև ներտնտեսական կարիքների կուտակման ու սպառման պահանջների բավարարման նպատակով: Թեև, ընդհանրապես, ազատ դրամական միջոցների բաժինը ընդհանուր շրջանառու միջոցների մեջ կազմում է 5–6 տոկոս, սակայն ներկա, լրիվ չձևավորված ու կանոնակարգված շուկայական հարաբերությունների պայմաններում ավելացել է դրանց ծավալն ու մեծացել է դերը՝ հատկապես միջտնտեսական փոխհարաբերությունների իրականացման գործում: Տնտեսական մարմինների ազատ դրամական միջոցների առաջացման պատճառները կապված են ընթացիկ ակտիվների շրջապտույտի առանձնահատկությունների հետ. մասնավորապես, կարևոր գործոն է միջոցների ստացման և ծախսման ժամկետների միմյանց չհամապատասխանելը:

Ինչպես ասվեց, արտադրության տարբեր ճյուղերում շրջանառու կապիտալի կառուցվածքը միատեսակ չէ: Այն տարբեր է նույնիսկ միևնույն ճյուղի նույնատեսակ արտադրանք թողարկող ձեռնարկություններում: Տարբերությունները պայմանավորված են արտադրանքի և ճյուղի կոնկրետ առանձնահատկություններով, կազմակերպությունների տեխնիկական զինվածության ու մասնագիտացման աստիճանով, կիրառվող տեխնոլոգիայով, իրացման ու հաշվարկների կազմակերպման պայմաններով և այլն:

Ամբողջության մեջ, սովորական պայմաններում, ընթացիկ ակտիվների ավելի քան 3/4 կազմում են ապրանքանյութական արժեքները, որոնցում էլ գլխավորը պաշարներն են: Այս առումով էլ ֆինանսական մենեջերի կողմից շրջանառու կապիտալի մեջ ավանսավորվող գումարի մեծությունը որոշելիս հատուկ ուշադրություն է դարձվում տվյալ և այլ կանխատեսելի ընթացիկ ակտիվների պահանջը որոշելուն:

Շրջանառու միջոցները, լինելով կազմակերպությունների գործունեության իրականացման կարևորագույն գործոն և ունեցվածքի բաղկացուցիչ մաս, ֆինանսական կառավարման հիմնական ոլորտներից մեկն են հատկապես սկզբնական օղակներում: Շրջանառու միջոցների դրությունը և օգտագործման արդյունավետությունը ֆիրմաներում, նախ և առաջ, պայմանավորված են դրանց պահանջի կանխատեսման և գործունեության մեջ միջոցների ավանսավորման հաշվարկների հավաստիությամբ: Այս բնագավառի կառավարման անհրաժեշտությունն ու դերը չափազանց մեծ են հատկապես անցումային ժամանակաշրջանի համար, երբ ռիսկերը խիստ մեծ են, կորուստ կրելու հավանականությունը՝ բարձր:

Շրջանառու միջոցների պահանջի պլանավորումը միկրոմակարդակով ֆինանսական պլանավորման բնագավառներից մեկն է և պետք է գտնվի

տնտեսավարող սուբյեկտների և պետական համապատասխան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում: Մինչդեռ, ինչպես միկրոմակարդակով ֆինանսական պլանավորումը, այնպես էլ նրա այս բնագավառը Հայաստանի Հանրապետությունում լրիվ անտեսված են: Արտադրական–ֆինանսական ծրագրի ցուցանիշներն են իրական այն ելակետերը, որոնց վրա կառուցվում են մակրոտնտեսական հետևանքները՝ հատկապես բյուջեի եկամուտները, հակառակ պարագայում ամեն ինչ որոշվում է աչքաչափով, ինչը գործնականում դրսևորվել է պետական բյուջեի կազմման ընթացքում:

Կազմակերպության ծրագրի անխափան կատարման համար կարևոր է ոչ միայն շրջանառու միջոցների ծավալը, այլև կառուցվածքը, ակտիվների այն նվազագույն մնացորդը, որն անհրաժեշտ է տվյալ արտադրական ծրագրի իրականացման համար: Ակտիվների և դրանց ձևավորման աղբյուրների մեծությունը պետք է բխի արտադրական ծրագրի պարամետրերից և լինի օպտիմալ, ինչը հնարավոր է ապահովել միայն կոնկրետ պլանավորում (նորմա-վորում) իրականացնելու միջոցով:

11.3. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ

Շրջանառու միջոցների կազմակերպումը ֆինանսական կառավարման բնագավառներից մեկն է: Այն իրականացվում է որոշակի սկզբունքներով և օրինաչափություններով: Գլխավոր պահանջն այն է, պլանավորվող կամ գործունեության իրականացման ամբողջ ժամանակաշրջանում ընթացիկ ակտիվների մեջ ավանսավորված միջոցների օպտիմալ քանակությունը լինի այնպիսին, որ լիովին բավարարի արտադրական ծրագրի կատարման համար անհրաժեշտ պաշարների ստեղծման և որոշակի ծախսեր կատարելու պահանջները: Ազատ շուկայի պայմաններում շրջանառու կապիտալի ռացիոնալ կազմակերպումը հենվում է դրանց ձևավորման ու օգտագործման բնագավառում կազմակերպությունների լայն ինքնուրույնության վրա: Բնականաբար, ֆիրմաները իրենք են որոշում միջոցների նկատմամբ ընդհանուր պահանջը, ընթացիկ ակտիվների նյութական խմբերի մեծությունը, ըստ բնագավառների բաշխվածությունը և ձևավորման աղբյուրները: Առևտրական հաշվարկը և շահույթ հետապնդելու հանգամանքը նրանց զրկում է սխալվելու իրավունքից, շեղումները չպետք է գերազանցեն թույլատրելի սահմանները, չպետք է առաջացնեն լրացուցիչ ծախս կատարելու և ընդունված ծրագիրը ձախողելու ռիսկ: Այդ տրամա-բանությամբ, բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար շրջանառու միջոցների ճիշտ կազմակերպումն ու կառավարումը դրանց արդյունավետության օգտագործման գրավականներից կարևորագույնն են:

Շրջանառու միջոցների կառավարումը կոչված է լուծելու հետևյալ խնդիրները՝

- ընթացիկ ակտիվների կազմի և կառուցվածքի սահմանում,
- դրանց նկատմամբ ընդհանուր պահանջի որոշում,
- շրջանառու միջոցների ձևավորման աղբյուրների նախատեսում,
- շրջանառու միջոցների տնօրինման և մանևրելու հնարավորությունների բացահայտում,

- միջոցների արդյունավետ օգտագործման և պահպանման ապահովության կանխատեսում:

Շրջանառու միջոցների նյութական կրողների գերակշիռ մասը կազմում են աշխատանքի առարկաները և դրսևորվում են պաշարների ձևով: Բացի դա, զգալի բաժին ունեն նաև որոշ աշխատանքի միջոցներ՝ արագամաշ առարկաներ, գործիքներ, փոխարինող հարմարանքներ, պահեստամասեր, արտահագուստ, կոշիկ և այլն: Այս ամենը արտադրական ծրագրի մեծության հետ ունեն ուղղակի առնչություն, զգայուն են նրա նկատմամբ և փոփոխվում են վերջինիս փոփոխությանը համամասնորեն: Թեև դրանց գծով պաշարների մեծությունը կախվածության մեջ է նաև արտաքին բազմաթիվ գործոններից, այնուհանդերձ, կանխատեսելի են և կարող են ճշգրտությամբ պլանավորվել:

Տեսականորեն շրջանառու միջոցները, կանխատեսվելու առումով, ստորաբաժանվում են նորմավորվողի և չնորմավորվողի: Տնտեսավարման հայրենական պրակտիկան ավանդաբար նախընտրում է առանձին խմբերի ու տարրերի գծով պաշարների պլանային նորմաների ու նորմատիվների սահմանումը: Չնորմավորվող շրջանառու միջոցների պահանջը որոշվում է օպերատիվ տվյալների հիման վրա:

Ամեն դեպքում սեփական շրջանառու միջոցների պահանջի որոշումը իրականացվում է նորմավորման միջոցով:

Նորմավորման նպատակն է որոշել շրջանառու միջոցների այն ռացիոնալ ծավալը, որն անհրաժեշտ է արտադրության և շրջանառության ոլորտների նորմալ գործունեությունն ապահովելու համար:

Շրջանառու միջոցների նորմավորումը իրականացվում է դրամական արտահայտությամբ: Վերջիններիս նկատմամբ պահանջի որոշման հիմքում դրված են պլանավորվող ժամանակաշրջանի ընթացքում թողարկվող արտադրանքի ծավալը և արտադրության ծախսումների նախահաշիվը: Միաժամանակ, արտադրության ոչ սեզոնային ճյուղերի ձեռնարկությունների համար, որպես հաշ-վարկների հիմք, օգտագործվում են չորրորդ եռամսյակի տվյալները, որտեղ արտադրանքի ծավալը, որպես կանոն, տարեկան ծրագրում ամենամեծն է: Արտադրության սեզոնային բնույթի կազմակերպությունների համար օգտագործում են արտադրության ամենափոքր ծավալ ունեցող եռամսյակի տվյալները, քանի որ շրջանառու միջոցների սեզոնային պահանջը նպատակահարմար է ապահովել բանկերի կարճաժամկետ փոխատվությունների հաշվին:

Նորմատիվի որոշման գլխավոր ցուցանիշը նորմավորվող շրջանառու միջոցների միջին օրական ծախսն է՝ դրամական արտահայտությամբ: Ըստ կոնկրետ պաշարների, միջին օրական ծախսը հաշվարկվում է՝ ելնելով արտադրության ծախսերի հաշվետվության համապատասխան հոդվածներից: Անավարտ արտադրության վրա ծախսերը սահմանվում են՝ ելնելով համախառն կամ ապրանքային արտադրանքից, պատրաստի արտադրանքի գծով՝ ապրանքային արտադրանքի արտադրական ինքնարժեքից:

Նորմավորման ընթացքում սահմանվում են մասնակի և ամբողջական նորմատիվներ:

Նորմավորման գործընթացը բաղկացած է մի քանի հաջորդական փուլերից: Նախ և առաջ, մշակվում են պաշարի նորմաներ՝ նորմավորվող շրջանառու միջոցների յուրաքանչյուր տարրի գծով: Նորման հարաբերական մեծություն է, որը

համապատասխանում է շրջանառու միջոցների յուրաքանչյուր տարրի ընթացիկ պաշարին: Որպես կանոն, նորմաները սահմանվում են պաշար–օրերի տեսքով:

Պաշարների նորման կարող է սահմանվել նաև տոկոսներով՝ որոշակի բազայի նկատմամբ:

Ի վերջո, շրջանառու միջոցների ամբողջական նորմատիվը իրենից ներկայացնում է ապրանքանյութական արժեքների պլանային այն նվազագույն պաշարների դրամական արտահայտությունը, որն անհրաժեշտ է տվյալ ծրագրի պայմաններում ձեռնարկության նորմալ տնտեսական գործունեությունը ապահովելու համար:

Ավանդաբար օգտագործում են շրջանառու միջոցների նորմավորման հետևյալ հիմնական մեթոդները՝

1. ուղղակի հաշվարկի մեթոդ,
2. անալիտիկ հաշվարկի մեթոդ,
3. գործակցային մեթոդ:

Ուղղակի հաշվարկի մեթոդի էությունն այն է, որ, նախ, որոշվում է ընթացիկ ակտիվների յուրաքանչյուր տարրի մեջ ավանսավորվող շրջանառու միջոցների մեծությունը, ապա, դրանք գումարելով՝ նորմատիվի ընդհանուր գումարը:

Անալիտիկ հաշվարկի մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ պլանավորվող ժամանակաշրջանում կազմակերպության գործունեության մեջ էական կառուցվածքային փոփոխություններ չեն նախատեսվում և հիմնականում պահպանվում են նախորդ ժամանակաշրջանի պայմանները: Այս դեպքում շրջանառու միջոցների նորմատիվի հաշվարկը իրականացվում է խոշորացված ձևով, հաշվի առնելով արտադրության և նորմավորվող շրջանառու միջոցների մեծության ծավալների աճի հարաբերակցությունը նախորդ ժամանակաշրջանում:

Գործակցային մեթոդի կիրառման դեպքում նորմատիվը որոշվում է բազիսային ժամանակաշրջանի նորմատիվի ճշգրտման միջոցով՝ հիմնականում ելնելով համախառն արտադրանքի պլանային աճի տեմպերից:

Նորմավորման պրակտիկան ցույց է տվել, որ առավել նպատակահարմար է օգտվել ուղղակի հաշվարկի մեթոդից, քանի որ արդյունքները շատ ավելի հավաստի են, ուստի հնարավոր է կատարել մասնակի և ամբողջական նորմատիվների առավել ճշգրիտ հաշվարկներ:

Ապրանքանյութական արժեքների պաշարների ձևավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների (նորմատիվի) որոշման սկզբունքային բանաձևը հետևյալն է՝

ՖՄ (կամ նորմատիվը) = N (նորմա) x U (օրական սպառում):

Օգտագործվող հումքի, հիմնական նյութերի և գնովի կիսաֆաբրիկատների՝ ըստ անվանացանկի միջին օրական ծախսը հաշվարկվում է դրանց՝ համապատասխան եռամսյակի ծախսերի գումարի և եռամսյակի օրերի թվի հարաբերությամբ:

Պաշարների նորմաների որոշումը նորմավորման առավել բարդ և կարևոր մասն է: Պաշարների նորման կազմվում է ըստ նյութերի յուրաքանչյուր խմբի և տեսակի: Եթե օգտագործվում են հումքի և նյութերի շատ տեսակներ, ապա նորման սահմանվում է ըստ հիմնական տեսակների:

Պաշարների նորման՝ օրերով, ըստ հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների, սահմանվում է՝ ելնելով տրանսպորտային, տեխնոլոգիական,

նախապատրաստական, ընթացիկ պահեստային և ապահովագրական պաշարների ստեղծմանը անհրաժեշտ ժամանակից:

Տրանսպորտային պաշարները անհրաժեշտ են այն դեպքում, երբ ճանապարհին բեռների շարժման արագությունը գերազանցում է դրանց հաշվարկային փաստաթղթերի ստացման ու վճարման արագությանը: Մասնավորապես, տրանսպորտային պաշարները նախատեսվում են նյութերի դիմաց նախնական վճարման պայմանով փոխհարաբերությունների դեպքում:

Տրանսպորտային պաշարը, սովորաբար, նախատեսվում է գնորդ կազմակերպությունների մոտ: Դրա անհրաժեշտությունը հետևանք է այն բանի, որ ապրանքանյութական արժեքների և դրանց վճարման փաստաթղթերի շարժումը, ժամանակի առումով, միմյանց չեն համընկնում, հատկապես այլ քաղաքային մատակարարումների դեպքում: Դրա հետևանքով, հայտնի ժամանակի ընթացքում, ընթացիկ ակտիվների որոշակի մասը տվյալ կազմակերպության շրջանառությունից դուրս է գալիս առանց համապատասխան փոխհատուցման: Այսպես, երբ մատակարարը գնորդին ապրանքներ է առաքում, դրանք նրա շրջանառությունից դուրս են գալիս, իսկ գնորդը նախքան ստանալը այդպիսիք օգտագործել չի կարող: Բնականաբար, երկուսն էլ ունենում են շրջանառու միջոց-ների նկատմամբ լրացուցիչ պահանջ՝ մատակարարը առաքումից մինչև դրանց արժեքը վճարելու, գնորդն հարկային հաշիվը վճարելու պահից մինչև ապրանքները նշանակման վայրը հասնելու տևողության սահմաններում:

Գործնականում արդյունաբերական կազմակերպությունները հումք, նյութեր և գնովի կիսաֆաբրիկատներ ստանում են բազմաթիվ մատակարարներից: Տարբեր մեծություններով են արտահայտվում բեռների և հաշվարկային փաստաթղթերի վազքի տևողությունները: Բնականաբար, հարկ է լինում համապատասխան խմբերի գծով տրասպորտային պաշարի նորմաները որոշել ըստ կոնկրետ մատակարարների և, ապա, ելնելով ընդհանուր մատակարարումների մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշռից, դուրս բերել միջին նորման:

Այնքանով, որ լայն անվանացանկի դեպքում նման մոտեցումը շատ աշխա-տատար է, բացի դա, պլանավորման նախօրյակին բավարար տվյալներ ձեռք բերել հնարավոր չէ, ուստի, շատ հաճախ տրանսպորտային պաշարի միջին նորման որոշվում է՝ ելնելով նախորդ ժամանակաշրջանում բեռների՝ ճանապարհին վճարված միջին մնացորդներից: Սկզբնական հաշվառման տվյալներով, մնացորդները, անհրաժեշտ ճշտումներ կատարելուց հետո, հարաբերում են համապատասխան խմբի օրական պահանջի (ծախսի) վրա և ստանում տրանսպորտային պաշարի նորման: Այդպիսի հաշվարկ կազմվում է այդ խմբի մեջ մտնող բոլոր տարրերի համար և, ապա, դարձյալ հաշվի առնելով ընդհանուր ստա-ցումների մեջ դրանց տեսակարար կշիռներն ու անհատական նորմաները, որոշվում է միջին նորման:

Հումքի, հիմնական նյութերի, գնովի կիսաֆաբրիկատների և վաճառքի նպատակով ձեռք բերվող ապրանքների պաշարներ ստեղծելու համար շրջանառու միջոցների նորմայի հաջորդ բաղկացուցիչ տարրը դրանց ընդունման, բեռնաթափման, տեսակավորման և պահեստավորման համար պահանջվող ժամանակն է: Այդ պահանջը կոչվում է նախապատրաստական և ստեղծվում է, քանի որ ձեռնարկությունները ստացված հումքը, նյութերը և ապրանքները անմիջապես օգտագործել և վաճառել չեն կարող, որոշակի ժամանակ է

պահանջվում վերը նշված գործողությունները կատարելու համար: Նախապատրաստման հետ կապված յուրաքանչյուր գործառնության տևողությունը սահմանվում է՝ ելնելով գործող կամ ձևավորված տեխնիկական նորմաներից կամ կատարելով ժամանակաչափում:

Առանձին դեպքերում, նախապատրաստական պաշարից զատ, սահմանվում է տեխնոլոգիական պաշարի նորմա: Երբեմն, առանձին արտադրություններում ստացված ընթացիկ ակտիվները (հումքը, նյութերը, կիսաֆաբրիկատները) հնարավոր չէ անմիջապես հիմնական արտադրություն բաց թողնել, անհրաժեշտորեն պահանջվում է կիրառել տեխնոլոգիական գործընթացներ (չորացում, հնացում, հասունացում, խմորում, ջերմամշակում և այլն): Տեխնոլոգիական պաշարի նորմայի մեծությունը պայմանավորված է երկու գործոններով՝ տվյալ գործընթացի տևողությամբ և դրանով անցման ենթակա մասի ընդհանուր ծախսի մեջ ունեցած տեսակարար կշռով: Դա հավասար է՝ $\frac{t \times d}{100}$ (t–ն տեխնոլոգիական գործընթացի միջին տևողությունն է, իսկ d–ն՝ դրանով անցնող մասի տեսակարար կշիռը): Կարող է լինել նաև այլ մոտեցում այդ նորմայի որոշման համար: Մասնավորապես, հնարավոր է տվյալ խմբի համար սահմանել մասնակի նորմատիվ և, հարաբերելով ընդհանուրի օրական ծախսին, ստանալ տեխնոլոգիական պաշարի նորման: Օրինակ, եթե արտադրության ծախսումների նախահաշվով այդ խմբի տվյալ եռամսյակի ընդհանուր ծախսը նախատեսված է 270 մլն դրամ, որի 30 տոկոսը պարտադիր ենթակա է տեխնոլոգիական մշակման՝ 60 օր տևողությամբ, ապա, առաջին ձևով, տեխնոլոգիական պաշարի նորման կկազմի՝ $\frac{60 \times 30}{100} = 18$ օր: Երկրորդի դեպքում հարկավոր է հաշվել այդ խմբի համար շրջանառու միջոցների մասնակի նորմատիվը, ինչը հավասար է օրական ծախսի և նորմայի արտադրյալին՝ $\frac{(270 \times 30) \times 60}{100 \times 90} = 54$ մլն դրամ:

Նորման նույնպես կկազմի 18 օր $\left(54 : \frac{270}{90}\right)$:

Շրջանառու միջոցների նորմատիվային պաշարների մեջ, սովորաբար, ավելի մեծ է ապրանքային մնացորդների ընթացիկ պաշարի բաժինը, որի պահանջը որոշելը համեմատաբար աշխատատար է: Հումքի և նյութերի ընթացիկ պահեստային պաշարը նրանց մշտական անհրաժեշտ մնացորդն է, որը լրիվ նախապատրաստված է արտադրական գործընթացի մեջ մտնելու կամ վաճառքը կազմակերպելու համար: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում հնարավոր չէ կազմակերպել և ապահովել դրանց ամենօրյա ստացումը: Այդ պաշարները կոչված են ապահովելու արտադրության կամ վաճառքի անխափան գործընթացը: Առևտրական հաշվարկի տեսանկյունից՝ ընթացիկ պաշարները պետք է լինեն նվազագույն, եթե հնարավոր է՝ օպտիմալ: Բոլոր դեպքերում արտադրական ու առևտրական կազմակերպությունների համար ձեռնտու է նյութերի ու ապրանքների ամենօրյա ստացումը: Հաճախակի ստանալու դեպքում փոքրանում է դրանց միջակայքը, պակասում՝ ընթացիկ պաշարների մեջ ավանսավորվող գումարը, բնականաբար, շրջանառու միջոցների նկատմամբ պահանջը, կրճատվում են պահեստավորման

ու պահպանման ծախսերը, հետևաբար՝ մեծանում է գործառնական ակտիվությունը:

Ընթացիկ պաշարների մեծությունը կապված է կոնկրետ ծախսերի կատարման հետ (պահպանում, սպասարկում), որի մինիմիզացումը ներկայացնում է օպտիմալացման խնդիր և պետք է լուծվի նորմավորման ընթացքում:

Արտադրական պաշարների գծով դա մատակարարվող հումքի, նյութերի և այլնի օպտիմալ մեծության որոշումն է: Գործնականում, որքան մեծ է մեկ խմբաքանակի ստացման ծավալը, այնքան հարաբերականորեն փոքր են նրա տեղավորման ծախսերը (փոխադրում, ընդունում), սակայն դա կանխորոշում է պաշարի միջին ծավալի մեծ լինելը: Եթե հումքը գնվի ամիսը մեկ անգամ, ապա պաշարի միջին մեծությունը կլինի 30 օրվա պահանջի չափով, իսկ երկու անգամի դեպքում՝ 15 օրվա:

Մատակարարման մեկ խմբաքանակի մեծ ծավալով ստացման դեպքում (ամիսը 1 անգամ) սպասարկման ծախսը նշանակենք ԸՏ$_1$, իսկ երկու անգամի դեպքում (երբ ծավալը կրկնակի նվազում է)՝ ԸՏ$_2$: Այս դեպքում մատակարարման միավորի օպտիմալ մեծության հաշվարկը՝ սպասարկման ծախսերի մինիմիզացման պայմաններում՝ ԸՏ$_1$+ԸՏ$_2$ = min, կատարվում է հետևյալ բանաձևով (Ուիլսոնի մոդել)՝

$$\text{Մոs} = \sqrt{\frac{2 \text{ x Ընթ x ԸՏ}_1}{\text{ԸՏ}_2}}$$

Մոs – մատակարարման օպտիմալ ծավալը,

Ընթ – ընթացիկ պաշարի մեծությունը,

ԸՏ$_1$ – ամիսը մեկ անգամ ստանալու դեպքում միավորի սպասարկման ծախսը,

ԸՏ$_2$ – ամիսը երկու անգամ ստանալու դեպքում միավորի սպասարկման ծախսը:

Որպես կանոն, ընթացիկ պահեստային պաշարի գծով շրջանառու միջոցների նորման հումքի և նյութերի խմբերի համար ընդունվում է մատակարարումների միջին միջակայքի 50 տոկոսի չափով:

Դա հիմնավորվում է նրանով, որ կազմակերպություններում բոլոր նյութերի և ապրանքների պաշարները չեն կարող միաժամանակ լինել առավելագույն: Այդ պաշարները կայուն մեծություն չեն. մատակարարման պահին հասնում են առավելագույնի և հաջորդի նախօրյակին իջնում են նվազագույնի: Միաժամանակ նկատի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ խմբի մեջ մտնող տարրերից մեկի պաշարը որոշակի պահի կարող է լինել առավելագույն, մյուսներինը՝ նվազագույն, որոշ մասի գծով միջին պաշար ունենալու պայմաններում: Այն դեպքում, երբ կազմակերպությունը օգտագործում է սահմանափակ տեսականու նյութեր, և մատակարարների թիվը ևս սահմանափակ է, ընթացիկ պաշարի համար կարող է նախատեսվել ավելի բարձր նորմա, ընդհուպ մինչև այդ միջակայքի 100 տոկոսի չափով:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ ընթացիկ պահեստային պաշարի նորման հավասար է երկու հաջորդական մատակարարումների միջև ընկած ժամկետի կեսին:

Հումքի, հիմնական նյութերի, գնովի կիսաֆաբրիկատների և ձեռք բերվող այլ ապրանքների պաշար ստեղծելու համար շրջանառու միջոցների նորմայի վերջին

տարրի՝ ապահովագրական պաշարի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ, սովորաբար, շրջանառու միջոցների նորմավորումը կատարվում է՝ ելնելով պլանային և նախատեսված տնտեսական պայմանագրերի ցուցանիշներից: Գործնականում բոլորովին էլ բացառված չեն մատակարարների կողմից ապրանքանյութական արժեքների առաքման ժամկետների խախտումներ կամ իրենց մեղքով, կամ տրանսպորտի և այլ պատճառներով: Տվյալ բնագավառի ռիսկերի հետ կապված բացասական հետևանքները կանխելու և գործունեության նորմալ ընթացքը ապահովելու համար կազմակերպություններում պետք է ստեղծվի լրացուցիչ երաշխիքային (ապահովագրական) պաշար: Քանի որ ապահովագրական պաշար ստեղծելու անհրաժեշտությունը կապված է պատահական գործոնների հետ, ուստի դրա մեծությունը կանխատեսելը որոշակի դժվարություն է ներկայացնում:

Այսպիսով, ընթացիկ նյութական ակտիվների նշված կարևորագույն խմբերի համար արտադրական պաշարի ընդհանուր նորման իրենից ներկայացնում է նշված հինգ նորմաների գումարը, իսկ նորմատիվը՝ դրա և եռամսյակի արտադրական ծրագրով նույն խմբի համար նախատեսված օրական ծախսի արտադրյալը:

Արտադրական կազմակերպությունների նյութական պաշարների կազմում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունեն օժանդակ նյութերը: ՀՀՀՀ նոր ստանդարտներով ընթացիկ ակտիվների կազմում այդպիսիք թեև առանձնացված չեն, սակայն նորմավորման ընթացքում չեն կարող նույնացվել մյուս նյութերի ու ապրանքների հետ, այնքանով, որ ձևավորման ու օգտագործման գործընթացի տարբերությունները բավականաչափ մեծ են: Դրանց անվանացանկը գրեթե բոլոր արտադրական կազմակերպություններում շատ լայն է: Այդ պատճառով էլ նորմավորման նպատակով օժանդակ նյութերը պետք է ստորաբաժանել երկու խմբի՝ մեծ չափով օգտագործվողի և փոքր (աննշան) չափով օգտագործվողի: Առաջին խմբի նորմատիվը կարելի է որոշել հումքի և հիմնական նյութերի համար կիրառվող մեթոդով: Երկրորդ խմբի նորմատիվային պահանջը նպատակահարմար է հաշվել ավելի պարզ ձևով:

Փոքրարժեք և արագամաշ առարկաների խումբը ՀՀՀՀ նոր ստանդարտներով արտացոլվում է արագամաշ առարկաներ 2.1.3 հաշվում: Դրանք դրսևորվում են լայն անվանացանկով և կարող են ունենալ տարբեր ուղղվածություն՝

- ընդհանուր նշանակության առարկա և հարմարանք,
- արագամաշ տնտեսական գույք,
- հատուկ արտահագուստ և կոշկեղեն,
- հատուկ գործիք,
- արտադրական տարա և այլն:

Միաժամանակ, այդ խմբերը կարող են գտնվել պահեստներում և շահագործման մեջ: Վերջիններիս գծով նորմատիվ չի կարող նախատեսվել, քանի որ շահագործման հանձնելիս դրանց լրիվ արժեքը դուրս է գրվում համապատասխան ծախսային հոդվածին: Պահեստային մնացորդների պահուստները հաշվարկվում են՝ ելնելով կամ կազմակերպության անձնակազմի միջին ցուցակային թվից և անձնակազմի մեկ անդամի համար նախատեսված նորմայից (դրամով)՝ որպես դրանց արտադրյալ (ընդհանուր նշանակության գույք, արտահագուստ, կոշկեղեն և այլն), կամ 1000 միավոր արտադրանքի հաշվով

(ձեռնարկության մեծածախ գներով) արագամաշ առարկաների նորման բազմապատկելով պլանային տարվա համապատասխան ցուցանիշով (պահեստամասեր, գործիքներ, արտադրական տարա և այլն):

Շրջանառու միջոցների նյութական կրողների երկրորդ խոշորագույն խումբը անմիջական արտադրության գործընթացում գտնվող ընթացիկ ակտիվներն են՝ անավարտ արտադրությունը և գալիք ժամանակաշրջանի ծախսերը, որպիսիք շրջանառու միջոցների մեջ կազմում են՝ ավելի քան 25 տոկոս արդյունաբերությունում, մինչև 40 տոկոս՝ խոշոր մեքենաշինությունում:

Արտադրական կազմակերպությունների անավարտ արտադրության համար շրջանառու միջոցների պահանջը (նորմատիվը) արտահայտում է դրամական միջոցների այն ամբողջությունը, որն անհրաժեշտ է ծախսված ընթացիկ ակտիվները, աշխատավարձը, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը և այլ արտադրական ծախսերը ավանսավորելու համար:

Այս բնագավառի միջոցների նկատմամբ պահանջի ձևավորման գործում ուրույն է ծախսումների ռեժիմի դերը: Գործնականում արտադրության միևնույն ծավալի և նույն տևողության պայմաններում անավարտ արտադրությունում միջոցների միջին մնացորդը, հետևաբար և շրջանառու միջոցների նկատմամբ պահանջ կարող է արտահայտվել ավելի կամ պակաս գումարով, եթե տվյալ արտադրությունը բնութագրվում է ծախսումների կատարման տարբեր ռեժիմով: Երբ ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում արտադրության սկզբին, փոքր մասը՝ հետագա օրերին կամ վերջին, անավարտ արտադրությունում միջոցների միջին մնացորդը կարտահայտվի ավելի մեծ գումարով, քան հակառակ դասավորության դեպքում: Անավարտ արտադրության հետ կապված՝ շրջանառու միջոցների նորմատիվը որոշելիս այս հանգամանքը հաշվի է առնվում արտադրության ծախսումների աճի կամ ինքնարժեքի գործակցի միջոցով: Ծախսումների աճի գործակիցը, ըստ էության, իրենից ներկայացնում է անավարտ արտադրության մեջ ավանսավորված (ծախսված) միջոցների միջին մնացորդի հարաբերությունը ընդհանուր ինքնարժեքին (ծախսերին): Սովորաբար, անավարտ արտադրության մեջ ավանսավորված միջոցները, ավանսավորման օրից կախված, ունեն այնտեղ մնալու տարբեր տևողություն: Բնականաբար, առաջին օրերին կատարվածները մնում են ավելի երկար, և եթե նրանց բաժինը ավելի մեծ է, միջին մնացորդը կունենա բարձր մակարդակ:

Ծախսումների աճի գործակցի հաշվարկման համար կարող են ցուցաբերվել տարբեր մոտեցումներ, ինչը պայմանավորված է ծախսերի՝ ըստ օրերի հավասար կամ անհավասարաչափ բաշխվածությամբ, ռեժիմը հստակ հայտնի լինելու հանգամանքով և այլն: Այսպես, օրինակ, եթե արտադրության սկզբին կատարվող որոշակի մեծության միանվագ ծախսերի պարագայում հետագա ծախսերը, ըստ մնացած օրերի, բաշխված են հավասարաչափորեն, գործակիցը կարող է որոշվել միանվագ ծախսերի և հետագա ծախսերի կեսի գումարը բաժանելով ընդհանուր ծախսերին. $K=\frac{Մ+0,5Հ}{Մ+Հ}$ (Մ-ը միանվագ ծախսերն են, Հ-ն՝ հետագա ծախսերը):

Եթե նշված պահանջը ապահովված չէ, կարող է օգտագործվել հետևյալ ալգորիթմը՝

$$K = \frac{\sum_{i=1}^{m} S_i t_i}{\sum S \times t} = \frac{S_1 t_1 + S_2 t_2 + \ldots + S_m t_m}{(S_1 + S_2 + \ldots + S_m)t}$$

Հնարավոր է կիրառել նաև հետևյալ սկզբունքը. ըստ օրերի՝ անավարտ արտադրության վրա ծախսված միջոցների աճողական մնացորդների հանրագումարը բաժանել ընդհանուր ծախսի և տևողության արտադրյալին:

Պատրաստի արտադրանքի և իրացման ենթակա ապրանքների պաշարներ ստեղծելու համար շրջանառու միջոցների նորմատիվային պահանջը արդյունք է այն բանի, որ, սովորաբար, դրանք արտադրելուց և ձեռք բերելուց անմիջապես հետո իրացնել հնարավոր չէ: Ժամանակ է պահանջվում համապատասխան խմբաքանակի հասցնելու, փաթեթավորելու, տրանսպորտային միջոցներին բեռնելու, փաստաթղթերով ձևակերպելու և առաքելու համար: Թվարկված գործառնությունների կատարման տևողությունը ընդունվում է որպես նորմա, իսկ նորմայի և օրական թողարկվող արտադրանքի ծավալի (ինքնարժեքով արտահայտված) արտադրյալը ներկայացնում է նորմատիվի գումարը:

Հսկիչ մեթոդը շրջանառու միջոցների պլանավորման ավանդական մոտեցումներից մեկն է, որը լայնորեն օգտագործվել է միավորումների և գերատեսչությունների մակարդակով: Տվյալ մեթոդը կիրառելիս ամբողջ շրջանառու միջոցները բաժանվում են երեք խմբի: Խմբավորման հատկանիշը արտադրական ծրագրի հետ ունեցած կապի ուղղակի կամ անուղղակի լինելն է:

Ինչպես գործունեությանը վերաբերող ծախսերը, այնպես էլ դրանց իրականացման նյութական ու դրամական հիմքերը լինում են ուղղակի փոփոխական, ուղղակի և անուղղակի հաստատուն: Այս դեպքում հումքը, նյութերը, վառելիքը, տարան, անավարտ արտադրությունը, պատրաստի արտադրանքը արտադրական ծրագրի փոփոխությանը արձագանքում են անմիջականորեն, և դրանց պաշարները, նաև ծախսը ավելանում կամ պակասում են նույն համամասնությամբ, եթե սահմանափակող այլ գործոններ չկան: Արագամաշ առարկաները, գործիքները, վերանորոգման պահեստամասերը ծրագրի փոփոխությանը կարող են արձագանքել պակաս չափերով. նրանց աճի տեմպը միշտ հետ է մնում ծրագրի տեմպից: Իսկ գալիք ժամանակաշրջանի ծախսերը կարող է բոլորովին կապ չունենան ծրագրի և բազմաթիվ այլ ցուցանիշների հետ: Ուստի, առաջին խմբի շրջանառու միջոցների նորմատիվը որոշելու համար ելակետ է ընդունվում նախորդ ժամանակաշրջանի նորմատիվը և համախառն, ապրանքային կամ իրացվող արտադրանքի աճի տեմպը: Նոր նորմատիվը ստացվում է նախորդը համապատասխան տեմպերով ավելացնելու ճանապարհով: Եթե փոփոխություն է նախատեսված շրջանառու միջոցների այս խմբի շրջանառելիության ցուցանիշի մեջ (արագացում, դանդաղում), ապա հաշվի է առնվում դրա ազդեցությունը ևս:

Գործնական կիրառություն կարող է ունենալ հետևյալ բանաձևը.

$$ՊՆ = \frac{ՆՆ \times ԱՏ}{100}\left(1 - \frac{Ա}{100}\right),$$

ՊՆ – պլանային ժամանակաշրջանի նորմատիվն է,

ԱՏ – համախառն արտադրանքի աճի տեմպը,

Ա – շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման տոկոսը:

Բանաձևի առաջին մասը արտահայտում է այդ խմբի ընթացիկ ակտիվների պաշար ստեղծելու համար շրջանառու միջոցների պահանջը՝ առանց արագացումը հաշվի առնելու, երկրորդը՝ իրական պահանջը շրջապտույտի նախատեսված ցուցանիշների պայմաններում:

11.4. ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Շրջանառու կապիտալի ծավալը, նրա ձևավորման աղբյուրների կազմն ու կառուցվածքը անմիջականորեն պայմանավորված են ընթացիկ ակտիվների կառավարման գործընթացով: Արդեն հայտնի է, որ կազմակերպությունների ակտիվները ստորաբաժանվում են ոչ ընթացիկի (հիմնական միջոցները, հողը, շենքերը, կառույցները, սարքավորումները, այլ հիմնական միջոցներ) և ընթացիկի: Ոչ ընթացիկ ակտիվները համարվում են դժվար իրացվելի այն առումով, որ դրամական ձևի վերադառնալու համար պահանջվում է երկար ժամանակ և, նաև, լրացուցիչ ծախսերի կատարում: Ընթացիկ ակտիվները, իրենց հերթին, դրամի վերածվելու հնարավորության ավել կամ պակաս արագության առումով կարող են լինել դանդաղ և արագ իրացվելի: Միաժամանակ, հիմնական՝ ոչ ընթացիկ ակտիվները և ընթացիկ ակտիվների այն մասը, որը բավականաչափ երկար ժամանակի (տարվա) ընթացքում մնում է անփոփոխ մակարդակի վրա, կախվածության մեջ չեն սեզոնային տատանումներից, կազմում են կայուն ակտիվները, մյուսները՝ ոչ կայունը:

Այս ամենի ձևավորման աղբյուրները կազմում են կազմակերպության պասիվները, որոնք բաժանվում են սեփականի և փոխառուի: Սեփական միջոցները, երկարաժամկետ փոխառությունները ամփոփվում են մշտական, իսկ կարճաժամկետ վարկերը, փոխառությունները, կրեդիտորական պարտքը և երկարաժամկետ վարկերի մի մասը (որոնց մարման ժամկետը լրանում է ընթացիկ տարում)՝ ընթացիկ (փոփոխուն) պասիվներում:

Ընթացիկ ակտիվների և ընթացիկ պասիվների տարբերությունը կազմում է կազմակերպության ***զուտ շրջանառու կապիտալը***: Այլ կերպ դա անվանում են աշխատող կապիտալ, իսկ ավանդական տերմինաբանությամբ՝ սեփական շրջանառու միջոցներ (ՍՇՄ): Դժվար չէ նկատել, որ զուտ շրջանառու կապիտալը հնարավոր է որոշել հաշվեկշռի տվյալներից: Հեշտությամբ կարելի է համոզվել, որ զուտ շրջանառու կապիտալը ձեռնարկության սեփական շրջանառու միջոցներն են:

Ընթացիկ ակտիվների և ծածկման սեփական աղբյուրների տարբերությունը հարկ է լինում ֆինանսավորել պարտավորությունների հաշվին՝ կրեդիտորական պարտքերով, եթե դա էլ չբավարարի, պետք է դիմել կարճաժամկետ փոխառություններին: Դրանով ձևավորվում է ընթացիկ ֆինանսական պահանջ հասկացությունը (ԸՖՊ): Գործնականում ընթացիկ ֆինանսական պահանջը ձեռ-նարկություններում հետևյալն է՝ ընթացիկ ակտիվների (առանց դրամական միջոցների) և կրեդիտորական պարտքի տարբերությունը կամ նույնն է, թե՝ արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի և դեբիտորական պարտքերի մեջ ավանսավորված միջոցների և կրեդիտորական պարտքերի տարբերությունը, կամ զուտ շրջանառու ակտիվների այն մասը, որ ծածկված չէ

սեփական աղբյուրներով, երկարատև վարկերով և կրեդիտորական պարտքերով: Կարելի է ասել նաև, որ դա սեփական շրջանառու միջոցների ճեղքվածքն է կամ նույնն է, թե՝ կարճատև վարկի նկատմամբ պահանջը:

ԸՖՊ-ը կարելի է հաշվարկել ինչպես գումարային արտահայտությամբ, այնպես էլ հասույթի նկատմամբ տոկոսներով (ընթացիկ ֆինանսական պահանջ × 100 : հասույթի միջին մեծություն): Եթե արդյունքը, ասենք, լինի 50 տոկոս, նշանակում է ԸՖՊ-ն համարժեք է նրա տարեկան շրջանառության կեսին՝ 180 օրվա ընթացքում կազմակերպությունը աշխատում է միայն նրա համար, որ ծածկի ԸՖՊ: Միանգամայն բնական ձգտում է առաջանում առևտրական վարկի հաշվին գնորդների հանդեպ պարտավորությունները մարելու ուղղությամբ: Հնարավոր է, որ գործնականում, դրա հետևանքով, յուրաքանչյուր տվյալ պահին դրամական միջոցները լինեն արտադրության անընդհատությունն ապահովելու պահանջից ավելի, իսկ ԸՖՊ ունենա բացասական մեծություն: Նման արդյունքի հասնելու խնդիրը գործնականում լուծվում է շրջանառու կապիտալի կառավարման միջոցով, ինչը պահանջում է խելամիտ հաշվարկների կատարում:

Բնականաբար, այս պայմաններում հիմնական ուշադրությունը պետք է սևեռվի ակտիվների ռացիոնալ կառավարմանը՝ կենտրոնանալով պաշարների և դեբիտորական պարտքերի շրջապտույտի արագացման խնդիրների վրա, ձգտելով երկարացնել կրեդիտորական պարտքերի մարման ժամանակաշրջանը գործարար էթիկայի սահմաններում: Այժմ անդրադառնանք ԸՖՊ կրճատման այն հնարավորություններին, որոնք վերաբերում են ֆինանսների և իրացման առնչություններին:

Ապրանքների թանկ գնման և էժան վաճառքի սկզբունքը այս առնչությամբ լրիվ համապատասխանում է Դյուպոնի մեծ բանաձևին. գնորդներին գների զեղչերի հատկացում հաշվարկների ժամկետների երկարացման դիմաց, վեքսիլների (մուրհակների) հաշվառում և ֆակտորինգ. ահա այն ուղիները, որոնք տանում են ԸՖՊ կրճատման:

Ըստ Դյուպոնի բանաձևի, զուտ շահութաբերությունը հավասար է զուտ շահույթ × 100 : ակտիվներին: Այն վերափոխենք՝ բազմապատկելով շրջանառություն : շրջանառություն արտահայտությամբ (շրջանառություն : շրջանառություն = 1), որով շահութաբերության մակարդակը չի փոխվի, սակայն ի հայտ կգան շահութաբերության երկու կարևոր բաղադրիչներ՝ առևտրական մարժան և տրանսֆորմացիայի գործակիցը: Եվ այսպես՝

$$ՏՇ = \frac{\text{զուտ շահույթ}}{\text{ակտիվներ}} \times \frac{\text{շրջանառություն}}{\text{շրջանառություն}} \times 100 :$$

Ձևափոխելով՝ կստանանք.

$$\frac{\text{զուտ շահույթ}}{\text{շրջանառություն}} \times 100 \times \frac{\text{շրջանառություն}}{\text{ակտիվ}} = ԱՄ \times 100 \times KS$$

Առևտրական մարժան ցույց է տալիս, թե որքան շահույթ է բերում շրջանառության որոշակի միավորը (ասենք՝ 1000 դրամը): Ըստ էության, դա շրջանառության շահութաբերությունն է, եթե արտահայտվի տոկոսներով, կամ վաճառքի, կամ իրացված արտադրանքի զուտ շահութաբերությունը: Տրանսֆորմացիայի գործակիցը ցույց է տալիս, թե միավոր ակտիվը որքան

շրջանառություն է ապահովում, այլ կերպ՝ բնութագրում է միավոր ակտիվի շրջանառելիությունը (պտույտների թիվը):

Միանգամայն ակնհայտ է, որ բավականաչափ ծավալի շրջանառություն ապահովելը խոսում է ձեռք բերվող նվաճումների մասին: Սակայն այստեղ կարևոր է ձեռքբերման «գինը» (գործունեության մեջ զբաղված ակտիվների գումարը):

Օրինակ, եթե 12 մլն դրամի շահույթ ստանալու համար ձեռք բերված 40 մլն դրամի շրջանառության պայմաններում գործել են 60 մլն դրամի ակտիվներ, նշանակում է առևտրական մարժան միանգամայն գոհացուցիչ է և ապահովում է 30 տոկոս շահութաբերություն $\left(\frac{12\text{մլն}\times 100}{40\text{մլն}}\right)$ ու լրիվությամբ չեզոքացնում է տրանսֆորմացիայի գործակցի ցածր մակարդակը (40 մլն : 60 մլն = 067): Ստացվում է, որ յուրաքանչյուր միավոր շրջանառության համար օգտագործվում են 1,5 միավոր ակտիվներ. տնտեսական շահութաբերությունը կկազմի 20%՝ $\left(\frac{12\times 100}{60}\right)$:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ վաճառքի ցածր շահութաբերության դեպքում անհրաժեշտ է շեշտը դնել կապիտալի շրջապտույտի արագացման վրա: Միաժամանակ, ցածր գործարար ակտիվությունը (շրջապտույտի դանդաղությունը) կարելի է փոխհատուցել միայն արտադրության ու իրացման ծախսերի կրճատման կամ գների բարձրացման հաշվին:

Մասնավոր տնտեսական շահերից ելնելով՝ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պարտավոր է կոնկրետ պայմաններին համապատասխան սահմանափակել կամ ընդլայնել էժան գնումները, թանկ վաճառքը, ձգտելով կայուն և մեծ իրացման ծավալի՝ անվերապահորեն ենթարկվելով տնտեսավարման սկզբունքներին: Հաճախ տնտեսապես շահում են այն գործարարները, որոնք շրջանառության արագացման ճանապարհով համեմատաբար մեծ ծավալի իրացում և շահույթ են ապահովում թանկ գնելու և էժան վաճառելու սկզբունքով՝ միաժամանակ ստեղծելով մատակարարների ու գնորդների կայուն շրջանակ:

Զարգացած շուկայական տնտեսության պայմաններում պարտավորությունները ժամկետից շուտ մարելու կամ մարումը երկարաձգելու հետ կապված՝ լայնորեն կիրառվում է մասնակիցների կողմից գնային զեղչեր հատկացնելու մեխանիզմը: Ամեն մի կոնկրետ դեպքում պետք է որոշվի համաձայնվելու կամ հրաժարվելու «գինը»: Առաջարկվող զեղչից «հրաժարվելու գինը» կախված է բանկային վարկի տոկոսադրույքից. ո՞րն է ավելի ձեռնտու՝ գնորդի վճարումը հետաձգելը, պահանջը բանկային վարկով լրացնելը, թե՞ առաջարկելով որոշակի զեղչ, ստացումը արագացնելը: Պատասխանը կարող է տալ արդյունքը կշռելը: Կոնկրետ իրադրությունից ելնելով՝ կշռենք այլընտրանքային հնարավորությունները.

$$\text{Հրաժարման գինը} = \frac{\text{զեղչի \%}\times 100}{100-\text{զեղչի \%}} \times \frac{360\ \text{օր}}{\text{վ}\times\text{արումը հետաձգելու առավելագույն տևողությունը} - \text{զեղչ տալուց հետո ընդունվող տևողություն}}$$

Շրջանառու կապիտալի կազմակերպման ու կառավարման հետ կապված բոլոր հարցերը, ի վերջո, նպատակաուղղված են դրա օգտագործման արդյունավետության բարձրացման խնդրին, որն էլ, իր հերթին, հետադարձ ազդեցություն ունի ֆինանսական ռեսուրսների գործունեության մեջ ավանսավորման ծավալի վրա:

Կազմակերպությունների շրջանառու կապիտալի արդյունավետ օգտագործման խնդիրները առավել կարևորվում են շուկայական հարաբերություններին անցման արդի փուլում և բնութագրվում են տնտեսական ցուցանիշների որոշակի համակարգով, վերջին հաշվով հանգելով շրջանառելիությանը: Շրջանառելիության բարձրացումը տվյալ արտադրական ծրագրի կատարման համար պահանջում է ավելի պակաս շրջանառու միջոցներ, ինչը այլ կարիքների բավարարման համար ռեսուրսի աղբյուր է:

Շրջանառու միջոցների շրջապտույտի արագացման արդյունքում շրջանառությունից միջոցների ազատումը կարող է լինել բացարձակ և հարաբերական:

Բացարձակ ազատում տեղի ունի, եթե շրջանառու միջոցների փաստացի կամ պլանային պահանջը ավելի պակաս է, քան եղել է նախորդ ժամանակաշրջանում արտադրության և իրացման ծավալները պահպանելու կամ ավելացնելու պայմաններում:

Շրջանառու միջոցների հարաբերական ազատումը այն դեպքն է, երբ կազմակերպության արտադրության ծավալի աճը շրջանառու միջոցների նկատմամբ պահանջի համեմատ ունի առաջանցիկ տեմպ:

Շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության վրա ազդող գործոնները բազմաթիվ են և կարող են լինել արտաքին ու ներքին:

Արտաքին գործոններին կարելի է դասել.
ա/ ընդհանուր տնտեսական դրությունը,
բ/ հարկային օրենսդրությունը,
գ/ վարկերի ստացման պայմանները և տոկոսային քաղաքականությունը,
դ/ նպատակային ֆինանսավորման հնարավորությունները,
ե/ բյուջեից ֆինանսավորվող ծրագրերին մասնակցությունը և այլն:

Հիմնականում այս գործոններն են որոշում այն սահմանները, որոնցով կարելի է մանևրել շրջանառու միջոցների ռացիոնալ շարժը իրականացնելիս:

Տնտեսության զարգացման ժամանակակից փուլում շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը և վիճակը պայմանավորված են հետևյալ հանգամանքներով՝
ա/ չվճարումների ճգնաժամ,
բ/ հարկերի բարձր մակարդակ,
գ/ բանկային վարկերի բարձր տոկոսադրույքներ և այլն:

Արտադրված արտադրանքի իրացման ճգնաժամը և չվճարումները հանգեցնում են շրջանառու միջոցների շրջանառելիության դանդաղեցմանը: Հետևաբար, անհրաժեշտ է արտադրել այնպիսի արտադրանք, որը կարելի է բավականին արագ և շահավետ իրացնել՝ ընդհատելով կամ էականորեն

կրճատելով այն արտադրանքի արտադրությունը, որի նկատմամբ չկա բավարար ընթացիկ պահանջարկ. դրանով միաժամանակ կանխվում է կազմակերպությունների ակտիվներում դեբիտորական պարտքերի ուռճացումը:

Շրջանառու կապիտալի շրջանառելիության գնահատման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝

1. Շրջանառելիության գործակիցը՝

$$K_շ = \frac{ՀԻ}{ՇԿ} \qquad (1)$$

$K_շ$ – շրջանառելիության գործակիցն է (պտույտների թիվը),

ՀԻ - արտադրանքի, ծառայությունների, աշխատանքների իրացումից հասույթը,

ՇԿ - շրջանառու կապիտալի միջին մեծությունը:

Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս որոշակի ժամանակահատվածի ընթացքում շրջանառու կապիտալի կատարած պտույտների քանակը:

2. Մեկ պտույտի տևողությունը՝

$$t = \frac{ՇԿ \times T}{ՀԻ} \quad \text{կամ՝} \quad \frac{T}{K_2} \qquad (2)$$

t – շրջանառու կապիտալի շրջանառելիության ժամանակաշրջանի տևողությունն է (օրերով),

T – հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվն է:

3. Շրջանառու կապիտալի ամրացման՝ բեռնվածության գործակիցը՝

$$Kբ = \frac{ՇԿ}{ՀԻ} \qquad (3)$$

Շրջանառու միջոցների ամրացման գործակիցը ցույց է տալիս մեկ դրամ իրացված արտադրանքին բաժին ընկնող շրջանառու միջոցների մեծությունը:

Առևտրային կազմակերպությունները շրջանառելիության ցուցանիշների հաշվարկի ժամանակ օգտագործում են ապրանքների իրացման ցուցանիշները՝ վաճառքի գներով իրացումից հասույթի փոխարեն:

Ասվածը ավելի ընկալելի դարձնելու համար կատարենք վերոհիշյալ ցուցանիշների հաշվարկ (տվյալները պայմանական են).

Աղյուսակ 11.4.1

Շրջանառու միջոցների շրջանառելիության ցուցանիշների հաշվարկ

Ցուցանիշներ	Նախորդ ժամանակաշրջան	Պլանային ժամանակաշրջան	Շեղումը
1.Արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը (հազ.դ.)	125960	271380	145420
2.Շրջանառու միջոցների միջին մնացորդը (հազ.դ.)	28990	38630	+ 10040
3.Շրջանառելիության գործակիցը (տող 1: տող 2)	4,406	7,025	+ 2,619
4.Մեկ պտույտի տևողությունը	81,7	51,3	- 30,4

(360 : տող 3)			
5.Բեռնվածության գործակիցը (տող 2 : տող 1)	0,22	0,14	- 0,08

Ըստ բերված տվյալների, շրջանառու միջոցների շրջանառելիությունը պլանային ժամանակաշրջանում արագանալու է 2,6 պտույտով, կամ տևողությունը կրճատվելու է ավելի քան 30 օրով, ինչը բավականաչափ դրական երևույթ է և շրջանառությունից կազատի մեծ ծավալի միջոցներ: Շրջանառու կապիտալի նկատմամբ պլանային պահանջի կրճատմանը զուգընթաց, բարելավվում են նաև գործունեության մյուս ցուցանիշները և ֆինանսական դրությունը:

Շրջապտույտի արագացման հետևանքով շրջանառությունից միջոցների ազատման գումարը կարելի է հաշվել երկու եղանակով՝

1. Օգտվելով հետևյալ բանաձևից՝

$\Delta ՇՄ = ՇՄ_2 – ՇՄ_1 \times K$,

որտեղ՝

$\Delta ՇՄ$ - ազատման գումարն է,

$ՇՄ_1$, $ՇՄ_2$ - կազմակերպության շրջանառու միջոցների միջին տարեկան մեծությունն է՝ համապատասխանորեն նախորդ և պլանային ժամանակաշրջաններում,

K – համախառն արտադրանքի պլանային աճի գործակիցն է, կոնկրետ դեպքում, բերված աղյուսակի տվյալներով՝ շրջանառությունից միջոցների հարաբերական ազատման գումարը կկազմի 21586 հազ. դրամ (38630 – 28990 × 2,15):

2. Ելնելով հետևյալ բանաձևից՝

$\Delta ՇՄ = (t_1 - t_0) \times h_0$,

որտեղ՝

t_1, t_0 - շրջանառու միջոցների մեկ պտույտի տևողությունն է համապատասխան ժամանակաշրջաններում,

h_0 - արտադրանքի օրական իրացման ծավալն է՝ ըստ պլանի:

Գործնականում կարելի է օգտվել նաև ավանդաբար տասնյակ տարիների ընթացքում կիրառված մեթոդից, ըստ որի՝

$$\Delta ՇՄ = \frac{K_{21}}{K_{21}} \times ՇՄԲ,$$

որտեղ՝

K_{21} և K_{20} - համապատասխանորեն նախորդ և պլանային շրջանառելիության գործակիցներն են,

ՇՄԲ – շրջանառու միջոցների բազիսային ժամանակաշրջանի պահանջը:

Ասվեց նաև, որ շրջապտույտի արագացումը դրականորեն է անդրադառնում նաև շահույթի գումարի վրա: Դրա հետևանքով շահույթի աճը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$\Delta Շ = Շ_0 \times \frac{K_{21} - K_{20}}{K_{20}} - Շ_0,$$

$Շ_0$- բազիսային ժամանակաշրջանի փաստացի շահույթն է:

Եթե այս դեպքում բազիսային ժամանակաշրջանի փաստացի շահույթը ընդունենք 12000 հազ. դրամ, ապա տվյալ օրինակում շրջանառու միջոցների շրջապտույտի նախատեսված արագացումը շահույթի պլանի վրա կանդրադառնա դրականորեն՝ 7128 հազ. դրամ գումարով ($12000 \times \frac{7,025}{4,406} - 12000$):

Շրջանառու միջոցների շրջապտույտի տևողության և մյուս ցուցանիշների մակարդակը արդյունք է ֆունկցիոնալ տարբեր ձևերում գտնվող ընթացիկ ակտիվների օգտագործման վիճակի, ուստի անհրաժեշտ է արդյունավետությունը գնահատել ըստ խմբերի և պարզել յուրաքանչյուրի ազդեցությունը ընդհանուր ցուցանիշի և տեղ գտած դրական ու բացասական շեղումների վրա: Առանձնակի ուշադրություն է դարձվում արտադրական պաշարների, պատրաստի արտադրանքի, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի շրջանառելիությանը:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է նշանակում շրջանառու կապիտալ, որո՞նք են դրա նյութական կրողները:
2. Որո՞նք են ընթացիկ ակտիվները, նշել դրանց կազմը և կառուցվածքը:
3. Ի՞նչ սկզբունքներով է կազմակերպվում շրջանառու կապիտալը և ինչպե՞ս կարելի է կանխատեսել նրա նկատմամբ կազմակերպության ընդհանուր պահանջը:
4. Որո՞նք են շրջանառու կապիտալի արդյունավետության ցուցանիշները:
5. Ինչպե՞ս է իրականացվում շրջանառու կապիտալի ֆինանսական կառավարումը և որո՞նք են ընթացիկ ֆինանսական պահանջի արդյունազվետ կարգավորման մեթոդները ձեռնարկություններում:

Գ Լ ՈՒ Խ 12

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

12.1. Ի ՆՎԵՍՏԻՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Ինվեստիցիա հասկացությունը, ըստ էության, նշանակում է երկարատև ֆինանսական ներդրումներ, որոնց արդյունքում ձևավորվում են եկամուտ (շահույթ) ստանալու հիմնական գործիքները և նախապայմանները: Հետևաբար, այն կարելի է ընկալել որպես՝ դրամական միջոցներ, բանկային նպատակային հատկացումներ, մասնաբաժիններ, բաժնետոմսերի, այլ արժեթղթեր, որոնք ուղղվում են տեխնոլոգիաների, մեքենաների, սարքավորումների, շենքերի ու կառույցների, լիցենզիաների, ապրանքային նշանների, ինտելեկտուալ արժեքների, սեփականության իրավունքի և այլ երկարաժամկետ օգտագործման ակտիվների ձևավորման ու ձեռնարկչատիրական գործունեության մեջ ներդնելու նպատակներին՝ եկամուտ /շահույթ/ ստանալու ակնկալությամբ:

Ինվեստիցիոն գործունեությունը կարող է բնութագրվել որպես ներդրումներ իրականացնելուն ուղղված պրակտիկ գործողությունների ամբողջություն, որի արդյունքում ձևավորվում և վերարտադրվում են կազմակերպությունների ոչ ընթացիկ ակտիվները (հիմնական ֆոնդերը): Ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման և վերարտադրության հիմնական ձևը կապիտալ ներդրումներն են:

Տեսականորեն կապիտալ ներդրումներ են գործունեության մեջ ավանսավորվող դրամական միջոցների այն գումարները, որոնք ուղղված են նոր ոչ ընթացիկ ակտիվների ստեղծման (կառուցում, ձեռքբերում), գործողների տեխնիկական վերազինման, վերակառուցման ու ընդլայնման միջոցառումներին:

Կապիտալ ներդրումներն ունեն որոշակի ուղղություն ու կառուցվածք, որը պայմանավորված է տվյալ երկրի տնտեսական-քաղաքական վիճակով, պետության կողմից վարվող ինվեստիցիոն քաղաքականությամբ: Անցումային ժամանակաշրջանի էկոնոմիկան ուղեկցվում է կապիտալ ներդրումների՝ ըստ ուղղությունների և սեփականության ձևի անընդհատ փոփոխություններով: Հայաստանի Հանրապետությունում ինվեստիցիոն գործընթացը հասարակական վերարտադրության ամենատուժած բնագավառներից մեկն է. պետության և ինվեստորների կողմից հստակ որոշված չեն դրանց առաջնային նշանակության ուղղությունները, մեծ են ներդրումների հետ կապված ռիսկերը, չկա բարենպաստ հարկային ու տնտեսական դաշտ: Արդյունքում՝ իրական ոլորտում կատարվող ներդրումները (բոլոր աղբյուրների հաշվին) կրճատվել են մեծ չափերով: Համեմատաբար բարվոք է ոչ արտադրական ոլորտում կատարվող կապիտալ ներդրումների վիճակը, որտեղ կրճատման տեմպերը, արդյունաբերության համեմատությամբ, նկատելիորեն ցածր են:

Ինվեստիցիոն գործունեությունը բավականաչափ բարդ գործընթաց է և ունի բազմաթիվ մասնակիցներ: Սուբյեկտներն են ներդրողները, պատվիրատուները, աշխատանքներ կատարողները, արդյունքը տնօրինողները, ինչպես նաև մատակարարները, մի շարք իրավաբանական անձինք (բանկային, ապահովա-

գրական, միջնորդ կազմակերպություններ, ֆոնդեր) և այլ մասնակիցներ: Այլ խոսքով, ներդրումային գործունեության սուբյեկտներ կարող են հանդիսանալ իրավաբանական ու ֆիզիկական անձինք, այդ թվում արտասահմանյան, ինչպես նաև պետությունը և միջազգային կազմակերպությունները: Ներդրողները, որպես տվյալ գործընթացի սուբյեկտ, իրականացնում են իրենց սեփական, փոխառու և ներգրավված միջոցների ավանսավորում ինվեստիցիաների մեջ՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը: Ինվեստիցիոն գործընթացում որպես պատվիրատու կարող են հանդես գալ ինվեստորները, ինչպես նաև ընդունված նախագծի իրականացման համար նրանց կողմից երաշխավորված ցանկացած իրավաբանական ու ֆիզիկական անձ:

Ինվեստիցիոն գործընթացի արդյունքը տնօրինում են ներդրողը, ինչպես նաև այլ իրավաբանական ու ֆիզիկական անձինք: Այդպիսիք կարող են լինել պետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, արտասահմանյան կառավարությունները, միջազգային կազմակերպությունները. վերջին հաշվով նրանք, ում համար ստեղծվում է տվյալ օբյեկտը:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային գործունեության օբյեկտ կարող են հանդիսանալ.

- նոր ստեղծվող և արդիականացվող հիմնական ու շրջանառու ֆոնդերը (ոչ ընթացիկ ու ընթացիկ ակտիվները) տնտեսության բոլոր ոլորտներում,
- արժեթղթերը (բաժնետոմսեր, փոխառություններ և այլն),
- նպատակային դրամական ավանդները,
- գիտատեխնիկական արդյունքը և սեփականության այլ օբյեկտները,
- գույքային և ինտելեկտուալ սեփականության իրավունքը:

Ներդրումային օբյեկտները նույնն են նաև արտասահմանյան ներդրողների համար, եթե չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

Ընդհանրապես իրական ներդրումային ոլորտի հիմնական բնագավառի, մասնավորապես նաև Հայաստանի Հանրապետությունում, կապիտալ ներդրումների ուղղվածությունը հիմնական և շրջանառու արտադրական ֆոնդերն են: Այս ոլորտը միավորում է պատվիրատու-ներդրողի, կապալառուի, նախագծողների, սարքավորումների մատակարարների և մյուս մասնակիցների գործունեությունը: Կապիտալ ներդրումների արդյունքում ձևավորվող արտադրանքի նյութաիրային բովանդակությունը դրսևորվում է ոչ ընթացիկ ակտիվների միջոցով: Համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման մասին օրենքի, այդ գործընթացը և արդյունքը հաշվառվում են ստանդարտ 9-ում, 11-ում և 16-ում:

Թիվ 9 ստանդարտը վերաբերում է հետազոտության և զարգացման ծախսումներին: Նպատակն է՝ սահմանել դրանց հաշվապահական հաշվառման մոտեցումները, որոշել, թե այդ ծախսումները երբ պետք է ճանաչվեն որպես ակտիվ և երբ՝ որպես ծախս: Հետազոտություն են համարվում նոր գիտական ու տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռք բերելու նպատակով կատարվող սկզբնական և ծրագրված ուսումնասիրությունները: Դրանց բնորոշ օրինակներն են՝

- գործունեությունը նոր գիտելիքներ ձեռք բերելու նպատակով,
- հետազոտությունների կամ գիտելիքների արդյունքի կիրառության որոնումը,
- այլընտրանքային արտադրատեսակների կամ տեխնոլոգիաների որոնումը,

- հնարավոր նոր կամ կատարելագործված արտադրանքի, կամ տեխնոլոգիայի այլընտրանքների ձևավորումը և նախագծումը:

Զարգացումը վերաբերում է հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառմանը, որն ուղղված է նոր և առավել կատարելագործված նյութեր, սարքավորումներ, արտադրատեսակներ, տեխնոլոգիաներ, համակարգեր արտադրելու, ծրագիր կամ նախագիծ կազմելու միջոցառումներին: Օրինակ՝

- արտադրանքի կամ տեխնոլոգիայի այլընտրանքի գնահատումը,
- արտադրանքի փորձանմուշի նախագծումը, կառուցումը և փորձարկումը,
- գործիքների նախագծումը՝ նոր տեխնոլոգիայի կիրառմամբ,
- փորձարարական գործարանի նախագծումը, կառուցումը և գործարկումը:

Հետազոտության և զարգացման ծախսումներն ունեն կոնկրետ բաղադրիչներ, որոնք անմիջականորեն կապված են դրանց առնչվող աշխատանքների հետ և կարող են հիմնավորված կերպով վերագրվել գործունեության այդ տեսակին: Համաձայն տվյալ ստանդարտի, ներառվում են այդ աշխատանքներում զբաղված աշխատողների վարձատրության ծախսերը և ծառայողական այլ վճարումները, օգտագործված նյութերի ու ծառայությունների արժեքը, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը, պատենտների և լիցենզիաների ամորտիզացիան, այլ ուղղակի և վերադիր ծախսերը:

Երբ հավանական է, որ կատարված ծախսումները ապագայում կտան տնտեսական եկամուտ (շահույթ) և միաժամանակ կարող են ճշգրտորեն գնահատվել դրանք, ճանաչվում են որպես ակտիվ:

Զարգացման ծախսերը որպես ակտիվ ճանաչվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվում են:

Ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են հաշվապահական հաշվառման առաջին դասի հաշիվներում (11, 13, 14 և 15): Դրանք բաժանվում են չորս խոշոր խմբերի՝

1. ոչ ընթացիկ նյութական ակտիվներ,
2. ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ,
3. ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ,
4. այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

Ոչ ընթացիկ նյութական ակտիվները ներառում են՝ հիմնական միջոցները (111), դրանց մաշվածությունը (112), ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցները (113), հողամասերը (114), բնական ռեսուրսները (115), անավարտ ոչ ընթացիկ ակտիվները (117), երկարաժամկետ վարձակալված հիմնական միջոցները (118):

Հիմնական միջոցների նյութաիրային կազմը բնութագրվում է շենքերի, կառույցների, փոխանցող հարմարանքների, մեքենա-սարքավորումների, տրանսպորտային միջոցների, արտադրական ու տնտեսական գույքի, գործիքների, բազմամյա տնկարկների, բանող ու մթերատու անասունների ու այլ ակտիվների միջոցով:

Երկրորդ խմբի ոչ նյութական ակտիվները ներառում են կազմակերպչական ծախսերը, լիցենզիաները, ֆիրմայի գինը (գուդվիլ), արտոնագրերը, ապրանքային նշանները, ծրագրային ապահովումը, հողի և բնական ռեսուրսների օգտագործման իրավունքը և այլ ոչ նյութական ծախսերը:

Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները ներառում են բաժնետոմսերը և բաժնեմասերը, պարտատոմսերը, հատկացված փոխառությունները և այլ ֆինանսական երկարաժամկետ ներդրումները:

Այլ ոչ ընթացիկ ակտիվներն ունեն սահմանափակ անվանացանկ, գլխավորապես վերաբերում են հետաձգված ծախսումներին և հետաձգված հարկերին:

Թվարկված չորս խմբերն, իրենց համապատասխան տարրերով, արտահայտում են ոչ ընթացիկ ակտիվների կազմը, իսկ դրանց ընդհանուր ակտիվների՝ այս խմբի մեջ ունեցած տեսակարար կշիռները՝ կառուցվածքը:

ՀՀ ստանդարտ 16-ը հատուկ սահմանումներ է տալիս ոչ ընթացիկ ակտիվների հիմնական խմբերի բովանդակության, օգտակար ծառայության տևողության, մաշվածքի հաշվառման, սկզբնական ու զուտ արժեքի ճանաչման վերաբերյալ:

Հիմնական միջոցների, նույնն է, թե՝ հիմնական կապիտալի նյութական կրողները կազմակերպությունների ակտիվների կարևորագույն մասերից մեկն են: ՀՀՍ 16-ի տերմիններն օգտագործվում են հետևյալ իմաստներով. հիմնական միջոցները այն ակտիվներն են, որոնք կազմակերպություններում առկա են արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակով օգտագործելու համար՝ ավելի քան մեկ տարի ժամկետով: Այս ձևակերպումը, ավանդաբար օգտագործվող մարքսյան ձևակերպման համեմատ, ունի բավականաչափ նեղ բովանդակություն: Ըստ էության, անտեսվում են արտադրական ու այլ բնույթի գործունեությանը մասնակցելու առանձնահատկությունները և արժեքը նոր արդյունքին փոխանցելու ձևերն ու մեխանիզմը: Տարբերիչ գլխավոր հատկանիշ է դիտվում օգտակար ծառայության տևողությունը: Մինչդեռ ոչ ընթացիկ ակտիվ (հիմնական ֆոնդեր) հասկացության սահմանումից պետք է երևա, որ դրանք գործունեությանը (արտադրական, իրացման և այլ) մասնակցում են տևական ժամանակաշրջանի ընթացքում, մինչև վերջնական դուրս գրվելը պահպանում են իրենց նյութաիրային սկզբնական ձևը (ի տարբերություն ընթացիկ ակտիվների) և արժեքը նոր արդյունքին փոխանցում են մաս-մաս՝ փաստացի մաշվածքին համապատասխանող չափերով:

Արտադրական ձեռնարկություններում հիմնական կապիտալի վերարտադրությունը կարող է իրականացվել կամ ուղղակի ներդրումների, կամ հիմնական կապիտալի նյութական կրող հանդիսացող օբյեկտը որպես կանոնադրական կապիտալին մուծում կազմակերպությանը հանձնելը և կամ իրավաբանական ու ֆիզիկական անձանց անհատույց հատկացնելը: Հիմնական կապիտալի ընդլայնված վերարտադրության գլխավոր մեթոդը ուղղակի ներդրումներն են (կապիտալ ներդրումները):

Ուղղակի ներդրումները իրենից ներկայացնում են հիմնական կապիտալի նոր օբյեկտների ստեղծման վրա կատարված ծախսումները, ինչպես նաև գործող օբյեկտների ընդլայնումը, վերակառուցումը, տեխնիկական վերազինումը:

Այդ ուղղություններով կատարված ծախսերի միջև հարաբերակցությունը կոչվում է ուղղակի ներդրումների վերարտադրողական կառուցվածք:

Նոր շինարարությանը վերաբերում են նոր հրապարակների վրա կառուցվող օբյեկտների ծախսերը:

Ընդլայնման տակ հասկացվում են ձեռնարկության երկրորդ և հաջորդ հերթերի, լրացուցիչ արտադրությունների, գոյություն ունեցող արտադրությունների հիմնական նշանակության արտադրամասերի ընդլայնումը:

Վերակառուցումը իրենից ներկայացնում է ձեռնարկության լրիվ կամ մասնակի վերասարքավորումը (առանց գործող արտադրամասերի ընդլայնման և նորերի կառուցման) բարոյապես ու ֆիզիկապես մաշված սարքավորումների ու մեխանիզների նորով փոխարինմամբ, արտադրության ավտոմատացմամբ և անհամամասնությունների վերացմամբ: Վերակառուցման արդյունքում ձեռք է բերվում արտադրության ծավալի մեծացում, տեսականու ընդլայնում, որակի բարձրացում նոր ժամանակակից տեխնոլոգիայի բազայի վրա:

Տեխնոլոգիական վերազինումը ընդգրկում է ժամանակակից տեխնիկական պահանջների մակարդակով առանձին տեղամասերի վերազինման համալիր միջոցառումների ամբողջությունը, նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի, ավտոմատացման, արդիականացման, հին սարքավորումները նորով փոխարինելու ճանապարհով:

Թվարկված և այլ կազմակերպական միջոցառումների նպատակը աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի թողարկման ծավալի աճի, որակի բարելավման ապահովումն է:

Ուղղակի ներդրումների տեխնիկական կառուցվածքը ձևավորվում է երեք հիմնական տարրերից՝ սարքավորումների ձեռք բերում, ծախսումներ շինարարական մոնտաժային աշխատանքների վրա, նախագծա-նախահաշվային աշխատանքներ: Այդ ուղղություններով կատարվող ծախսերի հարաբերակցությունը բնութագրում է ուղղակի կապիտալ ներդրումների տեխնոլոգիական կառուցվածքը:

Բնականաբար, ոչ ընթացիկ ակտիվները շահագործման (օգտագործման) ընթացքում աստիճանաբար մաշվում են և ամեն տարի կորցնում սկզբնական արժեքի համապատասխան մասը, որի չափով և ավելանում են գործունեության ծախսերը: Նոր ստանդարտներով անտեսվում է ամորտիզացիայի, որպես ֆինանսական հասկացության, այն ձևակերպումը, ըստ որի, ամորտիզացիան մաշ-վածքի դրամական արտահայտությունն է: Մաշվածության հասկացությանը տրվում է դրամական բովանդակություն և հանգեցվում ակտիվի արժեքի օգտակար ծառայության՝ տարիների վրա պարբերական բաշխվող գումարի: Այլ կերպ՝ «Մաշվածության գումարը ակտիվի սկզբնական արժեքի կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարի և մնացորդային արժեքի տարբերությունն է»:

Օգտակար ծառայությունը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունն ակնկալում է օգտագործել ակտիվը: Օգտակար ծառայությունը կարող է չափվել նաև արտադրանքի կամ աշխատանքների և ծառայությունների որոշակի ծավալով, որպիսին ակնկալվում է ապահովել ակտիվի օգտագործման միջոցով, շահագործման ամբողջ տևողության ընթացքում, ըստ նրա մեջ մտնող տարիների:

Ոչ ընթացիկ ակտիվները գնահատվում են սկզբնական, մնացորդային (զուտ) և վերագնահատման արժեքներով:

Սկզբնական (պատմական) արժեքը կարող է մեկնաբանվել երկու ձևով՝

1. ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների գումար (հատուցման իրական արժեք),

2. ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ կողմերի համաձայնությամբ որոշված վճարվելիք դրամական միջոցների գումար (հատուցման իրական արժեքը՝ ակտիվի ձեռք բերման պահի դրությամբ):

Իրական արժեք արտահայտությունը այն գումարն է, որով ակտիվն առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև:

Վերագնահատման արժեքը ակտիվի այն արժեքն է, որը որոշվում է դրա վերագնահատման արդյունքում:

Մնացորդային արժեքը այն զուտ գումարն է, որը կազմակերպությունը ակնկալում է ստանալ ակտիվից՝ դրա օգտակար ծառայության վերջում՝ դուրսգրման սպասվող ծախսերը հանելուց հետո: Մինչև սույն ստանդարտի ներդրումը մնացորդային արժեք (զուտ արժեք) հասկացությունը ծառայության ընթացքում ընկալվել էր որպես սկզբնական արժեքի և փաստացի հաշվարկված մաշվածքի (ամորտիզացիայի) տարբերություն, իսկ ծառայության վերջում՝ լուծարային (չամորտիզացված) արժեքի գումար:

Գործնականում գործածվում է նաև արժեզրկումից կորուստներ հասկացությունը, որն արտահայտում է այն գումարը, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Այստեղից էլ՝ հաշվեկշռային արժեքը արտացոլում է այն գումարը, որով ակտիվը ճանաչվում է և ներառվում հաշվեկշռի մեջ՝ մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո: Մինչև այս ստանդարտների կիրառումը «հաշվեկշռային արժեք» արտահայտությունը նույնացվել է մնացորդային արժեքի հետ, իսկ ոչ վաղ անցյալում՝ սկզբնական արժեքի հետ:

Հիմնական միջոցներ հասկացությունը հավաքական մեծություն է և ձևավորվում է ճանաչված միավորների արժեքը գումարելու միջոցով: Հիմնական միջոցների միավորների ճանաչումները կապված են կոնկրետ պայմանների առկայության հետ: Մասնավորապես, պետք է ակնկալվի, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և արժեքը կարելի է հստակորեն գնահատել:

Հիմնական միջոցների միավորը, եթե համապատասխանում է ակտիվ ճանաչելու չափանիշներին, պետք է չափվի սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Սկզբնական արժեքը ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարումները, ակտիվը՝ նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս:

Ոչ ընթացիկ ակտիվները օգտակար շահագործման ընթացքում, նաև շահագործումից դուրս (անգործության վիճակում) ենթարկվում են մաշվածքի և աստիճանաբար կորցնում են իրենց սկզբնական արժեքը: Միջազգային չափանիշներով, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքը ընդունվում է որպես դրանց շահագործման ամբողջ տևողության ընթացքում ամորտիզացման ենթակա գումարից կատարվող պարբերական հատկացում: Ամորտիզացման ենթակա գումար է ոչ ընթացիկ ակտիվի հաշվեկշռային և մնացորդային արժեքների տարբերությունը:

Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի պատճառ կարող են ճանաչվել հետևյալ գործընթացները՝

ա) ոչ ընթացիկ ակտիվների օգտագործումը (շահագործումը),

բ) օգտակար ժամանակի լրանալը,

գ) ոչ ընթացիկ ակտիվի «ծերանալը» (տեխնոլոգիաների, տեխնիկայի, շուկայական պահանջարկի փոփոխվելու հետ նաև բարոյապես մաշվելը),

դ) աղքատացումը (հանքային պաշարները):

Մաշվածքի հաշվարկման ու հաշվառման նպատակն է սկզբնական արժեքը օգտակար շահագործման բոլոր տարիների վրա համապատասխան ձևով բաշխելու միջոցով ձևավորել փոխհատուցման նույնքան եկամուտ, շահույթ և վնաս՝ հաշվետվության ձևում արտացոլելով որպես ծախս: Ոչ վաղ անցյալում հիմնական միջոցների մաշվածքը այն հիմքն էր, որին համապատասխան ստեղծվում էր դրանց պարզ վերարտադրության համար նպատակային աղբյուր: Շուկայական հարաբերությունների կայացած համակարգ ունեցող երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս, մաշվածքի հաշվարկումը ոչ ընթացիկ գործող ակտիվները նորով փոխարինելու համապատասխան դրամական ֆոնդ ստեղծելու նպատակ չի հետապնդում: Փաստորեն, դա տվյալ ակտիվի արժեքի՝ ըստ նրա օգտագործման ժամկետների, բաշխման պարզ մեթոդ է /այն ժամկետների, որոնց ընթացքում ստացվում է եկամուտ/: Գործնականում իրատեսական էլ չէ մաշվածքը ոչ ընթացիկ համապատասխան ակտիվը նորով փոխարինելու բավարար աղբյուր համարելը, քանի որ ինֆլյացիայի և այլ պատճառներով չի կարող լրիվ փոխհատուցվել: Բնականաբար, մաշվածք հաշվարկելը չի դիտվում որպես ոչ ընթացիկ ակտիվի պահպանման կամ նորով փոխարինելու եղանակ: Սակայն հաշվարկված ու կուտակված մաշվածքի և կապիտալ ներդրումների, ինչպես նաև հարկվող շահույթի միջև պետք է գոյություն ունենա որոշակի կապ և փոխպայմանավորվածություն, ինչպես Ռուսաստանի Դաշնությունում է: Հակառակ դեպքում մաշվածքի գումարը կարող է ընդհանուր եկամուտների մեջ լրիվ դիմազրկվել՝ դրսևորվելով միայն որպես չհարկվող շահույթ և ոչ ավելին:

Համաձայն ՀՀ ստանդարտ 16-ի, հիմնական միջոցի միավորի մաշվածության գումարը պետք է պարբերաբար բաշխվի ակտիվի օգտակար ծառայության ամբողջ տևողության ընթացքում: Մաշվածքի հաշվարկման ընդունելի մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, որով կազմակերպությունը սպառում է ակտիվի տնտեսական օգուտը (շահույթը): Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված մաշվածության գումարը պետք է ճանաչվի որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Քանի որ ակտիվի մեջ առարկայացած տնտեսական շահույթը օգտագործվում է կազմակերպության կողմից, ուստի ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է, դրանով իսկ այդ օգտագործումը արտացոլվում է մաշվածությանը վերագրելու միջոցով:

Միանշանակ է, որ հիմնական միջոցների միավորի մեջ առարկայացած տնտեսական շահույթը կազմակերպությունն սպառում է գլխավորապես ակտիվի օգտագործման միջոցով: Սակայն այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական հնացածությունը (բարոյական մաշվածությունը ևս), անգործության ընթացքում առաջացած մաշվածությունը, հաճախ ակնկալվող տնտեսական

շահույթի նվազման պատճառ են դառնում: Հետևաբար, այդ հանգամանքներն ու գործոնները պետք է հաշվի առնվեն ոչ ընթացիկ ակտիվի օգտակար ծառայության տևողությունը որոշելիս: Մասնավորապես, պետք է հաշվի առնել՝

- կազմակերպության կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը՝ հիմք ու ելակետ ընդունելով ակնկալվող հզորությունը և արտադրանքի ֆիզիկական ծավալը.
- արտադրական գործոններից (հերթափոխերի թիվ, վերանորոգման ու սպառման, անգործության վիճակում մնալու տևողություն և այլն) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը.
- արտադրությունում կատարվող տեղաշարժերի, բարեփոխումների, տվյալ ակտիվի օգտագործմամբ ստացվող արտադրանքի ու ծառայությունների նկատմամբ շուկայական պահանջարկի նվազման հետևանքով առաջացած տեխնիկական հնացածությունը.
- ակտիվի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումները:

Գործող օրենսդրությունը թույլ է տալիս հիմնական միջոցների օգտակար ծառայության տևողությունը որոշել կազմակերպությունների կողմից՝ ելնելով ակնկալվող օգտակարությունից: Ակտիվների կառավարման քաղաքականությունը կազմակերպություններին թույլ է տալիս ակտիվները դուրս գրել նախատեսված ժամանակից շուտ կամ դրանց մեջ առարկայացած տնտեսական շահույթը ոչ լրիվ ստանալուց առաջ: Ուստի, հնարավոր է, որ օգտակար ծառայության ժամկետը լինի ավելի կարճ, քան նրա տնտեսական ծառայության տևողությունն է:

Հողամասերը, շենքերն ու շինությունները դիտվում են որպես առանձնահատուկ ակտիվներ և հաշվառվում են առանձին-առանձին, նույնիսկ այն դեպքերում, երբ ձեռք են բերվում միասին: Հողամասերը, որպես կանոն, ունեն շահագործման անսահմանափակ տևողություն, բնականաբար, դրանց նկատմամբ մաշվածք չի հաշվարկվում: Շենքերն ու շինությունները մաշվող ակտիվներ են:

Տնտեսավարման պրակտիկայում կարող են կիրառվել մաշվածքի հաշվարկման բազմաթիվ մեթոդներ ու մոտեցումներ: Կազմակերպությունները, մաշվածքի կառավարման իրենց ընդունած քաղաքականությունից ելնելով, կարող են օգտվել ցանկացած մեկ կամ մի քանի մեթոդներից: Գործնականում ավելի հաճախ կիրառվում են հետևյալ մեթոդները՝

1. գծային կամ հավասարաչափ հաշվարկման,
2. մնացորդի նվազեցման,
3. տարիների (միավորների) գումարի,
4. վերագնահատման:

Մաշվածքի հավասարաչափ հաշվարկման մեթոդը ավանդական եղանակ է, ունի լայն տարածում և համատարած կիրառվել է նախկին ԽՍՀՄ տնտեսության բոլոր ճյուղերում: Իրականացման տեխնիկան շատ պարզ է: Մաշվածքի գումարը, ըստ օգտակար շահագործման տարիների, բաշխվում է հավասար մասերով և արտահայտվում է կայուն չափերով՝ ըստ ամբողջ ժամանակաշրջանի: Ամորտիզացիոն հատկացումների տարեկան գումարը որոշելու համար պահանջվում է ունենալ համապատասխան ակտիվի սկզբնական արժեքը, նրա օգտակար շահագործման տևողությունը՝ արտահայտված տարիներով և, անհրաժեշտության դեպքում, նաև մնացորդային արժեքի գնահատականը: Օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$\text{տարեկան ամորտիզացիան} = \frac{\text{սկզբնական արժեք - մնացորդային արժեք}}{\text{օգտակար շահագործման տարիների թիվ}}:$$

Մաշվածքի գծային հաշվարկի օրինակ. բաժնետիրական ընկերությունը հաշվետու տարվա հունվարի 1-ին ձեռք է բերել սարքավորում՝ 24 մլն դրամ արժեքով, որը մտնում է այլ հիմնական միջոցների խմբի մեջ և ունի 5 տարվա օգտակար շահագործման ժամկետ: Ակնկալվում է, որ տվյալ սարքավորումը մնացորդային արժեք չի ունենալու: Այս դեպքում՝ տարեկան մաշվածքը հավասար է $\frac{24000 \text{ հազ.}}{5}$ = 4800 հազ. դրամ:

Եթե կազմակերպությունն ակնկալեր, որ շահագործման ժամկետը լրանալուց հետո տվյալ սարքավորումը հնարավոր է վաճառել 4 մլն դրամով, ապա հաշվարկման ենթակա տարեկան ամորտիզացիայի գումարը կարտահայտվեր 4000 հազ. դրամով $\left(\frac{24 \text{ հազ.} - 4000 \text{ հազ.}}{5}\right)$:

Սովորաբար ամորտիզացիոն հատկացումներ կատարվում են աշխատած լրիվ ամիսների համար: Բնականաբար, եթե այդ սարքավորումը ձեռք բերվեր տվյալ տարվա հոկտեմբերի 1-ին, առաջին տարում ամորտիզացիա կհաշվարկվեր 3 ամսվա համար (տարեկանի 1/4-ի չափով):

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կազմակերպությունների հիմնական միջոցները, ըստ օգտակար շահագործման տևողության, դասակարգվում են 5 խմբի՝ 1-20 տարի (1, 3, 5, 10, 20 տարվա) ամորտիզացիայի տևողությամբ: Դրանից էլ ելնելով՝ ամորտիզացիայի տարեկան պլանային մեծությունը հաշվարկելու համար կատարվում է խոշորացված հաշվարկ: Նախ, պարզվում է համապատասխան խմբին վերաբերող ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան մնացորդը, այնքանով, որ տարվա ընթացքում կարող է լինել շարժ՝ հների դուրսգրում, նորերի ձեռքբերում: Շարժի ժամկետները ոչ միշտ են համընկնում օրացուցային տարվա սկզբին, և կարիք է առաջանում միջինացման:

Ըստ օգտակար շահագործման տևողության՝ ոչ ընթացիկ ակտիվների խմբերի միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կարելի է հաշվարկել տարբեր մոտեցումներով: Առավել կիրառելի մեթոդները 3-ն են՝

1. միջին ժամանակագրական,
2. հիմնական միջոցների ապրանքային հաշվեկշռի,
3. միջին թվաբանական:

Միջին ժամանակագրական մեթոդի դեպքում ելակետ են ընդունվում բոլոր ամիսների կամ եռամսյակների սկզբի մնացորդները՝ առաջին ամսվա կամ եռամսյակի սկզբի մնացորդի կեսին ավելացվում են մյուս բոլոր ամիսների մնացորդները, տարեվերջի մնացորդի կեսը և բաժանվում 12-ի (ամիսների թվին): Օգտագործվում է հետևյալ բանաձևը՝

$$\overline{Մ} = \left[\frac{Մ_1}{2} + Մ_2 + \ldots + Մ_{12} + \frac{Մ_վ}{2}\right] : 12,$$

որտեղ՝

$\overline{Մ}$ - ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացման ենթակա արժեքն է,

$Մ_1$, $Մ_2$ ...$Մ_{12}$ – համապատասխանորեն՝ ամիսների սկզբի դրությամբ մնացորդն է՝ սկզբնական արժեքով,

$Մ_վ$ – տարեվերջի դրությամբ մնացորդն է:

Երկրորդ մեթոդը հիմնված է ապրանքային հաշվեկշռի սկզբունքի վրա՝ տարեսկզբի մնացորդին ավելացվում է տարվա ընթացքում գործարկման ենթակա ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքը և հանվում դուրսգրման (օտարման) ենթակա մասի միջին տարեկան արժեքը՝ ըստ հետևյալ բանաձևի՝

$$\overline{Մ} = Մ_0 + \frac{Մ_1 t}{12} - \frac{Մ_2(12-t)}{12},$$

որտեղ՝

$Մ_0$-ն տարեսկզբի դրությամբ առկա ակտիվների սկզբնական արժեքն է,

$Մ_1$-ը պլանային ժամանակաշրջանում շահագործման հանձնվող ոչ ընթացիկ ակտիվների սկզբնական արժեքն է,

$Մ_2$-ը պլանային ժամանակաշրջանում դուրսգրման ենթակա ակտիվների սկզբնական արժեքն է,

t – պլանային ժամանակի շահագործման (աշխատելու) ամիսների թիվն է:

Ինչպես նշվեց, սովորաբար վերցվում են լրիվ ամիսները: Երբ շարժը (գործարկումը, դուրսգրումը) նախատեսված է եռամսյակներով, ընդունված է առաջին եռամսյակում շահագործման հանձնվելիք ակտիվների աշխատած ամիսների թիվը վերցնել 10, մյուսներինը համապատասխանաբար՝ 7, 4, 1 ամիս: Դուրսգրման դեպքում ընդհակառակը՝ առաջին եռամսյակինը՝ 1, երկրորդինը՝ 4, երրորդինը՝ 7 և չորրորդինը՝ 10:

Օրինակ՝ ընդունենք, որ բաժնետիրական ընկերության 5 տարվա օգտակար շահագործման ժամկետ ունեցող ակտիվների տարեսկզբի մնացորդը 60 մլն դրամ է, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների սկզբին՝ համապատասխանաբար 58, 66 և 78, իսկ տարեվերջին՝ 80 մլն դրամ: Այս դեպքում ամորտիզացիայի ենթակա ոչ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքը կկազմի.

$$\overline{Մ} = \left(\frac{60}{2} + 58 + 66 + 78 + \frac{80}{2}\right) : 12 = 68 \text{ մլն դրամ:}$$

Այժմ ընդունենք, որ տարեսկզբի մնացորդը կազմում է 60 մլն դրամ, նախատեսված է II եռամսյակում ձեռք բերել 32 միլիոն դրամի ակտիվներ, իսկ չորրորդում՝ դուրս գրել 12 մլն դրամի ակտիվներ: Այս դեպքում մաշվածքի հաշվարկման համար ելակետ համարվող ոչ ընթացիկ ակտիվների գումարը՝ $\overline{Մ}$-ը, կկազմի.

$$\overline{Մ} = 60 + \frac{32 \times 7}{12} - \frac{12 \times 10}{12} = 68$$

Մաշվածքը հաճախ արտահայտվում է տոկոսներով՝ սկզբնական արժեքի նկատմամբ: Օրինակ, գծային եղանակով ամորտիզացիա հաշվարկելու դեպքում, եթե ծառայության տևողությունը 5 տարի է, և նախատեսվում է մնացորդային արժեքի զրոյական մնացորդ, ամորտիզացիայի տարեկան նորման կլինի 20% (100:5):

Մնացորդի նվազեցման մեթոդը լայն կիրառություն չունի: Հիմնականում կիրառվում է այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ոչ ընթացիկ ակտիվի

շահագործումից ակնկալվող եկամտի ավելի մեծ բաժին ստանալ առաջին տարիներին: Այս մեթոդը կիրառելիս ակտիվի շահագործման առաջին տարիներին ամորտիզացիոն հատկացումները բարձր են, քան ավելի ուշ ժամկետներում: Շահագործման առաջին տարում ամորտիզացիայի տարեկան տոկոսը հաշվարկվում է սկզբնական արժեքի, հետագա տարիներին՝ զուտ հաշվեկշռի արժեքի նկատմամբ: Հետագա տարիների ամորտիզացիոն հատկացումների հաստատագրված տոկոսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{դրույքը} = 1 - \left(\frac{\text{ակտիվի մնացորդային արժեք}}{\text{ակտիվի սկզբնական արժեք}} \right) \times 100$$

Շահագործման ընթացքում և դուրսգրման պահին ակտիվի զուտ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը հավասար է սկզբնական արժեքի և կուտակված մաշվածքի տարբերությանը: Եթե ընդունենք, որ նշված օրինակում ձեռք բերված 24 մլն արժողությամբ ակտիվի մաշվածքի հաշվարկը նպատակահարմար է կատարել մնացորդի նվազեցման մեթոդով, ապա, ըստ շահագործման հինգ տարիների, այն կկազմի՝

տարիներ	մաշվածքի գումարը	ամորտիզացիոն հատկացումներ	կուտակված մաշվածք
1	20%×24000 հազ.	4800 հազ.	4800
2	20%×(24000-4800)	3840	8640
3	20%×(24000-8640)	3072	11712
4	20%×(24000-11712)	2458	14170
5	20%×(24000-14170)	1966	16136

Պարզ երևում է, որ ըստ տարիների ամորտիզացիոն հատկացումները նվազում են, և վերջում մնում է որոշակի չամորտիզացված գումար՝ 7864 հազ. դրամ (24000-16136): Դժվար չէ նկատել նաև, որ այս մեթոդը կապված է որոշ բարդությունների հետ: Մասնավորապես, եթե մնացորդային արժեք չի նախատեսվում, մաշվածքի տոկոսը պետք է հավասար լինի 100-ի: Իսկ եթե ակտիվի արժեքը լրիվ չի ամորտիզացվում և մնում է մնացորդային արժեք, դրույքը ստանում է ավելի բարձր արտահայտություն:

Երկրորդ դեպքում, ըստ տարիների մաշվածքի դրույքները կունենան հետևյալ չափերը. առաջին տարի՝ 20% $\left(1 - \frac{19200}{24000}\right) \times 100$, երկրորդ տարի՝ 36% $\left(1 - \frac{15380}{24000}\right) \times 100$, երրորդ տարի՝ 39% $\left(1 - \frac{12308}{24000}\right) \times 100$, չորրորդ տարի՝ 59% $\left(1 - \frac{9850}{24000}\right) \times 100$:

Գործնականում կարող է հարց ծագել, թե որ ակտիվների համար է նպատակահարմար մաշվածքը նվազեցման եղանակով հաշվելը: Այդ հարցին պատասխանելիս պետք է ի նկատի ունենալ, որ գոյություն ունեն ոչ ընթացիկ ակտիվների տեսակներ, որոնք օգտակար շահագործման առաջին փուլում կորցնում են արժեքի ավելի մեծ մասը, մասնավորապես՝ ավտոմեքենաները, հաշվողական տեխնիկայի որոշ տեսակներ: Բացի դա, կան ակտիվներ, որոնց շահագործումն առաջին տարիներին ավելի քիչ ծախս է պահանջում, քան որոշակիորեն մաշվելուց հետո: Ուստի, հարմար է մաշվածքը հաշվարկել նվազեցումների մեթոդով, այնքանով, որ մաշվածքի գումարը և շահագործման ու պահպանման ծախսերը կարող են միմյանց ծածկել: Այնուհանդերձ, բոլոր դեպքերում, մաշվածքը պետք է դիտել որպես ակտիվի արժեքի՝ ըստ տարիների բաշխվածության գումար, այլ ոչ թե ակտիվի գնահատում:

Ըստ տարիների (միավորների) մաշվածքի գումարի հաշվարկման մեթոդի՝ ամորտիզացիոն հատկացումների մեծ մասը նույնպես բաժին է ընկնում սկզբի տարիներին: Ըստ էության, դա նախորդի տարատեսակն է: Այլ կերպ, այս մեթոդը կոչվում է 78-ի կանոն, ելնելով այն հանգամանքից, որ ամսական հաշվարկի ժամանակ մեկ տարին ձևավորվում է 78 միավորից (12+11+…+1=78): Հաճախ այս մեթոդը կիրառվում է մաշվածքի ամսական մեծությունը հաշվելու նպատակով: Տարիների գումարը պայմանավորված է օգտակար շահագործման տևողությամբ: Որքան այն երկար է, այնքան գումարը մեծ է: Շահագործման տարիների ցանկացած թվի դեպքում տարիների գումարը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

Տարիների գումարը՝ ՏԳ = n(n + 1)/2,

որտեղ՝

n-ը տարիների թիվն է:

Օրինակ՝ շահագործման ժամկետի 5 տարվա դեպքում տարիների գումարը հավասար է 15-ի [5(5+1)/2], 15 տարվա դեպքում՝ 120-ի [15(15+1)/2]:

Եթե ընդունենք, որ նախորդ օրինակի 24000 հազ. դրամի ընթացիկ ակտիվի մաշվածքը որոշված է հաշվարկել տարիների գումարի մեթոդով, իսկ ծառայության ժամկետը նույնն է՝ 5 տարի, ապա տարիների գումարը կլինի 15 (5+4+3+2+1) և ըստ տարիների հաշվարկվող մաշվածքի մեծությունը կկազմի.

1-ին տարի՝ $\frac{5\times 24000}{15}=8000$

2-րդ տարի՝ $\frac{4\times 24000}{15}=6400$

3-րդ տարի՝ $\frac{3\times 24000}{15}=4800$

4-րդ տարի՝ $\frac{2\times 24000}{15}=3200$

5-րդ տարի՝ $\frac{1\times 24000}{15}=1600$

Ընդամենը՝ 24000:

Կուտակված մաշվածքը ըստ տարիների համապատասխանաբար կունենա հետևյալ պատկերը՝ 8000, 14400, 19200, 22400 և 24000:

Վերագնահատման մեթոդով մաշվածքի հաշվարկումը կառուցված է ակտիվների վերագնահատված արժեքի վրա, ինչը տարբեր է հաշվապահական հաշիվներում արտացոլվածից: Վերագնահատումից հետո ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի գումարը պետք է հաշվարկվի նոր արժեքից ելնելով: Այնքանով, որ վերագնահատումից հետո ձևավորված արժեքը հաճախ նախկինից մեծ է, տարեկան մաշվածքի գումարը մեծանում է: Առաջին հայացքից դա կարող է տարօրինակ թվալ՝ հետագա տարիների մաշվածքը մեծ է սկզբնական տարիների մաշվածքից: Բայց, նկատի ունենալով, որ մաշվածքի հաշվարկը ակտիվի արժեքի դուրսգրումն է շահագործման տարիների վրա, արժեքի մեծացումը անխուսափելիորեն ավելացնում է նաև տարեկան մաշվածքի գումարը, որը միանգամայն ընկալելի է:

Մաշվածքի հաշվարկման ժամանակ ոչ գծային մեթոդների կիրառման արտասահմանյան փորձը (մասնավորապես ԱՄՆ-ում) նախատեսում է պակասեցվող մնացորդի որոշման բազմակիություն: Կրկնակի պակասեցման պրակտիկայի ժամանակ տարեկան մաշվածքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$Մ = Ս_ա * N * 2$$

որտեղ - $Ս_ա$ - ոչ ընթացիկ ակտիվի մնացորդային արժեքն է տարեսկզբին
N - մաշվածքի նորման է շահագործման ամբողջ տևողության ընթացքում
2 - հաշվարկման բազմակիությունն է:

Մաշվածքի ոչ գծային հաշվարկի օրինակ (ըստ նախորդ օրինակի սկզբնական արժեքը 24 մլն. դրամ է, ծառայության տևողությունը 5 տարի)

Մնացորդային արժեքը ժամանակաշրջանի սկզբին հազ.դրամ	Մաշվածքի գումարը, հազ.դրամ	Մնացորդային արժեքը ժամանակաշրջանի վերջին հազ.դրամ
24000	24000 * 20% *2 = 9600	14400
14400	14400 * 20% *2 =5760	8640
8640	8640 * 20% *2= 3456	5184
5114	5114 * 20% *2 = 2074	3110
3110	3110 * 20% *2 = 1244	1866

Այս մոտեցման պայմաններում հաշվարկի ոչ գծայնությունը զգալիորեն բարձրանում է, իսկ մնացորդային արժեքը (որպես մաշվածք չհաշվարկված) կրճատվում է մեծ չափերով 7864 հազ.դրամից իջնելով 1866 հազ.դրամի (32.7 տոկոսից 7.7 տոկոսի)

Մաշվածքի հաշվապահական հաշվառման կանոնները, նրա հաշվարկման մեթոդի հետ կապված, փոփոխության չեն ենթարկվում: Ոչ ընթացիկ ակտիվների

ձեռքբերումը ձևակերպվում է՝ դեբետ՝ ոչ ընթացիկ ակտիվների արժեք, կրեդիտ՝ դրամարկղ: Յուրաքանչյուր տարվա վերջում մաշվածքը կարգավորվում է՝

Դեբետ՝ հաշվետվություն շահույթի և վնասի մասին՝ մաշվածք,
Կրեդիտ՝ ոչ ընթացիկ ակտիվներ՝ կուտակված մաշվածք:

Ակտիվի սկզբնական արժեքը, առանց մաշվածքի, պետք է գրանցվի ամեն տարվա հաշվեկշռում: Մաշվածքի դեպքում աղբյուրի արժեքն ամեն տարի պակասեցվում է տարվա կուտակված մաշվածքի չափով: Ամեն տարի շահույթի և վնասի հաշվետվության մեջ ծախսի տեսքով արտացոլվում է տարեկան ամորտիզացիայի գումարը և, դրանով իսկ, ոչ ընթացիկ ակտիվի արժեքը ամենօրյա ծախսի ձևով բաշխվում է ըստ շահագործման տարիների:

12.2. ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք իրենց էությամբ դրամական միջոցների այն ամբողջությունն են, որոնք ավանսավորվում են ոչ ընթացիկ ակտիվների մեջ և ձևավորում կազմակերպության հիմնական կապիտալը:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության, կապիտալ ներդրումները ՀՀ տարածքում կարող են ֆինանսավորվել հետևյալ աղբյուրներով՝

- սեփական ֆինանսական ռեսուրսներ և ներտնտեսական (շահույթ, կուտակված մաշվածք, պահուստներ, սեփական կապիտալ շինարարության շահույթ), ապահովագրական փոխհատուցումներ և այլ ներքին աղբյուրներ,
- փոխառու ֆինանսական միջոցներ (բանկային ու բյուջետային վարկեր, փոխառություններ և այլն),
- ներգրավված ֆինանսական միջոցներ (արժեթղթերի վաճառքից մուտքեր, բաժնեմասային և այլ մուծումներ, քաղաքացիների, աշխատանքային կոլեկտիվի անդամների և իրավաբանական անձանց այլ վճարումներ),
- պետական բյուջեից ինվեստիցիոն հատկացումներ, արտաբյուջետային ֆոնդերից մասհանումներ,
- օտարերկրյա ներդրողների միջոցներ:

Ինվեստիցիաների և դրանց կարևորագույն մասը կազմող կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են նաև այլ հատկանիշներից ելնելով: Դրանց ամբողջությունը կարելի է բաժանել ներքին և արտաքին, վերադարձվող և անվերադարձ աղբյուրների: Իսկ ձևավորման առանձնահատկություններից ելնելով՝ հնարավոր է բաժանել 3 խմբի՝ ներքին ռեսուրսներ, հիմնական գործունեությունից բխող աղբյուրներ և արտաքին աղբյուրների հաշվին ներգրավվող միջոցներ: Դասակարգման վերջին մոտեցումը հատկապես վերաբերում է գործող այն կազմակերպություններին, որոնք իրականացնում են տեխնիկական վերազինման, վերակառուցման և ընդլայնման միջոցառումներ՝

տնտեսավարական եղանակով՝ սեփական կապիտալ շինարարության կազմակերպման միջոցով:

Սեփական ֆինանսական ռեսուրսների բավարարությունը հնարավոր է դարձնում ինքնաֆինանսավորման ապահովումը: Աղբյուրների այս խմբի մեջ գլխավոր տեղը պատկանում է գործառնական շահույթին: Ինչպես արդեն նշվել է, շահույթը զուտ եկամտի որոշակի մասի դրամական արտահայտությունն է: Բյուջեի հանդեպ պարտավորությունները և այլ պարտադիր վճարումները կատարելուց հետո կազմակերպության տնօրինությունը մնացած զուտ շահույթը կարող է ծախսել իր նախընտրած ուղղություններով, այդ թվում ինվեստիցիոն նպատակով՝ կուտակման և նույնպիսի այլ ֆոնդեր ստեղծելու ճանապարհով:

Գործնականում շահույթից կապիտալ ներդրումներին կատարվող հատկացումների գումարի մեծությունը, նախ և առաջ, պայմանավորված է զուտ շահույթի ծավալով, առաջնահերթություն ունեցող այլ պահանջների առկայությամբ, ուրիշ մինչև շահույթը ներգրավելը, աղբյուրների առկայությամբ, ինչպես նաև փոխատվական հարաբերությունների պայմաններով (ֆինանսական լծակի դիֆե-ռենցիալ, ֆինանսական լծակի դիրք, վարկի հաշվարկային միջին տոկոսադրույք, տնտեսական շահութաբերության մակարդակ):

Ինվեստիցիաների երկրորդ խոշորագույն աղբյուրը ամորտիզացիոն հատկացումներն են (կուտակված մաշվածքը), ինչը, ՀՀՀՀՍ կիրարկման պայմաններում, իր բնույթով գրեթե նույնացվում է շահույթի հետ: Ձեռնարկություններում մաշվածքի արժեքի կուտակումը տեղի է ունենում պարբերաբար (ամեն ամիս), այն դեպքում, երբ հիմնական ֆոնդերը արտադրական յուրաքանչյուր պարբերաշրջանից հետո նյութական փոխհատուցում չեն պահանջում: Արդյունքում ձևավորվում են ազատ դրամական միջոցներ, և արտադրության ծախքերի մեջ ներառված մաշվածքը փոխհատուցվում է իրացումից ստացված հասույթից: Տրամաբանական է այդ ազատ դրամական միջոցները հիմնական կապիտալի վերարտադրությանն ուղղելը:

Հայաստանի Հանրապետությունում, ըստ էության, իրականացվում է ոչ ընթացիկ ակտիվների արագացված ամորտիզացիա: Ընդհանրապես, արագացված ամորտիզացիան, որպես տնտեսական խթանման միջոց, իրականացվում է 2 եղանակով:

1-ին դեպքում արհեստականորեն կրճատվում են ակտիվների շահագործման ժամկետները, և համապատասխանորեն բարձրանում է տարեկան նորման: Արդյունքում, այդ ձևով հաշվարկված ամորտիզացիան օգտագործվում է ֆիզիկապես ու բարոյապես հնացած տեխնիկան նորով փոխարինելու նպատակով: Ամորտիզացիոն մեծ հատկացումների հետևանքով կազմակերպություններում պակասում է հարկվող շահույթի, հետևաբար՝ շահութահարկի գումարը:

Արագացված ամորտիզացիայի երկրորդ եղանակը համատարած կիրառություն չունի: Առանց շահագործման ժամկետների՝ պետականորեն սահմանված նորմատիվերը կրճատելու, առանձին ճյուղերի կազմակերպություններին թույլ է տրվում մի քանի տարիների ընթացքում ամորտիզացիոն հատկացումներ կատարել բարձրացված չափերով՝ հետագա տարիներին դրանք պակասեցնելու պայմանով:

Կապիտալ ներդրումների և, ընդհանրապես, ինվեստիցիոն գործունեության համար ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում կարևորագույն աղբյուր է արժեթղթերի թողարկումը: Վերջինս նպաստում է կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց տրված միջոցները խոշոր կապիտալ ներդրումների նպատակով կենտրոնացնելուն՝ դրանով իսկ թեթևացնելով բյուջետային, գերատեսչական և ֆինանսավորման այլ աղբյուրների հոգսը:

Արժեթղթերի միջոցով կապիտալ ներդրումների համար կարող են հավաքագրվել նաև բնակչության՝ ապրանքային ծածկույթ չունեցող միջոցները: Միաժամանակ հարկ է նշել, որ ինվեստիցիաների ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում վերջին տարիներին նկատելիորեն նվազել է բանկային երկարատև վարկերի բաժինը, ինչը վարկի հաշվարկային դրույքի բավականաչափ բարձր լինելու և վարկավորման մեխանիզմի բարդության հետևանք է: Այդ պատճառով էլ կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների մեջ կարևոր դեր է ձեռք բերում արժեթղթերի թողարկումը:

Արժեթուղթը փաստաթուղթ է, որը հաստատում է դրա տիրոջ սեփականատիրական իրավունքը համապատասխան կազմակերպության գույքի, դրամական միջոցների նկատմամբ: Արժեթղթերը իրավունք են տալիս եկամուտ ստանալ շահաբաժինների ձևով, ինչպես նաև ստեղծում են դրամական և այլ իրավունքները ուրիշ անձանց փոխանցելու հնարավորություն: Ֆինանսական պրակտիկայում արժեթղթերի շարքն են դասվում միայն նրանք, որոնք կարող են հանդիսանալ առքուվաճառքի առարկա և համաչափ կամ միանվագ եկամտի ստացման աղբյուր: Կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրների համար ամենակարևոր արժեթղթի տեսակը բաժնետոմսն է: Դա այնպիսի արժեթուղթ է, որը ձեռք բերողին (տնօրինողին) իրավունք է տալիս մասնակցելու բաժնետիրական ընկերության աշխատանքներին, նրա շահույթին (եկամուտներին), լուծարվելու դեպքում՝ նաև մնացած գույքի բաշխմանը:

Կազմակերպությունների ակտիվների, հետևաբար նաև կապիտալ ներդրումների ձևավորման աղբյուրների կազմում չափազանց մեծ է բանկային վարկի դերը: Հայտնի է, որ բանկային վարկը արտահայտում է փոխառուի և փոխատուի միջև փոխհատուցման և վերադարձելիության սկզբունքով իրականացվող դրամական հարաբերությունները, որտեղ կարևոր դեր ունի վարկային տոկոսը: Սովորաբար վարկը ներգրավվում է այն բնագավառներում, որտեղ ապահովվում է արագ արդյունք՝ շահույթի և եկամտի ստացում, ինչը հատուկ է Հայաստանի Հանրապետության ժամանակակից պայմաններին: Պրակտիկան ցույց է տալիս, որ այն ձեռնարկությունների համար, որոնք հնարավորություն ունեն ընդլայնելու պահանջարկ ունեցող արտադրանքի թողարկումը, վարկի ներգրավումն ավելի ձեռնտու է, քան արժեթղթերի թողարկումը:

Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ՝ բանկային վարկի օբյեկտները տարակարգված չեն. այդպիսիք կարող են լինել գործունեության հետ կապված ամենատարբեր պահանջները: Իրավաբանական ու ֆիզիկական անձանց կապիտալ ներդրումների առնչությամբ, վարկի օբյեկտ կարող են ծառայել հետևյալ ծախսերը՝

- արտադրական ու ոչ արտադրական օբյեկտների կառուցումը, ընդլայնումը, վերակառուցումը և տեխնիկական վերազինումը,

- շարժական ու անշարժ գույքի՝ մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների, շենքերի, կառույցների ձեռքբերումը,
- համատեղ կազմակերպությունների ստեղծումը,
- գիտատեխնիկական արդյունքի, անհատական արժեքների և սեփականության այլ օբյեկտների ստեղծումը և այլն:

Բանկի ու փոխառուի միջև վարկային հարաբերությունների կարգավորման գլխավոր փաստաթուղթը վարկային պայմանագիրն է: Որպես կանոն, այն ներառում է հետևյալ պայմանները՝ տրվող վարկի գումարը, դրա օգտագործման և վերադարձման կարգն ու ժամկետները, վարկային դրույքը, պարտավորության ապահովման ձևը, բանկին ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Վերոհիշյալ նպատակների համար վարկի հատկացումը իրականացվում է կազմակերպության կողմից այնպիսի փաստաթղթերի ներկայացման դեպքում, որոնք հաստատում են նրա վարկունակությունը և միջոցառման վարկավորման հնարավորությունը: Ըստ հանրապետության առևտրային բանկերի համակարգում ձևավորված մեխանիզմի, այդ ցանկը պարտադիր ընդգրկում է՝
- կազմակերպության ստեղծման կանոնադրությունը,
- կազմակերպության հաշվապահական հաշվեկշիռը վերջին հաշվետու ժամկետի դրությամբ. հարկային տեսչության կողմից հաստատված,
- միջոցառման տեխնիկատնտեսական հիմնավորումը (արդյունավետություն, ծախսերի փոխհատուցման հաշվարկներ),
- կազմակերպության ֆինանսական դրությունը և վարկունակությունը հաստատող այլ փաստաթղթեր:

Տնտեսավարման պրակտիկայում սովորաբար վարկի ներգրավումը դիտվում է որպես կապիտալ ներդրումների ֆինանսավորման նախահաշվի հաշվեկշռող աղբյուր: Դրանից բխում է, որ կարճաժամկետ զարգացման պլանով նախատեսված կապիտալ շինարարության ընդհանուր նախահաշվային արժեքին համապատասխան աղբյուրների ծավալը նախատեսելիս առաջնահերթ հաշվի են առնվում ներքին ռեսուրսները, հիմնական գործունեության հետ կապված աղբյուրները, ներքին այլ ապակենտրոնացված ռեսուրսները, իսկ վարկի նկատմամբ պահանջը որոշվում է որպես նախահաշվային արժեքի և թվարկված աղբյուրների ընդհանուր գումարի տարբերություն:

Ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ են միջոցների ներգրավման նոր մեթոդներն ու գործիքները: Ոչ ընթացիկ ակտիվների մեջ ինվեստիցիայի ամենաարդյունավետ մեթոդներից մեկը Հայաստանի Հանրապետությունում առայժմ լայն տարածում չստացած լիզինգն է: Լիզինգը մեքենաների, սարքավորումների, տրանսպորտային միջոցների, նաև արտադրական նշանակության կառույցների երկարաժամկետ վարձակալությունն է: Լիզինգային բոլոր գործարքները կարելի է բաժանել երկու տիպի՝ օպերատիվ լիզինգ և ֆինանսական լիզինգ, երկուսն էլ լրիվ ինքնափոխհատուցումով:

Օպերատիվ լիզինգը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով՝ մասնավորապես, վարձատուն վարձակալությամբ տրված ոչ ընթացիկ ակտիվների փոխհատուցելիությունը չի կապում միայն մեկ վարձակալի հետ, ժամկետը լրիվությամբ չի ընդգրկում գույքի ֆիզիկական մաշվածքի տևողությունը, գույքի փչանալու կամ կորստի ռիսկը նա է կրում, ժամկետը լրանալուց հետո

վերադարձվում է, վաճառվում կամ սեփականատիրոջ կողմից տրվում է ուրիշ վարձակալի:

Ֆինանսական լիզինգը նախատեսում է վարձակալության ամբողջ տևողության ընթացքում կայուն մեծության վարձավճարի գանձում այնպիսի չափերով, որն ապահովի դրանց լիակատար ամորտիզացիա և հաստատագրված լիզինգային շահույթ: Ֆինանսական լիզինգը ունի մի քանի տարատեսակներ՝ լիզինգ սպասարկումով, լեֆերջ-լիզինգ, ծրարով լիզինգ:

Առաջին դեպքն ուղեկցվում է վարձակալի կողմից սարքավորումների սպասարկման ու պահպանման որոշակի ծախսումների պարտավորություններով: Ծրարով լիզինգը տարբերվում է նրանով, որ շենքերը և կառույցները տրվում են վարկով, իսկ սարքավորումները՝ վարձակալական պայմանագրով:

Գիտելիքների ստուգման հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է հիմնական կապիտալի բովանդակությունը, ի՞նչ դեր է կատարում այն բիզնեսի իրականցման գործում:
2. Որո՞նք են հիմնական կապիտալի նյութական կրողները, ցույց տալ դրանց կազմը և կառուցվածքը:
3. Ինչպե՞ս է կատրավում ոչ ընթացիկ ակտիվների գնահատումը, հաշվառումը և մաշվածքի հաշվարկը:
4. Որո՞նք են ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի հաշվարկման ժամանակակից եղանակները:
5. Ի՞նչ է նշանակում ինվեստիցիա: Որո՞նք են կապիտալ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները: